


4346

83

2-44







20 OCT 2009

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. ԳԱԼՍՆԱՆԻ

ԳԵՐՀԱՐԴ ՀԱՌՈՊՏՄԱՆ

# ԿԱՌԱՊԱՆ ՀԵՆՇԷԼ

ԴՐԱՄԱ ՀԻՆԳ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

Գեղամեհեկն բնագրից քարգմանեց

ԼԵՒՈՆ ԲԱԲԱՏԵԱՆ

Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարան Տ. Մ. Ռոսինեանցի

1907



11. 06. 1913

28 JUN 2005

$$\begin{array}{r} 83 \\ \hline 2-44 \end{array}$$

ՀՐԱՏԱՐԱԿ ՈՒԹԻՒՆ Գ. ԳԱԼՍՏԵԱՆԻ

ԳԵՐՀԱՐԴ ՀԱՈՒՊՏՄԱՆ

229

ԿԱՌԱՊԱՆ ՀԵՆՇԷԼ

ԴՐԱՄԱ ՀԻՆԳ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

$$\begin{array}{r} 5080 \\ \hline 2016 \end{array}$$

ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ԲՆԱԳՐԻԿ ԲԱՐԳՄԱՆԵՅ  
ԼԵՒՈՆ ԲԱԲԱՅԵԱՆ

Թ Ի Յ Լ Ի Ս  
Տպարան Տ. Մ. Ռոտինեանցի  
1907





11.06.2013

5 JUN 2003

4396

## ԿԱՌԱՊԱՆ ՀԵՆՇԷԼ

ԴՐԱՄԱ ՀԻՆԳ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԿԱՌԱՊԱՆ ՀԵՆՇԷԼ.

ՏԻԿԻՆ ՀԵՆՇԷԼ.

ՀԱՆՆԷ ՇԷԼ (Յետոյ Հենշելի Կինը)

ԲԵՐԹԱ.

ՎԱԼՏԷՐ, Զիպվաճառ.

ԶԻԲԷՆՀԱՐ.

ԿԱՐԼՈՍԻԿ.

ՎԵՐՄԵԼՍԿԻՐԽ.

ՖՐԱՆՑԻՍԿԱ ՎԵՐՄԵԼՍԿԻՐԽ.

ՀԱՌԻՖԷ.

ՖՐԱՆՑ.

ԺՕՐԺ.

ՖԱԲԻԳ.

ՀԻԼԴԵԲՐԱՆԴ, Վարպետ.

ԴՐՈՒՆԵՐՏ, Անասնաբոյժ.

ՀՐԴԵՀՄՇԷԶՆԵՐ.

Անցքը պատահում է 60-ական թուականներին Շլեզիական հանքային ջր-  
բերից մեկում, «Մոխրագոյն Կարապ» անունով հիւրանոցում:



## ԿԱՌԱՊԱՆ ՀԵՆՇԵԼ

ԳՐԱՄԱ, ՀԻՆԳ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

### ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Տեսարանը ներկայացնում է գիւղական մի սենեակ՝ «Մոխրագոյն Կարապ» հիւրանոցի մասնում: Չախակողմնան երկու բաւական բարձր պատուհանների միջով թափանցում է ձմեռնային վերջալոյսի գունաւոր լոյսը: Պատուհանների տակ դրուած է ուղղորկած դեղին փայտից շինած մի մահճակալ, որի վրայ պառկած է 36 տարեկան հիւանդ սիկին Հենցել: Մահճակալի կողքին դրուած է մի օրորոց, որի մէջ գտնուում է տիկին Հենշելի վեց ամսական աղջիկը: Երկրորդ մահճակալը գտնուում է յետեւի պատի տակ, որը միւս պատերի նման ներկուած է մոխրագոյն ներկով, իսկ սենեակի առաստաղը ներկւած է սև շերտերով: Դրանից առաջ գէպի աջ գտնուում է թուխ ճնախեցի վառարանը, որի մօտ նստարան է դրուած: Սենեակի ազատ անկիւնում դարւսուած է մանր կտրատուած վառելափայտերի կոյտ: Սենեակի աջ կողմում գտնուում է մի փոքրիկ դուռ, որ տանում է գէպի միւս սենեակը: Երիտասարդ և առողջ աղախին Հաննե Շէլլ սաստիկ զբաղուած է վառարանի մօտ: Նա հանել է իր փայտեայ կօշիկները և հագել է հաստ ու կապոյտ գուլպաներ: Հաննէն վառարանից հանում է մի երկաթեայ աման, որի մէջ ինչոր կերակուր է եփւում և նորից դնում է վառարանում: Նստարանի վերայ դրուած են գդալներ, խառնիչ, մաղ և մի մեծ կաւէ կուժ, որի նեղ բերանը փակւում է խցանով: Նստարանի տակ գտնուում է ջրի կուժը: Հաննէն իր հագստի փեշերը բարձրացը-

րել է և խրել իւր գօտու մէջ. նա հագել է մուգ մոխրագոյն շապիկ կարճ թևերով, որ ծածկում է նրա գօրեղ և ջրոտ ձեռքերը: Վառարանի շուրջը՝ վերեւից քառանկիւնի ձևով կապւած է մի պարան, որի վրայ չորացնելու համար կախել են երկար, այսպէս կոչուած որսորդական գուլպաներ, զանազան շորեր, կապերով կաշուէ անդրավարդիկ և մի զոյգ ջրի կոշիկներ: Սրանից գէպի աջ մի սնդուկ և մի պահարան, շէգիական հին և գոյնզգոյն իրերով: Բաց դռան ետեւի պատի վրայ երևում է մութ և լայն մասանի մուտքը, իսկ դրա հանդէպ մի ուրիշ դուռ բաղմնւում ապակիներով: Այդ դրան յետևում գտնուում է մի փայտէ սանդուխք, որ տանում է գէպի վերին յարկը: Սանդուղը միշտ լուսաւորուած է զազով, որի լոյսը թափանցում է ապակեայ դռով: Փետրուար ամսի կէսն է, իսկ դրսում փչում է կատաղի քամին: Կառապանի հասարակ լիվը հագած երիտասարդ Ֆրանցը, որ պատրաստւել է ճանապարհ ընկնելու, սենեակում գէս ու գէն է նայում:

ՖՐԱՆՑ. Հաննէ:

ՀԱՆՆԷ. Ի՞նչ է:

ՖՐԱՆՑ. Քնած է տիրուհին:

ՀԱՆՆԷ. Ի հարկէ, աղմուկ մի հանիր:

ՖՐԱՆՑ. Կարծեմ դուռը ծեծում են: Նա չէ զարթնում ..

Ես կառքով ցնում եմ Վալտերուրգ:

ՀԱՆՆԷ. Բայց ո՞վ է գնացողը:

ՖՐԱՆՑ. Տիրուհին, նորածնի համար ընծաներ գնելու:

ՀԱՆՆԷ. Ո՞ր նորածնի:

ՖՐԱՆՑ. Փոքրիկ Կարլոսի:

ՀԱՆՆԷ. Եւ նրանք էլ խիզճ ունին: Մի յիմար մանուկի համար ձիերը լծել և այսպիսի անտանելի եղանակին գէպի Վալտերուրգ քարշ գալ:

ՖՐԱՆՑ. Ոչինչ, ես մուշտակ ունիմ:

ՀԱՆՆԷ. Զիշտ որ մարդիկ չեն իմանում, թէ որտեղ չալտեն իրանց փոփերը, իսկ մենք նրանց համար ամենասուոր անասունների նման աշխատում ենք:



(Անասնաքոյժ Գրումներտը, որ մի փոքրահասակ մարդ է, սեւ, ոչխարի մուշտակով, երկար կօշիկներով, կամա-  
ցուկ երեւում է նախ ստենեալում, կարծես մի քան է փնտ-  
ռում: Նա իր ձեռքի մտրակով զարկում է դուռը, որպէս  
զի իւր գալը նկատեն):

ԳՐՈՒՆԵՐՏ. Դեռ ես չե՞ վերադարձել Վիլհելմ Հենշելը:

ՀԱՆՆԷ. Ի՞նչ էք ուզում:

ԳՐՈՒՆԵՐՏ. Նա կրտուած յովատակի համար եմ եկել:

ՀԱՆՆԷ. Հա, ուրեմն դուք Փրէյբուրգից եկող բժիշկն  
էք: Բայց Հենշելը այստեղ չէ: Նա բեռնով Փրէյբուրգ է  
գնացել. միթէ նրան չէք պատահել ճանապարհին:

ԳՐՈՒՆԵՐՏ. Ո՛ր ախոռումն է յովատակը:

ՀԱՆՆԷ. Մեծ և չէկ ձի է, ուղիտակ աստղը ճակատին:  
Կարծեմ այդ ձին տեղաւորել են այն ախոռում, որտեղ ճա-  
նապարհորդների ձիերն են կապում: (Փրանցին) Գնա ցոյց  
տուր բժշկին:

ՓՐԱՆՑ. Գնացէք ուղիղ բագով, դահլիճի մօտով, ճիշտ  
կառապանի սենեակի դիմացը, Հարցրէք Փրիդրիխին. նա  
ձեզ ցոյց կտայ: (Գրումներտը դուրս է գնում):

ՀԱՆՆԷ. Դու էլ գնա էլի:

ՓՐԱՆՑ. Դու չունիս մի բանի փենիկ:

ՀԱՆՆԷ. Ուզում ես կաշիս քեզ համար ծախեմ, ի՞նչ է:

ՓՐԱՆՑ. (Ետադրում է նրան). Հէնց այս բօպէիս կղըտ-  
նեմ:

ՀԱՆՆԷ. Թող, Փրանց: Տիրուհիս հենց այս բօպէիս  
կգարթնի (փող է որոնում): Մինչև փող չկորզես, չես  
հանգստանալ. քեզանից ազատելը շատ զժուար է: Ահա  
քեզ, վերցրու: (Նրա ձեռքում փող է դնում): Իսկ այժմ  
հայդա: (Լսում է զանգակի ձայնը):

ՓՐԱՆՑ. (Վախեցած) Պարոն: Յտեսութիւն: (Արագու-  
թեամբ դուրս է գնում):

ՏԻԿԻՆ ՀԵՆՁԷԼ. (Զարթնում է և թոյլ ձայնով կան-

չում): Աղջիկս, աղջիկս, չես լսում, ի՞նչ է, Հաննէ:

ՀԱՆՆԷ. (Կոպտութեամբ) Ի՞նչ է հարկաւոր:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ, Պատասխանիր երբ քեզ կանչում են:

ՀԱՆՆԷ. Պատասխանում եմ, էլի, ես հօ չեմ կարող  
լսել, երբ դուք ձեր քթի տակ մրթմրթում էք. չե՞ որ ես  
միայն երկու ականջ ունիմ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Կրկին սկսեցիր կոպտութիւնդ, աղջիկս:

ՀԱՆՆԷ. (Կտրուկ): Նա ինչով եմ մեղաւոր:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Միթէ լաւ բան է այդ: Միթէ կարելի  
է հիւանդ կնոջ հետ կոպիտ վարուել:

ՀԱՆՆԷ. Բայց ո՞վ է մեղանից սկսողը: Հէնց որ զարթ-  
նում էք, սկսում էք այս կամ այն բանի համար հակառա-  
կել. այս բանը այսպէս չէ, այն բանը այնպէս չէ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Որովհետեւ դու ինձ երբէք չես լսում:

ՀԱՆՆԷ. Այն ժամանակ, ուրեմն, ամեն ինչ դուք ինք-  
ներդ արէք. զիշեր ու ցերեկ աշխատում ենք և դուք կրկին  
ձեր ասածն էք ասում: Աւելի լաւ է չորերս հաւաքեմ և այստեղից  
հեռանամ: (Ծած է ձգում իր զգեստի փեշերը եւ փախչում):

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Աղջիկս, աղջիկս: Բաւական է: Ին-  
չո՞ւ ես վիրաւորում... Տէր Աստուած, Տէր Աստուած. ի՞նչ  
կլինի արդեօք, եթէ տղամարդիկ վերադառնան: 2Է որ նր-  
բանք ուտելու բան կուզեն: Հաննէ, Հաննէ: (Թուլութիւնից  
ընկնում է քարձի վրայ, ցածրածայն լալիս է օրորոցի քո-  
ղը դէպի իրան քաշելով եւ սկսում է կամաց օրորել: Ապա-  
կեայ դռնով դժուարութեամբ ներս է մտնում Կարլոսիկը:  
Նա ընթում է մի աման սուպ, երկիւղածութեամբ ու  
զգուշութեամբ մօտենում է հիւանդի անկողնին եւ ամանը  
դնում է փայտէ սեղանի վրայ):

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Այդ դու ես, Կարլոսիկ: Ի՞նչ ես բերել,  
հա:

ԿԱՐԼՈՍԻԿ. Սուպ: Մայրիկս բարեւում է և առողջութիւն  
է ցանկանում, Տիկին Հենշել:



ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Դու ամենքից լաւ ես, մանուկս... հաւի  
մտով սուպ: Այ քեզ լաւ բան: Մայրիկիդ շնորհակալու-  
թիւնս յայտնիր, ասա որ շատ շնորհակալ եմ: Լսեցիր: Զմո-  
ռանաս հա... գիտես ի՞նչ եմ ասում, Գարլոսիկ: Մի ծառա-  
յութիւն արա ինձ, սիրելիս. վերցրու այն լաթի կտորը, ա՛յ,  
այնտեղ ընկած է... բարձրացիր նստարանի վրայ և վառա-  
բանին մօտցրու չուգունը, հասկացար: Հաննէն դուրս է գնա-  
ցել... նա չափազանց հեռացրել է այդ չուգունը:

ԿԱՐԼՈՍԻԿ. (Լաթի կտորը գտնելով իսկոյն ըստ ծրա-  
նում է նստարանի վրայ եւ վառարանի ներսը նայելով  
հարցնում է). Սե՞ր թէ կապոյտը, տիկին Հենշէլ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Կապոյտի մէջ ի՞նչ կայ:

ԿԱՐԼՈՍԻԿ. Թթու կազամբ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. (Գրգռւած) Հանիր խնդրեմ չուտով, ապա  
թէ ոչ կերակուրը չփոթ կգառնայ... Ա՛խ, Հաննէ, Հան-  
նէ՛...

ԿԱՐԼՈՍԻԿ. (Գերակրի ամանը առաջ քաշելով): Լաւ  
է այսպէս:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Այո, թող այդպէս մնայ: Եկ ինձ մօտ  
թանկագինս, քեզ եմ ընծայում այս մտրակի պարանը: (Հու-  
սամուտից վերցնում է պարանը եւ նրան է տալիս): Ինչ-  
պէս է մայրիկդ: Առնող է:

ԿԱՐԼՈՍԻԿ. Ոչինչ, լաւ է: Նա գնացել է Վալտերուրգ  
ձնեկեանս առթիւ ինձ համար ընծաներ գնելու:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Իսկ ես լաւ չեմ, մանուկս, հաւանօրէն  
ես չուտով կմեռնեմ:

ԿԱՐԼՈՍԻԿ. Ի՞նչ էր ասում, տիկին Հենշէլ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Այո, այո, հաւատայ ինձ ես մեռնում  
եմ: Այդպէս էլ ասա մայրիկիդ:

ԿԱՐԼՈՍԻԿ. Ես էլ բաշլըղի մի գլխարկ կստանամ, տի-  
կին Հենշէլ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Այո, այո, հաւատա՛ ինձ, ես կմեռնեմ:

Եկ այստեղ: Սա... լռիր: Լսում ես, ինչպէս սիրտս զարկում  
է, լսում ես: Լսում ես ինչպէս է բաբախում այս փթած  
փայտը:

ԿԱՐԼՈՍԻԿ. (որի ձեռքերից դողալով ընկել է տիկին  
Հենշէլ): Տիկին Հենշէլ, ես վախենում եմ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ոչինչ, ոչինչ: Մենք բոլորս էլ պէտք  
է մեռնենք: Լսում ես, ինչպէս է զարկում, հա՛: Լսում ես:  
Ի՞նչ է այս: Դա մահուան որթն է... որ զարկում է (ընկ-  
նում է քարծի վրայ): Մէկ, երկու... Ա՛խ, Հաննէ, Հաննէ:

ԿԱՐԼՈՍԻԿ. (Ազատելով իր ձեռքը, երկիւղից դէպի  
դուռն է գնում: Երբ նա ընկնում է ապակեայ դռան հնչակը,  
նրան պաշարում է երկիւղը. նա այնպիսի արագութեամբ  
բանում է դուռը եւ իր յետեւից այնպէս սաստիկ զարկում,  
որ դռանից փշրւում են ապակիները: Բազում լսում է մտ-  
րակի ծայն: Այդ ծայնից տիկին Հենշէլը անկողնից իս-  
կոյն ըստ ծրանում է):

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Հայրիկը եկել է:

ՀԵՆՁԷԼ. (Նախասննեակում, դեռ նա չէ երեւում):  
Ի՞նչ անենք ձիու հետ, բժիշկ: (Երեւում է դռան մէջ ա-  
նասնաշոյժ Գրուներտի հետ):

ԳՐՈՒՆԵՐՏ. Այդ ձին չի էլ թողնում իրան մօտենալ:  
Ստիպուած ենք նրա քիթը սնդել:

ՀԵՆՁԷԼ. (Պարթեւ հասակով եւ մօտ 45 տարեկան  
մի տղամարդ. նա ունի մուշտակէ գլխարկ, հագել է ոչ-  
խարի կաշուց վերնագգեստ, քարձր կօշիկներ եւ կա-  
նաչ որսորդական գուլպաներ. ձեռքին ընկել է մըտ-  
րակ եւ վառած լապտեր): Ես բոլորովին չեմ հասկանում  
թէ ի՞նչ է պատահել մեր այս անասունի հետ: Երեկ եկայ  
տուն. Ադուէսի փոսը քարածուխ էի տարել թափելու, ձիուն  
արձակում եմ կառքից, ամենում ախոռը, յանկարծ նա ընկ-  
նում է և սկսում է գէս ու գէս զարնել: (Դնում է իր  
մտրակը անկիւնը եւ գլխարկը կախում մեխից):



(Ներսէս է մտնում Հաննէն եւ վերսկսում է իր աշխատանքը, ըստ երեւոյթին՝ նա դեռ քարկացած է):

ՀԵՆՁԷԼ. Կրակը վառիր:

ՀԱՆՆԷ. Մէկը միւսի ետեւից:

ՀԵՆՁԷԼ. (Հանգցնում է լապտերը եւ պատից կանխում): Աստուած գիտէ միայն, թէ այստեղ ի՞նչ է կատարւում: Այնտեղ կինս է հիւանդացել, իսկ այստեղ ձիւ է ընկնում: Կարծես մէկը ինձ վրայ է թափել աշխարհիս ամբողջ թշուառութիւնը: Այդ ձին ես գնել եմ Ծննդին, Վալտէր Գօթֆրիդից. երկու շաբաթ էլ չէ անցել, իսկ նա արդէն կալում է: Ես նրան չեմ մոռանալ. երկու հարիւր թալէր եմ տւել:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ի՞նչ է... դրսում անձրև է գալիս:

ՀԵՆՁԷԼ. (Անցողակի) Այո, մայրիկ, այո, անձրև է գալիս. մարդ իր հարազատ փեսայից էլ խաբո՞ւի: (Նստում է վառարանի մօտ գտնուող նստարանի վրայ: Հաննէն վառում է ճարպէ մօմը եւ թիթեղեայ մոմակայը դնում է սեղանի վրայ):

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Դու էլ արդէն շատ բարի ես, այ մարդ: Ամենքին հաւատում ես:

ԴՐՈՒՆԵՐՏ. (Նստում է սեղանի մօտ եւ դեղատոմս է գրում): Ահա ես դեղ կգրեմ և այդ բերել կտար դեղավաճառանոցից:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Իսկ եթէ աղէս ձին էլ սատկի... բայց Աստուած չանէ:

ՀԵՆՁԷԼ. (Ոտները մեկնելով դէպի Հաննէն). Հանիր կօշիկներս... Քամին Փրէյբուրգից մինչև այստեղ անդադար փչում էր... Նիտերգօրֆում արդէն պատմում էին, որ քամին եկեղեցու տանիքը քանդել է: (Հաննէն). Ի՞նչ ես ոտներս ծռում: Ե՞րբ ես վերջացնելու:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Տէր Աստուած, այս աղջիկը կօշիկ էլ չի կարողանում հանել:

(Հաննէն ուժով հանում է մի կօշիկը, դնում է մի կողմը եւ սկսում նրկորորը հանել):

ՀԵՆՁԷԼ. Հանգիստ եղիր մայրիկ, դու ինքդ էլ չես կարող հանել:

ՀԱՆՆԷ. (Հանում է միւս կօշիկը եւ քարկացած դառնում է Հենշէլին): Իսկ ինձ համար Կրամստանից գոգնոց էք բերել:

ՀԵՆՁԷԼ. Մարդ կարող է այդքան բան գլխում պահել և յիշել: Փառք տուր Աստծուն. եթէ ես իմ ունեցած չունեցածս հաւաքեմ և տանեմ կայարան. էլ սրտեղից կարող եմ ես կանանց գոգնոցի մասին մտածել:

ԴՐՈՒՆԵՐՏ. Այո. դուք այդ բանի մէջ վարպետ չէք:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ա՛յդ էր պակաս:

ՀԵՆՁԷԼ. (Փայտէ կօշիկները հազնելով կանգնում եւ ասում է Հաննէնին): Դէ՛հ, իսկոյն ուտելու մի քիչ բան տուր: Այսօր մենք դեռ պէտք է դարբնի մօտ երթանք:

ԴՐՈՒՆԵՐՏ. (Տեղից քարճրանում, դեղատոմսը դնում է սեղանի վրայ եւ գրականը դնելով իր տետրակը, պատրաստում է գնալու): Այս դեղատոմսը չուտով տարէք դեղավաճառանոց, իսկ վաղը առաւօտեան ես կրկին այստեղ կգամ: (Հենշէլը նստում է սեղանի մօտ):

ՀԱՌԻՖԷ. (Կամաց ներս է մտնում. նա հագել է փայտէ կօշիկներ եւ կաշւէ անդրավարդիկ եւ ծեռքին նոյնպէս վառած լապտեր ունի): Ի՞նչ խայտառակ եղանակ է դրսում:

ՀԵՆՁԷԼ. Ի՞նչ է պատահել ախոռում:

ՀԱՌԻՖԷ. Մխիթարական ոչինչ չկայ: (Հանգցնում է լապտերը եւ կանխում է Հենշէլի լապտերի մօտ):

ԴՐՈՒՆԵՐՏ. Դէ՛հ, բարի գիշեր: Տեսնեմք վաղը ի՞նչ կլինի: 2Է որ մենք բժիշկներս էլ մարդիկ ենք:

ՀԵՆՁԷԼ. Իհարկէ, մենք այդ հասկանում ենք: Բարի



գիշեր: Զգոյշ կացէք, քամին ձեզ չփնասի: (Գրողներտը դուրս է գնում): Ինչպէս ես զգում քեզ այժմ մայրիկ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ա՛խ, ես կրկին բարկացած եմ:

ՀԵՆՁԷԼ. Ով է քեզ բարկացրել: (Հառնփէն նստում է սեղանի մօտ):

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ախր ինչպէս չբարկանամ: Ես ոչինչ չեմ կարող ոչ անել և ոչ էլ պատրաստել: (Հաննէն սեղանի վրայ է դնում մի ափսէ մսեղէն կերակուր եւ մի ափսէ ըուսեղէն, սեղանի տակից հանում է պատառաքաղները և դասաւորում սեղանի վրայ):

ՀԵՆՁԷԼ. Դրա համար, փառք Աստծոյ, Հաննէն այստեղ է:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ի՛նչ Հաննէն: Նա ոչ մի բանի մասին էլ չի մտածում:

ՀԵՆՁԷԼ. Ուտելու բան ունինք այնպէս չէ՝—Ի՛նչ լաւ է. այդտեղ բաւական է... Տես, եթէ դու ժամանակից առաջ վերկացած չլինէիր, դու այսօր կարող էիր և պարել:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Այդ էր պակաս, Տէր Աստուած: Ինչպէս չէ: (Հաննէն այդ ժամանակ երեք պնակում մի մի կտոր խոզի միս է դնում, մօտեցնում է ակոռը դէպի իրեն եւ նստում է սեղանի մօտ):

ՀԱՌՒՓԷ. Զուտով գարին էլ կվերջանայ:

ՀԵՆՁԷԼ. Երէկ ես դրանից երեսուն չուալ գնել եմ: Իսկ շաբաթ օրն էլ մի կառք խոտ կբերեն: Անասունների կերակուրը թանկանում է ու թանկանում:

ՀԱՌՒՓԷ. Աշխատող անասունն էլ ուտել է ցանկանում:

ՀԵՆՁԷԼ. Իսկ նրանք կարծում են, որ անասունը օգուտ է կերակրում և ցանկանում են փոխադրութեան վարձը կրթհատել:

ՀԱՌՒՓԷ. Դրա մասին նա ինձ էլ է ասել:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Հանքային ջրերի կառավարիչը:

ՀԵՆՁԷԼ. Իհարկ է, էլ ուրիշ ով պէտք է լինի: Բայց նա այս անգամ ոչինչ չի կարող անել:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ո՛չ, սիրելիս, այժմ այլևս այն չէ: Ի՛նչ կլինի մեր գրութիւնը այդպիսի ծանր ժամանակներում:

ՀԵՆՁԷԼ. Այստեղ եկաւ շօստէ ճանապարհների վերակայուն և հրամայեց վաղը ձիերին ուղարկել մեծ ձիարշաւի համար: (Սանդուխքով, ապակեայ դռան ետեւից զալիս է Զիբէնհարը. նա երեսուն տարեկան մի տղամարդ է, քառական խնամքով զարդարուած. հագել է սեւ մահուդէ բլուզ, սպիտակ ժիլետ եւ անգղիական քացադն անդրաւարտիկ: Տարազը 60 թուականի է: Նրա գլխի արդէն սպիտակած եւ նոսր մազերը հարթ ուսնրած են, քայքայեց խիտ եւ շանտակազոյն են: Զիբէնհարը դրել է ոսկէ ակնոցներ եւ եթէ ցանկանում է որ եւ է քան աւելի լաւ դիտել, այն ժամանակ ակնոցների փոխարէն պէնսնէ է զործածում. նա մի ինտիլիգենտ մարդու տիպ է ներկայացնում):

ԶԻԲԷՆՀԱՐ. (Մօտենում է սենեակի քաց դռան. նա աջ ձեռքով բռնել է մի թիթեղիայ մոմակալ, չվառած մոմներով եւ քանալիների մի կապոց. ծախ ձեռքով աչքերը փակելով լոյսից, նայում է սենեակի ներսը): Հէնչէլը արդէն այստեղ է:

ՀԵՆՁԷԼ. Այո, այո, պարոն Զիբէնհար:

ԶԻԲԷՆՀԱՐ. Ա՛յ, դուք նմր էք ճաշում: Ես մի քիչ դործ ունիմ մառանում: Մենք յետոյ էլ կարող ենք դորա մասին խօսել:

ՀԵՆՁԷԼ. Ո՛չ, ոչ: Խնդրեմ: Ես արդէն վերջացրել եմ:

ԶԻԲԷՆՀԱՐ. Ուրեմն աւելի լաւ է վերել գնանք: (Ներս է մտնում եւ վառում է իր ձեռքի մոմով սեղանի վրայ գտնուող մոմը): Ես ցանկանում եմ միայն մօմը վառել: Իմ գրասենեակում մեզ ոչ ոք չի խանգարիլ...



Ինչպէս է ձեր առողջութիւնը, տիկին Հենշէլ: Ինչպէս գուր եկաւ ձեզ հաւի մսով պատրաստած սուպը:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ինչ լաւ ասացիր, ես այդ բանը բոլորովին մոռացել էի:

ԶԻՔԷՆՀԱՐ. Ինչ էք ասում:

ՀԱՆՆԷ. (Նկատելով սպուրով ամսնը): Թիշտ որ ահա նա:

ՀԵՆՁԷԼ. Երևում է որ կին է: Նա ցանկանում է առողջանալ, բայց և միևնոյն ժամանակ մոռանում է ուտելը և խմելը: (Փողոցում սաստիկ քամի է փչում):

ԶԻՔԷՆՀԱՐ. Ասացէք խնրեմ, ինչ էք կարծում, կինս փնացել է Վալտերուրգ, բայց քամին հետզհետէ սաստկանում է... ես սկսում եմ մի տեսակ անհագստանալ... փտանդաւոր հօ չէ:

ՀԵՆՁԷԼ. Այստեղից քամին աւելի սարսափելի է երեւում, քան թէ նա իսկապէս է:

ԶԻՔԷՆՀԱՐ. Այո, ճիշտ է, բանը առաջուց չպէտք է գուշակել: Լսեցիք գուր թէ ինչպէս մի քիչ առաջ մի սաստիկ ձայն հնչեց: Գիտէք, քամին սեղանատան մի մեծ լուսամուտի ապակիները ջարդ ու փշուր արաւ: Մի խօսքով սարսափելի փոթորիկ է:

ՀԵՆՁԷԼ. Ա՛խ, տղամարդիկ, տղամարդիկ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Փողի կորուստ:

ԶԻՔԷՆՀԱՐ. Այո, իսկապէս նա էլ շատ հոգսեր ունի:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ինչ է նա բեզանից նորից ուզում, այ մարդ:

ՀԵՆՁԷԼ. Ինչ գիտեմ: Ահա իսկոյն կիմանամ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Հաւանօրէն նորից փող կխնդրի:

ՀԵՆՁԷԼ. Յիմար բաներ մի գուրս տալ:

ՀԱՆՆԷ. Եթէ նրանք փող չունին, ապա ինչու է նրա կինը չորս թալէրանոց գլխարկ ծածկում:

ՀԵՆՁԷԼ. Լռիր, երբ բեզանից բան չեն հարցը-

նում: Գուր քո գործիդ կաց և ոչ թէ քիթդ խառնիր ուրիշի գործերի մէջ... Մարդը տուն ունի, հարկաւոր է պահել, իսկ տարուայ մէջ նա ընդամենը ութ շաբաթ աշխատանք ունի և այն ժամանակ ինչ ուզի կարող է անել:

ՀԱՌԻՓԷ. Նա այդ տունը դեռ պէտք է շինէ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ահա հէնց այդ էլ նրան վնասել է: Նա իսկապէս այդ տունը չպէտք է շինէր:

ՀԵՆՁԷԼ. Ախր, պառանքերդ ինչ էք հասկանում է՛է: Նա պէտք է այդ տունը շինէր, ուրիշ կերպ չէր կարող... Ներկայումս մեզ մօտ եկողների թիւը հետզհետէ շատանում է, առաջներում դրանց կէտն էլ չկար: Առաջներում հանքային ջրերը այցելողների մօտ աւելի փող կար, իսկ այժմ մարդս ստիպուած է նրանց ամեն ինչ գրեթէ ձրիապէս տալ... Մի բաժակ էլ լցրու, ես կխմեմ:

ՀԱՌԻՓԷ. (Պատրաստում է տեղից ըարցրանալ եւ կամաց կամաց իր գրպանի դանակն է փակում): Նա ունի քառասուն սենեակ, երեք դահլիճ, իսկ նրանց մէջ միայն մկներ են խաղում: Ո՛րտեղից պէտք է նա դրանց կապալադրամը ձեռք բերի: (Տեղից ըարծրանում է):

ՖՐԱՆՅԻՍԿԱ ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻ. (Ներս է նայում. նա 11 տարեկան մի ուրախ եւ գեղեցիկ աղջիկ է, որի երկար ու թուխ մազերը արծակւած են, իսկ հագուստը մի քիչ տարօրինակ. նա հագել է կարճ, սպիտակ ներքնազգեստ, ըլուզ եւ երկար ու փայլուն շարֆ: Նրա զգեստի թեւերը մի քիչ կարճ են. պարանոցը կապել է գունաւոր ժապաւէնով, որից կախւած է ոսկեայ խաչ):

ՖՐԱՆՅԻՍԿԱ. (Աշխուժով): Պարոն Զիրէնհարը այս րոպէիս այստեղ էր: Լաւ ախորժակ եմ ցանկանում, պարոններ: Ես կամենում էի միայն հարցնել, թէ այստեղ չի եղել պարոն Զիրէնհարը:



ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. (Տհաճութեամբ): Չգիտեմ: Նա մեղ մօտ չի եղի:

ՖՐԱՆՅԻՍԿԱ. Ո՛չ: Իսկ ես կարծում էի... (Կողեւտաբար դնում է իր ոտը վառարանի մօտ գտնուող նստարանի վրայ եւ կապում է իր կօշիկի թելերը):

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Դուք յաւիտեան ձեռք չէք վերցնում ձեր պարոն Զիբէնհարից: Եւ ի՞նչ էք ուզում դուք նրանից:

ՖՐԱՆՅԻՍԿԱ. Ե՛ս: Ոչինչ: Նա սաղի լիարդ շատ է սիրում և մայրիկս էլ այսօր հէնց դա է պատրաստում, դրա համար էլ հայրիկս ինձ այժմ ուղարկել է նրա հետից... Գիտէ՞ք, պարոն Հենշէլ. եթէ դուք էլ կարողանայիք մեղ մօտ անցնել...

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ո՛չ, խնդրեմ հայրիկին հանգիստ թողնեմ: Բա՛ն առաց, Կարծես նա ժամանակ ունի թափառելու պանդոկներում:

ՖՐԱՆՅԻՍԿԱ. Հէնց այսօր էլ դարեջրի մի թարմ տակառ ենք բաց արել: (Հառաժեղ ժպտում է, իսկ Հաննէն քարճրաձայն ծիծաղում):

ՀԵՆՁԷԼ. Դու էլ, այ կին, աւելի լաւ կլինի քո մասին մտածես: Եթէ ես ցանկանամ մի բաժակ դարեջուր խմել, հաւատացիր որ ոչ ոքից դրա համար չեմ հարցնիլ:

ՖՐԱՆՅԻՍԿԱ. Ինչպէս է ձեր առողջութիւնը տիկին Հենշէլ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Այ, վաղը ես կիսաթաթւեմ շարֆով և կգնամ պարանի վրայ պարելու:

ՖՐԱՆՅԻՍԿԱ. Ես էլ ձեզ հետ կգամ: Օ՛հ, ես հրաշալի եմ խաղում: Ես ամեն բան կառքի վրայ եմ սովորում:

ՀԵՆՁԷԼ. Ահա թէ ի՞նչու համար են կառքի փայտերը կախ ընկել:

ՖՐԱՆՅԻՍԿԱ. Նայեցէ՛ք, ա՛յ այսպէս: Հարկաւոր է միայն հաւասարակշռութիւնը պահպանել: (Իբր թէ պարանի

վերայ պարու՛մ է, յետոյ հեռանում է դէպի դուռը): Դէպի աջ, դէպի ձախ: Au revoir. (Դուրս է գնում):

ՀԱՌՈՒՖԷ. (Ղեկընդիմ պատից լատտերը): Զուտով նա կտրաքուի, եթէ ոչ ոք նրա հետ չամուսնանայ: (Դուրս է գնում):

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Թող մի նրան ստիպեն, ինչպէս որ հարկաւոր է, աշխատել, այն ժամանակ նրա խելքը գլուխը կժողովի: Յոռութիւն:

ՀԱՆՆԷ. Նա էլ չի համարձակում վերելու երեւալ. տիրուհին նրան տանել չէ կարող:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Եւ լաւ էլ է: Ես էլ այդպէս կվարէի:

ՀԱՆՆԷ. Նա շան նման ընկել է իր տիրոջ հետից. նրանից ոչ մի օրինաւոր բան չի կարելի սպասել:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Իսկապէս Զիբէնհարը այդպիսի մարդկանց պէտք է դուրս վճռէր: Բաւական է այդ աղջիկներին հետ մի խայտառակութիւն պատահեց. ասե՛նք տղամարդիկ էլ հօ հէնց այդպիսի բաներ են ուզում:

ՀԵՆՁԷԼ. Ի՞նչ ես դուրս տալիս, ա՛յ կին:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Այո, հէնց այնտեղ՝ նրանց դարեջրատանը:

ՀԵՆՁԷԼ. Չէ՞ որ այն մարդիկն էլ մեղ նման ցանկանում են ապրել: Ի՞նչ է, նրանց փողոցը պէտք է ձգել, հա՛: Վերմեյսթրը վատ մարդ չէ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Բայց դրա փոխարէն նրա կիներ մի պառաւ կախարդուհի է:

ՀԵՆՁԷԼ. Նա կապալադրամը ճշտութեամբ է վճարում: Թիթէ այդ աղջկայ համար նրան պէտք է վճարել: (Կանգնում է եւ մօտենում օրորոցին): Տես, այստեղ մեղ մօտ էլ աղջիկ կայ, ուրեմն սրա համար էլ մեղ պէտք է վճարեն:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Իբր թէ դու էլ բան ասացիր: Իմացիր որ այս աղջիկը քնում է և ոչ մի բանի մասին գաղափար չունի:





ՀԵՆՁԷԼ. Նա մեզ էլ այնքան նեղութիւն չի տալիս: Դէհ, ասա ինձ, այժմ դու հօ չես ուզում մեռնել. (վերցնելով գլխարկը): Իսկ քեզ, Հաննէ, ես իսկապէս խաբել եմ, գոգնոցդ ա՛յ այնտեղ է, կառքի մէջ:

ՀԱՆՆԷ. (Իսկոյն) Որտեղ է:

ՀԵՆՁԷԼ. Կառքի արկղում, գնահ և փնտռիր (միջին դուռնով դուրս է գնում: Հաննէն մտնում է հարեան սենեակը):

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Հը՛մ, սրա համար գոգնոց, յամենայն դէպս, բերել է: (Հաննէն իսկոյն դուրս է գալիս հարեան սենեակից եւ հեռանում միջին դուռով): Այն էլ գոգնոց... Նրա համար... բերել է հա՛:

(Ձիբէնհարը զգուշութեամբ ներս է մտնում, առաջուայ մոմերով եւ ըանալինների մի կապոցով. միւս ձեռքում՝ ըռնել է 2 շիշ կարմիր գինի):

ՁԻԲԷՆՀԱՐ. Դուք մենակ էք, տիկին Հենշէլ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ուրեմն գոգնոց է... Նա...

ՁԻԲԷՆՀԱՐ. Ես եմ, տիկին Հենշէլ: Չլինի՞ ձեզ միջին ուր բան երևաց:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ձեմ կարծում: Հազիւ թէ:

ՁԻԲԷՆՀԱՐ. Ես ձեզ չղարթեցրի՞, տիկին Հենշէլ: Ես Ձիբէնհարն եմ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Դէ՛ իհարկէ, իհարկէ:

ՁԻԲԷՆՀԱՐ. Ես էլ ձեզ համար մի քիչ գինի եմ բերել: Խմեցէ՛ք այդ, ձեզ համար օգտակար է: Ինչպէս երևում է դուք ինձ դեռ եւ չէք ճանաչում:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ո՛չ, ինչպէս կարելի է... Այդ դուք էք դէ՛հ, իհարկէ: Դուք էք, մեր պարոն Ձիբէնհարը: Գործը դեռ մինչև այդտեղ չի հասել: Ես ձեզ չճանաչեմ, ի՞նչ է... Ձեմ հասկանում, թէ ինչ պատահեց ինձ հետ. քնով անցայ, թէ ինչ:

ՁԻԲԷՆՀԱՐ. Կարող է պատահել... Լա՛ւ, բայց ինչպէս էք զգում ձեզ այժմ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Դէհ, իհարկէ: Դուք պարոն Ձիբէնհարն էք:

ՁԻԲԷՆՀԱՐ. Իսկ դուք ինձ երեւի ձեր ամուսնու տեղ ընդունեցիր:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ճիշտ ասած, չգիտեմ... Ձեմ կարող ձեզ ասել... Ինձ հետ մի ինչ որ բան պատահեց...

ՁԻԲԷՆՀԱՐ. Ինձ թուում է, որ դուք անյարմար կերպով էք պառկած: Թողէ՛ք ուզդեմ ձեր բարձը: Ի դէպ քժիշկը ձեզ մօտ յաճախ է գալիս:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. (Յուզուած եւ արտասուելով): Չգիտեմ... Ոչինչ չգիտեմ... Նրանք ինձ մի կողմն են չալտում... Ո՛չ, ո՛չ, ես ձեզ ճանաչում եմ. դուք պարոն Ձիբէնհարն էք: Բայց գիտէ՛ք, ինչ: Ես ձեզ մի բան պէտք է ասեմ... Դուք ինձ հետ միշտ բարի էք եղել, Հնայելով որ դուք երբեմն բարկացած էք երևում: Ես ձեզ պէտք է ասեմ, որ վախենում եմ... Ես ամէն բան մտածում եմ... Դրա համար էլ սա արդէն չափից դուրս երկար է ձգձգում:

ՁԻԲԷՆՀԱՐ. Ի՞նչն է երկար ձգձգում:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. (Բարձր հառաչելով): Ես չափազանց երկար եմ ապրում... Բայց ի՞նչ կլինի այն ժամանակ Գուստլիի հետ:

ՁԻԲԷՆՀԱՐ. Է՛հ, թողէ՛ք, սիրելի տիկին Հենշէլ: Տօ, ինչ էք ասում է՛ք...

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. (Հեղեղալով): Երբ ես մեռնեմ... Ի՞նչ կլինի այն ժամանակ Գուստլին:

ՁԻԲԷՆՀԱՐ. Բաւական է, տիկին Հենշէլ. դուք մի խելոք կին էք. լսեցէ՛ք ինձ. գիտէ՛ք, երբ որեւէ մէկը ձեզ նման ամբողջ շաբաթներ և ամիսներ պառկում է անկողնում, այն ժամանակ, իհարկէ, նրա գլխով անցնում են մօայլ մտքեր և նրա աչքին ինչ որ սարսափելի բան է ներկայանում. Եւ այդ պէտքում մարդ չպէտք է իրան կորցնի: Ա՛յդ էր պակաս:



Յիմարութիւն է տօ՛: Հեռացրէք ձեր գլխից այդ դատարկ բաները:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ա՛խ, սիրելիս, դուք ինձ չէք հաւատում, իսկ ես գիտեմ, թէ ինչ եմ ասում:

ԶԻՔԷՆՀԱՐ. Ո՛չ, դուք չգիտէք. հէնց այժմ, դժբաղդաբար, դուք չգիտէք: Յետոյ երբ դուք այդ բաները յիշէք, ինքներդ կծիծաղէք: Հաւատացած եղէք:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. (Նորից արտասւելով): Եւ միթէ նա չէ՞ եղել նրա մօտ, սենեակում:

ԶԻՔԷՆՀԱՐ. (Չափազանց զարմացած եւ անվստահ): Ի՞նչ էր ասում: Ո՛վ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Հենչէլն էլի... Հաննէի մօտ:

ԶԻՔԷՆՀԱՐ. Ձեր ամուսինը... Հաննէի մօտ: Գիտէք... մի ինչ որ լիբբ, երեխ, ձեզ ասել է:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Եւ երբ ես մեռնեմ, նա կամուսնանայ նրա հետ: (Դռան մօտ նրկում է ՀԵՆՁԷԼ):

ԶԻՔԷՆՀԱՐ. Տիկ. Հենչէլ, դուք միայն ի դուք ձեզ տանջում էք:

ՀԵՆՁԷԼ. (Սիրալիկ եւ զարմացած): Ի՞նչ է պատահել քեզ հետ, Մալսէն, ինչո՞ւ համար ես լաց լինում:

ԶԻՔԷՆՀԱՐ. Ձի կարելի կնոջը մենակ թողնել, Հենչէլ:

ՀԵՆՁԷԼ. (Մօտենալով անկողնին, քաղցրութեամբ): Ո՛վ է քեզ վիրաւորել:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. (Բարկացած նրեւը դարձնում է դէպի պատը): Թո՛ղ ինձ... Թո՛ղ...

ՀԵՆՁԷԼ. Ախր ի՞նչ է պատահել:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. (Արտասունք թափելով գոռում է): Ա՛խ, հեռացիր, հեռացիր: (Հենչէլը մնում է ապշած կանգնած, հարցական հայնացք է ձգում ԶԻՔԷՆՀԱՐԻ վրայ, որ գլուխը լծափ է տալիս եւ սրբում իր պէսնէն):

ԶԻՔԷՆՀԱՐ. (Մեղմացած): Թողէք հանգիստ ձեր կնոջը:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. (Առաջաց պէս): Դուք ուզում էք ինձ թաղել:

ԶԻՔԷՆՀԱՐ. (Հենչէլին, որ սկսում է դողդողալ): Սա... լուեցէք, խնդրեմ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ձէ՛ որ, փառք Աստուծոյ, ես էլ աչքեր ունիմ, կոյր հօ չեմ: Կարելի էր մի քիչ էլ սպասել:

ՀԵՆՁԷԼ. (Աշխատելով իրան զսպել): Ախր ի՞նչ է պատահել քեզ հետ, Մալսէն:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Այո, այո, դու միամիտ ձեացիր:

ՀԵՆՁԷԼ. (Բողոքովին շուարած): Դէ՛հ ասա ինձ...

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ինչ ուզում է թող լինի. միայն ես չեմ թողնիլ, որ ինձ խաբեն, որքան էլ դուք աշխատէք կեղծել: Ես պատի միջով տեսայ, ախ, ես ձեզ պատի միջով տեսայ: Այդպէս չէ՛, ինչ է: Ճշմարիտ չէ: Դուք կարծում էք պառաւ կին եմ եւ ինձ հեշտութեամբ կարելի է խաբել: Ինչպէ՛ս չէ... մի բան միայն յիշիր, երբ ես մեռնեմ, Գուտտլին էլ կմեռնի: Ես նրան ինձ հետ կտանեմ: Այդպէս էլ իմացիր: Աւելի շուտ կխեղդեմ Գուտտլինին, քան թէ կյանքեմ ալ անիծող աղջկան:

ՀԵՆՁԷԼ. Ախր ի՞նչ ես անում, կնիկ, այդ ի՞նչ է մտել քո գլուխը:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Դուք ուզում էք ինձ դէպի գերեզման քշել:

ՀԵՆՁԷԼ. Վերջապէս թո՛ղ այդ խօսքերը: Մի բարկացնիր ինձ:

ԶԻՔԷՆՀԱՐ. (Մեղմ): Հանգիստ կաց, Հենչէլ, հանգիստ, չէ՛ որ նա հիւանդ է:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. (Հսկելով նրա խօսքերը): Հիւանդ. իսկ ո՞վ է ինձ հիւանդացրել: Հէնց դուք երկուսդ, այն անպիտան աղջիկը եւ դու:

ՀԵՆՁԷԼ. Ես միայն կցականայի լմանալ, թէ ո՞վ է մտ-



ցրել քո գլխի մէջ այդ կասկածը: Աղջիկը և ես: Այ գրողը տանի. ինչ կարող է լինել մեր մէջ:

ՏԻԿ. ՀԵՆՁԵԼ. Իսկ դու նրա համար գոգնոց և ժապաւէն բեր:

ՀԵՆՁԵԼ. (Նորից զարմացած): Գոգնոց և ժապաւէն:

ՏԻԿ. ՀԵՆՁԵԼ. Այո, այո, գոգնոց և ժապաւէն:

ՀԵՆՁԵԼ. Դէ՛հ վերջացրու:

ՏԻԿ. ՀԵՆՁԵԼ. Եւ այն ամենը, ինչ որ նա է անում, քեզ բոլորն էլ դուր է գալիս: Դոնէ մի անգամ նրա վրա բարկացիր: Նա հէնց այժմ այս տան իսկական տանտիրէն է:

ՀԵՆՁԵԼ. Ես քեզ ասում եմ լո՛ր, կնիկ:

ՏԻԿ. ՀԵՆՁԵԼ. Աւելի լաւ է դու լռես, որովհետեւ դու չես իմանում...:

ԶԻՔԷՆՀԱՐ. (Անկողնի մօտ): Խելօք կացէք, հանգստացէք: Դրանք բոլորն էլ կասկածներ են և ուրիշ ոչինչ:

ՏԻԿ. ՀԵՆՁԵԼ. Դուք էլ լաւ չէք, որովհետեւ միևնոյնն էլ դուք էք անում: Իսկ խեղճ կանաչը ձեր պատճառով խորտակում են. (Արտասուք թափելով): Եւ ձեր ինչ փոյ թըն, լժէ նրանք խորտակում են: (Զիբէնհարը բիշ եւ այն էլ լուրջ կերպով ծիծաղում է. յետոյ մօտենալով սեղանին, մի շիշ կարմիր գինի է քաց անում):

ՀԵՆՁԵԼ. (Նստում է մահճակալի ծայրին եւ մեղմանում է): Կնիկ, կնիկ: Երեսդ դէպի ինձ դարձրու. ես քեզ մի լաւ բան եմ ասում (քաղցր կերպով նրա երեսը ուժով դարձնում է դիպի իրան): Երանդ ես տեսել, ինչ է: Վատ երազ տեսար, այո: Նոյն իսկ մեր շուռը երբեմն երազներ է տեսնում: Դէ՛հ, այժմ արթնացիր, կնիկ: Դու այնքան անհիմն բաներ ես կուտակել գլխումդ, որ եթէ դրանք գնենք մի կառքի մէջ, նա էլ կկտրւի: Իմ գլուխս մինչև այժմ էլ պտտում է քո ասած խօսքերից:

ԶԻՔԷՆՀԱՐ. (Փնտրում եւ գտնում է մի քաժակ, որի մէջ գինի է լցնում): Դուք ինձ էլ խառնեցիք ձեր կուր մէջ:

ՀԵՆՁԵԼ. Խնդրեմ չվիրաւորուէք, պարոն Զիբէնհար: Ի՞նչ արած, կին է: Գնա և խօսիր նրա հետ: Իսկ դու, կնիկ, շուտով լաւացիր, եթէ ոչ գործը կհասնի մինչև այնտեղ, որ դու կսկսես ինձ նոյն իսկ ձիու գողութեան մէջ մեղադրել: ԶԻՔԷՆՀԱՐ. Աւելի լաւ է գինի խմէք, դա ձեզ կկաղզուի: ՏԻԿ. ՀԵՆՁԵԼ. Այո երանի թէ իմանայի: (Զիբէնհարը խմելու ժամանակ նրան օղևում է):

ՀԵՆՁԵԼ. Ի՞նչի համար ես նորից...

ՏԻԿ. ՀԵՆՁԵԼ. (Գինին խմելուց յետոյ): Դու խօստանում ես ինձ:

ՀԵՆՁԵԼ. Ամեն բան, ինչ որ ցանկանում ես:

ՏԻԿ. ՀԵՆՁԵԼ. Եթէ ես մեռնեմ, դու չե՞ս ամուսնանալ նրա հետ:

ՀԵՆՁԵԼ. Մի հարցնիլ այդպիսի յիմարութիւններ:

ՏԻԿ. ՀԵՆՁԵԼ. Ասա այս կամ ոչ:

ՀԵՆՁԵԼ. Հաննէլի հետ: (Կատակելով): Դէ՛հ, իհարկէ, կամուսնանամ:

ՏԻԿ. ՀԵՆՁԵԼ. Ո՛չ, լուրջ խօսիր, խնդրում եմ:

ՀԵՆՁԵԼ. Դէ՛հ, այժմ ինչ կասէք դրան, պարոն Զիբէնհար: Ի՞նչ պատասխանել նրան: Բայց չէ՞ որ դու չես մեռնիլ:

ՏԻԿ. ՀԵՆՁԵԼ. Բայց ոչ, եթադրենք որ կմեռնեմ:

ՀԵՆՁԵԼ. Իհարկէ չեմ ամուսնանալ: Բաւական է: Վերջապէս ժամանակ է այդ պատմութեանը վերջ տալ, չէ՞:

ՏԻԿ. ՀԵՆՁԵԼ. Խօսք ես տալիս ինձ:

ՀԵՆՁԵԼ. Ի՞նչ:

ՏԻԿ. ՀԵՆՁԵԼ. Որ դու Հաննէլի հետ երբէք չես ամուսնանալ:

ՀԵՆՁԵԼ. Այո, խօսք եմ տալիս:

ՏԻԿ. ՀԵՆՁԵԼ. Ուրեմն տուր ձեռքդ:

ՀԵՆՁԵԼ. Դէ՛հ ասում եմ էլի. (Չնայելով մեղմանում է): Այժմ գնա ես, բայց խնդրեմ ինձ այսուհետեւ այդպիսի յիմարութիւններով չնեղացնես:



## ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Մայիսեան գեղեցիկ առաւօտ է:

Տեսարանը ներկայացնում է առաջին գործողութեան միևնոյն սենեակը: Չկայ այլևս այն մահճակալը, որի վրայ պառկած էր տիկին Հենշէլը: Այն լուսամուտը, որի մօտ դրուած էր մահճակալը, բաց է: Հանգեց թեւերը վեր քաշած սպիտակեղէն է լուսնում. նա երեսը դարձրել է դէպի լուսամուտը:

ՓՐԱՆՑ. (Շապիկի թեւքերը եւ վարտիկի ծայրերը վեր քաշած եւ փայտէ կօշիկներ հագած ներս է մտնում փայտէ դռնը ձեռքին, որով կտրքն է լուսացել: Տրամադրութիւնը լաւ է:) Իսկ ես քեզ մօտ հիւր եմ եկել, Հաննէ... Եւ ահա թէ ինչ եմ ուզում. արդեօք տաք ջուր ունիս, թէ ոչ, ասա խնդրեմ:

ՀԱՆՆԷ. (Բարկացած ձեռքից վայր է ձգում սպիտակեղէնը լուսացարանի մէջ եւ գնում դէպի վառարանը:) Իսկ դու այսուհետեւ այդպէս յաճախակի չգաս այստեղ, լսում ես:

ՓՐԱՆՑ. Այ քեզ բան. չլինի մի բան է պատահել:

ՀԱՆՆԷ. (Տաք ջուր լցնելով նրա վերջուկի մէջ): Ոչ մի բան չհարցնել, ես ժամանակ չունիմ:

ՓՐԱՆՑ. Կարծում ես ուրիշները պարապ են, ես էլ կառք եմ լուանում, չէ:

ՀԱՆՆԷ. (Տաքացած): Խնդրեմ ինձ հանգիստ թողնես, հասկանում ես: Հազար անգամ քեզ արդէն ասել եմ:

ՓՐԱՆՑ. Ախր, ինչ եմ անում ես քեզ:

ՀԱՆՆԷ. Երբէք չհետեւես ինձ:

ՓՐԱՆՑ. Չլինի մոռացել ես մեր մէջ եղած բաները:

ՀԱՆՆԷ. Մեր մէջ մինչև այժմ ոչ բան է եղել, ոչ էլ այսուհետեւ կլինի. ինչ կարող է լինել մեր մէջ: Ես իմ գործն ունիմ, դու էլ քոնը եւ ուրիշ ոչինչ: Ահա թէ ինչ:

ՓՐԱՆՑ. Այդ էլ նոր բան է:

ՀԱՆՆԷ. Իսկ ինձ համար հին է:

ՓՐԱՆՑ. Ինչպէս չէ'... Բայց ինչ է պատահել քեզ հետ, Հաննէ:

ՀԱՆՆԷ. Ոչինչ, բոլորովին ոչինչ: Միայն ինձ հանգիստ թող:

ՓՐԱՆՑ. Միթէ դու կարող ես ինձանից դժգոհ լինել: Ես քեզ դաւաճանել եմ, ինչ է:

ՀԱՆՆԷ. Իմ ինչ գործն է: Գնա ում յետից ուզում ես ընկիր: Այդ բոլորը ինձ համար միևնոյն է:

ՓՐԱՆՑ. Երբեանից է այդ քեզ համար միևնոյն, Հաննէ:

ՀԱՆՆԷ. Այն ժամանակից, երբ աշխարհս ստեղծուել է:

ՓՐԱՆՑ. (Տաքացած): Դու ստում ես, Հաննէ:

ՀԱՆՆԷ. Ոչ մի բան: Դու իմ դէմ ոչ մի գանգատ չունիս, եղբայր: Ես քեզ թող չեմ տալ ինձ պախարակելու ստախօսութեան համար: Կարծեմ ես քեզ պարզ ասացի, որ մեր մէջ ամեն ինչ վերջացել է: Իսկ եթէ գլուխդ հաստ է, եւ չես կարող ասածս հասկանալ, այն ժամանակ լաւ լսիր ասածս եւ մտքուր գլուխդ: Մեր մէջ ամեն բան վերջացել է:

ՓՐԱՆՑ. Լսորջ ես ասում:

ՀԱՆՆԷ. Այո, ամեն բան վերջացել է: Հասկացիր այդ միանգամ ընդ միշտ:

ՓՐԱՆՑ. Լաւ, կլիշեմ: (Հետզհետէ յուզում եւ վերջ է վերջոյ աւելի լալիս է, քան թէ խօսում): Բայց խնդրեմ իմանա՞ս, որ ես այնքան էլ յիմար չեմ, որ ոչինչ չհասկանամ... Այդ ես վաղուց էի նկատել, բայց լռածում էի որ գուցէ խելքի կգաս եւ կհասկանաս...



ՀԱՆՆԷ. Ես հէնց խելքի էլ եկել եմ:

ՓՐԱՆՑ. Ի հարկէ, նայելով թէ ինչպէս ես դու այդ հասկանում. ես մի աղբատ մարդ եմ, իսկ Հենշէլի սնդուկը փողով լիքն է, այնպէս չէ: Բայց միայն մի տեսակետից, եթէ լաւ մտածենք, դու գուցէ և խելքի ես եկել:

ՀԱՆՆԷ. Եթէ այդպէս է, ուրեմն քո երգը արդէն վաղուց է երգուած:

ՓՐԱՆՑ. Եւ միթէ ճշմարիտ չէ այդ. միթէ դու չե՞ս աշխատում Հենշէլի կիներ դառնալ, Դէհ, ասա, ճշմարիտ եմ ասում, թէ ոչ:

ՀԱՆՆԷ. Այդ իմ գործն է և քեզ չի վերաբերում: Թող ամեն մարդ իր մասին մտածի:

ՓՐԱՆՑ. Այո, իսկ եթէ ես դնամ Հենշէլի մօտ և նրան ասեմ, որ Հաննէն խոստացել է ինձ հետ ամուսնանալ և մենք արդէն միմեանց հետ համաձայնուել ենք:

ՀԱՆՆԷ. Փորձիր միայն:

ՓՐԱՆՑ. (Չարութիւնից եւ վերաւորանքից հազիւ զսպելով իր լացը): Ի՞նչ պէտք է լինի, կփորձեմ. չէ՞ որ դու մտածում ես քո մասին, իսկ ես էլ պէտք է իմ մասին մտածեմ: Եթէ դու այդպէս ես, ես էլ ուրիշ տեսակ կլինեմ: (Յանկարծ փոխելով իւր ձայնը): Սկի ես էլ քեզ չեմ ուզում ճանաչել, եթէ դու նոյն իսկ ցանկանաս վզիցս կախել: Քեզ նման աղջիկը ինձ էլ հարկաւոր չէ... (Շտկոյն դուրս է գնում):

ՀԱՆՆԷ. Ահ, վերջապէս աղաւուցի: (Շարունակում է իր լուացքը նախասննեակում երեսում է Վերմելսկիի: Նա մօտ 50 տարեկան է: Երեսում է, որ նա մի ժամանակ դերասան է եղել: Նրա խալաթը մաշւած է, իսկ կիսաօղջիկները գործած: Վերմելսկիի ճակար ծխամորժով ծղխում է):

ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ. (Մի առ ժամանակ նայում է սենեա-

կից եւ Հաննէն նրան չի նկատում): Լսեցիր դուք, թէ ինչպէս հաղում են:

ՀԱՆՆԷ. Ո՛ր է հաղում:

ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ. Ինչպէս չէ: Վերեւում արդէն մի հիւր կայ:

ՀԱՆՆԷ. Ժամանակն է չէ, փառք Աստուծոյ, այժմ մայիսի կէսն է:

ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ. (Կամաց անցնում է դռան շէմքով եւ հազալով ու կիսաձայն երգում): Ես էլ թեկնածու եմ թութախտի, վիրիվիրիվետ, բամ, բամ: (Հաննէն ծիծաղում է դաշտակի վրայ ընկած):

ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ. Գիտես, իսկապէս հաճելի է հազիւ ձայն լսելը, գոնէ դրանով իմանում ես, որ գարունը վրայ է հասել:

ՀԱՆՆԷ. Բայց չէ՞ որ մի ծիծեռնակով դարուն չի լինի:

ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ. (Նստում է վառարանի մօտ գտնուող նստարանի վրայ): Բայց հրտեղ է Հենշէլը:

ՀԱՆՆԷ. Նա գերեզմանատուն է դնացել:

ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ. Հա՛, այսօր հանգուցեալի ծծնդեան օրն է: (Լռութիւն): Ասենք նրա գրութիւնն էլ լաւ չէ, բայց ասացէք խնդրեմ, երբ կվերադառնայ նա:

ՀԱՆՆԷ. Ես բոլորովին չեմ հասկանում, թէ նա ինչ գործ ունէր այնտեղ գնալու համար: Այժմ ձիերը մեզ շատ հարկաւոր են: Բաւական չէ այդ, նոր կառապանին էլ հետն տարել է:

ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ. Է՛յ, Հաննէ, տես, բարկացող մարդը երկար չի կարող ապրել:

ՀԱՆՆԷ. Ինչ է, միթէ ճիշտ չեմ ասում: Նա ամեն ինչ մոռացել է: 2<sup>է</sup>, որ գիլիժանը պէտք է որոշ ժամանակին այստեղից դուրս փայ. միաձի կառքն էլ դեռ ցիխի մէջ ընկած է, իսկ Հաուֆէն մինչև այժմ դեռ չէ մաքրել այդ: Այդ ծերունին էլ այժմ յամառութիւն ունի:



**ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ.** Այո, այո, այժմ աշխատանքը սկսում է։  
Գլխաւոր խոհարարն էլ այսօր վերկում արդէն սկսում է իր  
գործը։ Իսկ գարեջրատանն էլ այդ բանը արդէն նկատելի է։

**ՀԱՆՆԷ.** (Մի քիչ ծիծաղում է)։ Ձեզ մօտ։ Ձեզ տես-  
նում, գործերը թաղնել են ձեր գարեջրատանը։

**ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ.** (Չվերաւորելով)։ Ամեն բան իր ժա-  
մանակն ունի։ Eleven eclair. Ժամը տասնեմեկին։ Այդ ժա-  
մանակ ես ամբողջ օրուայ փող եմ աշխատում։

**ՀԱՆՆԷ.** Երեակայում եմ։ Ամբողջ օրը, ամբողջ ժամանակը  
դուք ծխելով էք դբադած։

**ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ.** (Ժպտալով)։ Դուք միշտ սրախօսում էք,  
տիրուհի։ Ձեր լիզուն ասեղից աւելի վատ է... Այնպէս էլ ծա-  
կում է։ Միք ծիծաղիլ, ես էլ քիչ գործ չունիմ։ Տե-  
սէք այսօր մեզ մօտ ճաշի ժամանակ առաջին կոնտրորաս-  
կլինի, երկրորդ վիտլոնշել, երրորդ երկու առաջին և երկու  
երկրորդ ջութակներ։ Ո՛չ, երեք առաջին և երկու երկրորդ  
ջութակներ... Երեք երկրորդ և երկու առաջին... Այդ բոլորը  
ես այնպէս շփոթել եմ։ Մի խօսքով այսօր մեզ մօտ կլինին  
հանքային ջրերի օրկեստրից 10 հոգի... Ինչո՞ւ էք ծիծաղում։  
Կարծում էք, ես այդ ինձանից եմ շարադրում։ Բայց ինչ էք  
կարծում, որքան բան կուտի միայն մէկ կոնտրորասը։ Դուք  
կզարմանաք։ Եւ յետոյ ասում էք, որ ինձ մօտ քիչ գործ է  
լինում։

**ՀԱՆՆԷ.** (Փափսալով)։ Իհարկէ խոհարարուհու մօտ շատ  
գործ կլինի։

**ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ.** (Անտարքեր). Կինս, աղջիկս, մի  
խօսքով մենք բոլորս էլ պատուաւոր և բարեխիղճ կերպով աշ-  
խատում ենք։ Իսկ երբ ամառը կանցնի, այնուհետեւ մենք  
բոլորովին ազատ կլինինք։

**ՀԱՆՆԷ.** Ես չեմ հասկանում, թէ էլ ինչո՞ւ էք դուք գան-  
գատում։ 2<sup>րդ</sup> որ դուք ձեր տանը ամենալաւ գործերն էք ա-  
նում։ Ձեր գարեջրատունը ամեն ժամանակ ժողովրդով լիքն

է, թէ ամառը և թէ ձմեռը։ Եթէ ես լինեի Զիրէնհարի  
փոխարէն վերկում, այն ժամանակ ես ձեզ հետ ուրիշ տե-  
սակ կվարէի։ Այն ժամանակ դուք չէիք կարող ինձանից  
որի է 300 թալէր կապալով աղատել։ Հաղարից պակաս  
ես չէի վերցնիլ։ Եւ այն ժամանակ տեսնենք դուք ինչպէս  
կարող էիք օգուտ ոտանալ։

**ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ.** (Տեղից քարճրանում ու սուշելով  
քայլում է սենեակում)։ Դուք գեա մի քիչ էլ աւելի։  
(Ժորժը մի երիտասարդ եւ ճարպիկ ծառայող է. նա իջ-  
նում է ապակեայ դռան ետեւի սանդուխովը եւ ձեռ-  
քին ընկել է մատուցարանի մէջ դրած նախաճաշը։ Դեռ  
դռան մօտ մի քուպէ անվճարողական կերպով կանգնում է,  
յետոյ քաց է անում՝ դուռը եւ նայում է նախասենեակում  
աջ ու ձախ)։

**ԺՈՐԺ.** Ա՛յ դրողը տանի։ Տես սրտեղ ես ես ընկել։

**ՀԱՆՆԷ.** Ծիծաղելով լուացարանի մօտ)։ Դուք մոլո-  
ւել էք։ Պէտք է յետ գնաք։

**ԺՈՐԺ.** Աստուած է վկայ, մարդուս գլուխը կարող է  
պտտւել։ Այս փոսում սատանան էլ չի կարող ճանապարհ  
գտնել։

**ՀԱՆՆԷ.** Ինչպէս երևում է դուք նոր էք ծառայութեան  
մէջ մտել, հա՛։

**ԺՈՐԺ.** Այո, հէնց երեկանից։ Ա՛յ բեզ բան։ Այսպիսի  
բան ինձ հետ երբէք չի պատահել։ Ես ծառայել եմ զանա-  
զան տներում, իսկ այստեղ ուղեցոյց չունիմ. մարդ կարծես  
լեռներում լինի. երբէք չի կարելի ճանապարհ գտ-  
նել։

**ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ.** Ասացէք, խնդրեմ, չլինի դուք Դրեզ-  
դենցի էք։

**ԺՈՐԺ.** Իմ հայրենի քաղաքը Մայդէնն է։

**ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ.** Այդպէս ուրեմն։ Ի՛նչ էք ասում։



ԺՈՐԺ. Բայց առաջէք խնդրեմ, ինչպէս աղատեմ եւ այժմ այստեղից:

ՀԱՆՆԷ. (Շայեւրով Ժորժի վրայ: Շա ուրախ եւ աշխոյժ կոտորատում է): Միանայն ճանապարհով՝ սանդուխով յետ զնացէք: Ձեզ նման ծիծեռնակի պոչերը այստեղ հարկաւոր չեն:

ԺՈՐԺ. Իսկ այստեղ բէլ-էտաժն է, այնպէս չէ:

ՀԱՆՆԷ. Իսկ դուք կարծում էիք այստեղ շան ծակ է, ինչ է: Ձլինի մենք ձեզ վրայ հաջում եւ ձեզ կծում ենք: Այստեղ էլ նշանաւոր մարդիկ են ապրում:

ԺՈՐԺ. (Խաղաղով): Գիտէք ինչ, զեղեցկուհի, եկէք միասին գնանք: Յոյց տուէք ինձ ճանապարհը. ձեզ հետ միասին ես ոչ մի տեղ չեմ վախենալ, որտեղ էլ ինձ տանէք, ոչ մառանում եւ ոչ էլ ներքնայարկում:

ՀԱՆՆԷ. Աւելի լաւ կլինի ինձ աղատէք այդ հաճոյքից: Չատ հարկաւոր է: Ձեզ նման արագավազ շներից այստեղ չատ կան:

ԺՈՐԺ. Գեղեցկուհի, չէ՞ կարելի ձեզ օգնել շորերը լուանալու ժամանակ:

ՀԱՆՆԷ. Հարկաւոր չէ: Եթէ ոչ ես ձեզ այնպիսի ճանապարհ ցոյց կտամ, որ... Այ: (Հուացարանից կիսով չափ հանում է մի սպիտակեղէն): Գնացէք ձեր ընկերին դռէք:

ԺՈՐԺ. Դէհ, դէհ: Գուք ինձ ուզում էք խողի նման լուանալ, ինչ է: Ո՛չ, ոչ: Այդ անկարելի է: Մենք դեռ ձեզ հետ կխօսենք միւս անգամ: Եթէ ես յետոյ ժամանակ կունենամ, միւս անգամ: (Դուրս է գնում եւ սանդուխով վերելւ ընթացում):

ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ. Միւս անգամ նա էլ չի մոլորել: Զիբէնհարը նրան ցոյց կտայ սեղանատնից խոհանոց տանող ճանապարհը:

ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ. Ե՛րբ է վերադառնալու հենչէլը:

ՀԱՆՆԷ. Ճաշին, իհարկէ: Ի՞նչ էր ուզում, որ յայտնեմ նրան:

ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ. Այո՛, Առաջէք նրան... բայց չմոռանաք, խնդրեմ... Առաջէք նրան, որ ես բարեւում էի:

ՀԱՆՆԷ. Ահա թէ ինչ. ես գիտեմ: Ես գուշակում եմ, թէ ինչումն է գործը:

ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ. (Անցնում է նրա մօտով եւ ողջունում նրան): Գուշակութեան համար փող չեն վերցնում: Մնաք բարով (դուրս է գնում):

ՀԱՆՆԷ. (Շորից սկսում է նուանդով լուանալ): Ա՛խ, եթէ հենչէլը այնպէս յիմար մարդ չլինէր: (Վերելում լուսամուտով կուացած նայում է նամակաքեր Փաքիզը):

ՓԱՔԻԳ. Բարեւ ձեզ, երիտասարդ տիրուհի. ինչպէս էք:

ՀԱՆՆԷ. Ո՛վ էք դուք:

ՓԱՔԻԳ. Ես Փաքիզն եմ, Կվոստորֆից: Միթէ չէք ճանաչում ինձ: Ես ձեզ համար տանից բարեւ եմ բերել: Նա ինձ պատուիրել է ձեզ ասելու... Կարճով եմ ներս մտնել ձեզ մօտ:

ՀԱՆՆԷ. Լաւ, ես արդէն զիտեմ. նորից փող է խնդրում: Ես ինքս ոչինչ չունիմ:

ՓԱՔԻԳ. Ես էլ նրան ասել եմ, բայց նա չէ հաւատում: Դուք մեհմակ էք, տիրուհի:

ՀԱՆՆԷ. Բայց ձեր ինչ գործն է:

ՓԱՔԻԳ. (Մեղմացնելով ձայնը): Գիտէք ես ձեզ հետ գործ ունիմ... Այստեղից անյարմար է խօսելը... Կարող եմ լսել...

ՀԱՆՆԷ. Եթէ այդպէս է, ներս մտէք: (Փաքիզը թազնւում է): Որ նա էլ հէնց այսօր պէտք է վերադառնայ: (Հուանում է ձեռքերը):

ՓԱՔԻԳ. (Դտորամանկութեամբ): Մի՛թէ: Ոչինչ, ուրեմն շուտով կլինիք...



ՀԱՆՆԷ. Այդ բոլորը դատարկ խաբեբայութիւն է և ուրիշ ոչինչ:

ՓԱՅԻԳ. Ես միայն այդպէս եմ լսել... Ես ոչինչ... ամեն տեղ այդպէս են ասում, որովհետեւ չէ որ Հենշէլի կիներ մեռել է:

ՀԱՆՆԷ. Թող ասեն, իմ ինչ գործն է: Ես իմ գործը գիտեմ. ահա և բոլորը...

ՓԱՅԻԳ. Գրանից էլ լաւ բան չի լինել: Ես էլ միշտ այդպէս եմ վարում: Ինչէր, ինչէր չեն խօսել իմ մասին էլ մարդիկ: Իբր թէ ես Ալտվաուսէրում աղաւնիներ եմ գողացել: Այն ինչ մի անգամ մի շուն ինձ հետեւ է և մարդիկ կարծել են, իբր թէ ես այդ շունը գիտամբ գողացել եմ:

ՀԱՆՆԷ. Եթէ ուզում էք ինձ մի բան ասել, այն ժամանակ մի ձգձգէք:

ՓԱՅԻԳ. Այն: Միթէ: Ես էլ միշտ այդպէս եմ ասում, որովհետեւ ինձ էլ թւում է, որ մարդիկ խօսելու ժամանակ շատ են դէս ու դէն ընկնում: Երբ մարդիկ միմեանց հետ մի հասարակ գործ ունին, իրար հետ այնպէս են վարում, կարծես թէ նրանք մի մեծ կալած են վաճառում: Բայց այժմ ես ձեզ ամեն ինչ կարճ խօսքերով կպատմեմ: Ես ուզում էի ասել, երիտասարդ աղջիկս, որ խօսքը վերաբերում է ձեր աղջկան:

ՀԱՆՆԷ. (Բարկացած): Ես ոչ մի աղջիկ չունիմ, եթէ ուզում էք ճիշտն իմանալ: Այն աղջիկը, որ ապրում է հօրս մօտ, իմ քրոջ աղջիկն է:

ՓԱՅԻԳ. Եթէ այդպէս է, ուրեմն գործը բոլորովին ուրիշ է: Բայց մենք ամենքս էլ կարծում էինք, թէ նա ձեր աղջիկն է: Ո՞րտեղ է ձեր քոյրը:

ՀԱՆՆԷ. Ո՞վ գիտէ, որտեղ է նա: Հաւանօրէն նա մարդկանցից իրեն գաղտնի է պահում, իսկ եթէ ցանկանում էր նրան գտնել, այդ էլ ձեր գործն է:

ՓԱՅԻԳ. Ա՛խ մարդի՛կ, մարդի՛կ: Այժմ էլ ուրիշ բան չի դուրս գալիս: Իսկ ես կարծում էի... բայց ոչ միայն Կո, այլ Կոլոսոփոլում ամենքն էլ երգում էին, որ դուք էք այդ աղջկայ մայրը:

ՀԱՆՆԷ. Գիտեմ, գիտեմ, թէ այդ բանը իմ մասին սփռել են սարքեր: Ես կարող էի նոյն իսկ դրանց անունները տալ: Նրանք միայն ուզում են անունս խայտառակել: Եթէ նրանք ձեռքս ընկնէին, ես նրանց ցոյց կտայի և այն ժամանակ նրանք կիմանային:

ՓԱՅԻԳ. Գործը շատ վատ է, տիրուհի: Ձեր ծերունի հայրը ողորմելի է. դուք շատ լաւ գիտէք, որ նրան ոչինչ չի կարելի անել. նա անդադար հարբում է և օր չի լինում, որ նա բնական գրութեան մէջ լինի: Ձեր մայրն էլ երկու տարի սրանից առաջ մեռաւ: Գոնէ եթէ նա կենդանի լինէր, ուզում եմ ասել, որ ձեր հայրը երեխան կարող էր նրան թողնել, իսկ այժմ այդ անկարելի է, որովհետեւ տունը դատարկել է: Ահա դրա համար էլ նա փոքրիկ աղջկան իր հետ շարունակ քաշ է տալիս դէպի գինեաները և մառանները: Մի խօսքով անկարելի է սառնասիրտ կերպով այդ բանին նայել. չունն էլ կխղճայ նրանց վրայ:

ՀԱՆՆԷ. (Բարկացած): Իսկ ես ինչով եմ մեղաւոր, որ նա խմում է:

ՓԱՅԻԳ. Տէր-Աստուած, իհարկէ դուք ոչնչով մեղաւոր չէք: Միթէ կարելի է ծերունի մարդուն պահել: Ես միայն փոքրիկ աղջկայ համար եմ ասում. նրա գրութիւնը շատ անտանելի է: Եթէ բարի մարդիկ այդ աղջկան շահատեն ծերունու ձեռքից, 10 շաբաթ նա հաղիւ կարողանայ ապրել:

ՀԱՆՆԷ. (Դժխտ): Այդ ինձ չի վերաբերում: Ես չեմ կարող նրան ինձ մօտ բերել: Ես ինքս քիչ հոգսեր չունիմ:

ՓԱՅԻԳ. Բայց դուք մի կերպ գնացէք Կոլոսոփոլ և ձեր աչքով տեսէք: Այդ բոլորից լաւ կլինէր: Իսկ ինչ վերաբեր-



բում է աղջկան, եո կարող եմ ձեզ ասել... ուղղակի գեղեցիկուհի է... նրա ձեռքերը, ոտիկները... Աստուած է վկայ, կարծես իսկական ճեղքապակուց լինին: Այնպէս նորը, մանր:

ՀԱՆՆԷ. Իմ ինչ գործն, նա հօ իմ աղջիկը չէ:

ՖԱՅԻԻ. Բայց այնուամենայնիւ գնացէք այնտեղ և խորհուրդ տւէք ինչ անել: Հաւատացնում եմ, առանց խղճալու չի կարելի նայել. հէնց որ չես մտնում գինեւան, լինի ցերեկը թէ գիշերը, չէ որ մեր գործը այնպիսի մի գործ է, որ պէտք է առուտուր անել, այդ աղջիկը միշտ ձեր հօր հետ նստած է այնտեղ գինեւան ծխի մէջ: Մարդու սիրտը կը տրտում է:

ՀԱՆՆԷ. Իսկ ինչո՞ւ են գինեւան պահողները թողնում նրան խմելու: Թող վերցնեն մի հատ փայտ և նրան դուրս վռնդեն այնտեղից: Տես այն ժամանակ ինչպէ՞ս խելքի կգայ նա... Այժմ, կարծեմ, մի կառք մտաւ բազր: Ահա ձեզ հինգ գրոշ: Իսկ այժմ չուտով դուրս գնացէք, ես յետոյ կմտածեմ, թէ ինչպէս անեմ: Այժմ ես ժամանակ չունիմ այդ բանով զբաղուելու: Միայն դրա մասին այստեղ, դարեջրատանը բերան չբանաք, լսում էք: Եթէ ոչ, մեր մէջ ամեն ինչ վերջացած է: Հասկանո՞ւմ էք:

ՖԱՅԻԻ. Ինչ գործ ունիմ խօսելու. իմ ինչ գործն է: Ձերն է աղջիկը, թէ ձեր քրոջը, դրա համար հօ՞ ես եկեղեցական գրքեր չպէտք է քրքրեմ: Ինչո՞ւ համար: Բայց այնուամենայնիւ ես ձեզ խորհուրդ եմ տալիս. հենչէլին պատմէք ճշմարտութիւնը: Այդպէս աւելի լաւ կլինի: Նա ձեր գլուխը հօ չի կտրելու:

ՀԱՆՆԷ. (Աւելի եւս ըորընդլայնելով, որովհետեւ արդէն լսում է Հենչէլի ծայնը): Դէհ, բաւական է յիմարութիւններ խօսելը: Մարդ ուզում է բարկութիւնից տրաքւել, հա՞ (դուրս է գնում սենեակը): (Հենչէլը կամաց ներս է մտնում: Նրա դէմքը լուրջ է. նա հագել է սեւ սիրտուկ, ցիլինդր եւ սպիտակ գործած ձեռնոցներ):

ՀԵՆՉԷԼ. (Մի րոպէ կանգ է առնում եւ լարուած նայում է Փաքիզի վրայ, կարծես մի քան յիշելով: Նա խօսում է պարզ եւ հանգիստ): Ո՞վ է սա:

ՖԱՅԻԻ. (Արագ): Ես գնում եմ դանաղան տեսակի հին բաներ, թուղթ, կահ կարասիք, հագուստեղէններ, ինչ էլ որ լինի:

ՀԵՆՉԷԼ. (Նայելով նրա վրայ, գոռում է քարկացած ծայնով): Դուրս կորի՛ր այստեղից: (Փաքիզը դուրս է գնում եւ շփոթուած ծիծաղում է):

ՀԵՆՉԷԼ. (Վերցնում է ցիլինդրը, փայլուն աղլուխով սքըռում է իւր ճակատը եւ ծոծրակը, դիւմ է ցիլինդրը սեղանի վրայ եւ դառնալով դէպի հարեւան սենեակի դուռը, ասում է): Որտե՞ղ ես, Հաննէ:

ՀԱՆՆԷ. Ես Գուստիլի մօտն եմ, այստեղ՝ սենեակում:

ՀԵՆՉԷԼ. Լաւ, ես կսպասեմ (նստում եւ խորը հառաչում է): Օ՛հ, օ՛հ, օ՛հ: Այսպիսի դառնութիւն:

ՀԱՆՆԷ. (Ներս է մտնում, սաստիկ զընդուած): Այս րօպէիս ճաշը պատրաստ կլինի:

ՀԵՆՉԷԼ. Ես չեմ կարող ճաշել... Կարծես ախորժակ չունիմ:

ՀԱՆՆԷ. Առանց ուտելու հօ չի կարելի ապրել: Տեսէք, երբ ես պատուրի մօտ էի ծառայում, նա միշտ ինձ ասում էր, որ երբ ինքը մի օրէէ վիշտ ունի, պէտք է անպատճառ մի բան ուտի, եթէ նոյն իսկ ախորժակ չունի. պէտք է դօռով ուտի...

ՀԵՆՉԷԼ. Դէհ, պատրաստիր ճաշդ, իսկ լետոյ կտեսնենք:

ՀԱՆՆԷ. Մարդ հօ իրեն չպէտք է մորթի, հարկաւոր է և հանդատանալ:

ՀԵՆՉԷԼ. Բայց այստեղ էր կազմարար Հորանդը:

ՀԱՆՆԷ. Ամեն ինչ տեղի է: Նա պատրաստել էր քառասուն միայն տոմսակ: Ա՛յ, տես, նրանք պահարանումն են:

ՀԵՆՉԷԼ. Կրկին սկսում է տանջանքը. արի և ամեն օր



հանրակառքով գնա Փրէյբուրգ, այն էլ այդ ծերունի կառապանի հետ և հիւանդներին քաշքշիր...

ՀԱՆՆԷ. Դուք ստիպուած էք չափազանց շատ աշխատել: Ծերունի Հաուֆէն չափազանց դանդաղաշարժ է դարձել: Ես նրան կարձակէի, եթէ քո տեղը լինէի:

ՀԵՆՁԷԼ. (Վեր է կենում եւ մտնում աւատուհանին): Զգուացրել է ինձ այդ կառապանը: Թող կորչի բոլորովին է է: Ոչ երբէք չէի ցաւիլ: Այսօր չլինի, վաղը լինի, միւսը չէ: Զիեքը կտանենք անասունների կաշի քերթողի մօտ, իսկ կառքերը փայտի փոխարէն գործ կածենք... Իսկ ինձ համար էլ աւելի լաւ է փողը: Լաւ կլինի գնալ վերեւ Զիբէնհարի մօտ:

ՀԱՆՆԷ. Ես էլ ուզում էի ձեզ ասել...

ՀԵՆՁԷԼ, Ի՞նչ ես ուզում:

ՀԱՆՆԷ. Տեսնում եք... Իմ դրութիւնս էլ լաւ չէ (Խեղճ կերպով լալիս է): Եղբայրս ուզում է ինձ իր մօտը տանել (հառաչելով). ես պէտք է գնամ:

ՀԵՆՁԷԼ. (Չափազանց հիասթափւած): Դժուր ես, ինչ է: Յիմարութիւններ մի անիլ: (Հաննէն շարունակում է լալ, աչքերը զոզնոցով ծածկելով): Բայց ասա ինձ, Հաննէ. չէ՞ որ դու այդ չես անիլ: Յետոյ ինչ կլինի: Ո՞վ պէտք է այն ժամանակ այստեղ տնտեսութիւն անի: Այժմ սկսում է ամառը... չափից դուրս շատ գործ կայ, իսկ դու ուզում ես ինձ միայնակ թողնել:

ՀԱՆՆԷ. (Շարունակում է հեկեկալ): Ես ցաւում եմ ձեր աղջկայ համար:

ՀԵՆՁԷԼ. Ուրեմն եթէ դու հեռանաս, էլ ո՞վ պէտք է նրա մասին հոգայ:

ՀԱՆՆԷ. (Իբր թէ ընդ կերպով հանգստանալով): Ուրիշ կերպ չի կարելի:

ՀԵՆՁԷԼ. Մարդուս համար ամեն բան կարելի է, եթէ նա միայն ցանկանայ: Առաջ դու այդ բանի մասին ինձ ոչինչ

չես ասել: Իսկ այժմ ինչ որ եղբայրդ է մէջ ընկել: Միթէ ես քեզ որեւէ բանով վերաւորեմ եմ: Կամ դուցէ քեզ մեզ մօտ մնալը այլ ես դուր չի գալիս:

ՀԱՆՆԷ. Բայց աւելի լաւ է մի անգամ ընդ միշտ վերջ տալ այդ խօսակցութիւններին...

ՀԵՆՁԷԼ. Ո՞ր խօսակցութիւններին:

ՀԱՆՆԷ. Ես չգիտեմ... աւելի լաւ է ոչ մի առիթ չտալ:

ՀԵՆՁԷԼ. Ես քեզ բոլորովին չեմ հասկանում:

ՀԱՆՆԷ. Ես կատարում եմ իմ գործը, դրա համար ռոճիկ եմ ստանում և բոլորովին չեմ ուզում, որ ինձ բամբասեն: Ես ձեր կնոջ կենդանութեան ժամանակն էլ օր ու գիշեր աշխատում էի և այժմ ծուլութիւն չեմ անում: Բայց մարդիկ բամբասում են, որ իբր թէ ես կեղծում եմ և կամենում եմ տանտիկին դառնալ: Աւելի լաւ է ես ինձ համար մի ուրիշ տեղ փնտռեմ:

ՀԵՆՁԷԼ. (Թեթեւացած): Այդ էք բոլորը: Այժմ հանգստացիր, ուրեմն:

ՀԱՆՆԷ. (Վերցնում է որեւէ թան, որպէսզի առիթ ունենայ դուրս գնալու): Ո՛չ, ո՛չ, ես դուրս կգնամ, դուրս կը գնամ: Ես այլ ես չեմ ուզում այստեղ մնալ: (Դուրս է գնում):

ՀԵՆՁԷԼ. (Նրա ետևից): Թող, ասում եմ, թող մարդիկ այնքան խօսեն, որքան ցանկանում են: Նրանց գործն էլ հէնց զրպարտութիւնն է: (Հանում է իր սիրտուկը եւ կախում յետոյ հառաչելով): Ա՛յսքան էլ մարդ վիշտ ունենայ:

ԶԻԲԷՆՀԱՐ. (Գամաց ներս է մտնում. նա ձեռքում ընկն է մի շեշ հանքային ջուր եւ մէկ ըածակ): Բարի լոյս, Հենչէլ:

ՀԵՆՁԷԼ. Զնորհակալ եմ ձեզանից, պարոն Զիբէնհար:

ԶԻԲԷՆՀԱՐ. Ես չխանդարեցի ձեզ:

ՀԵՆ. Իսէր Ըստծոյ: Այդ գոյք էք: Զատ ուրախ եմ:



Պէտք է նորից բժշկուել: Ասենք մարդս պէտք է վերջ 'ի վերջոյ մի բանից մեռնի:

ՀԵՆՁԷԼ. Չարունակ աղբիւրի ջուր խմեցէք, շուտով կառողջանաք:

ԶԻՔԵՆԶԱՐ. Այո, ես խմում եմ:

ՀԵՆՁԷԼ. Ոչ թէ Միւլբրուն կամ Օքերբրուն... Մեր աղբիւրը ամենալաւն է:

ԶԻՔԵՆԶԱՐ. Լաւ, այժմ մի ուրիշ բանի մասին խօսենք: (Խորատուաւ մտքերով վերցնում է մի քաղնոյ եւ նրանով խաղում է: Յետոյ նկատում է այդ եւ զարմացած կանգ է առնում: Նայում է Հենշէլին, նրա ցիլինդրին եւ յանկարծակի խօսում է): Այսօր ձեր կնոջ ծնունդն է:

ՀԵՆՁԷԼ. Այսօր պէտք է լրանար նրա երեսունն ու վեց տարին:

ԶԻՔԵՆԶԱՐ. Միթէ:

ՀԵՆՁԷԼ. Այո: (Լռութիւն):

ԶԻՔԵՆԶԱՐ. Այժմ աւելի լաւ է ես թողնեմ ձեզ, Հենշէլ, իսկ եթէ կարելի է, վաղը կամ ուրիշ օր, ես ձեզ հետ ցանկանում եմ մի գործի մասին խօսել:

ԶԻՔԵՆԶԱՐ. Այն հազար թալէրի հաշիւը...

ՀԵՆՁԷԼ. Այլեւ չխօսէք, խնդրեմ, պարոն Զիքէնհար, աւելի լաւ է թողնէք ձեզ մօտ մինչև ձմեռը: Տեսնում էք... Ես չեմ խաբում... Այդ փողը այժմ ինձ հարկաւոր չէ: Ինչ պէտք է անեմ. իսկ ձեզ մօտ, ես գիտեմ, նրանք աւելի ապահով կ'մնան:

ԶԻՔԵՆԶԱՐ. Ա՛խ որքան ես շնորհակալ եմ ձեզանից, Հենշէլ. դուք ինձ մեծ ծառայութիւն էք մատուցանում: Դուք ինքներդ գիտէք, որ ես միայն ամառն եմ փող ոտանում, իսկ այժմ ձեզ վճարելը, ճիշտ որ, ինձ համար շափազանց ծանր կ'լինէր:

ՀԵՆՁԷԼ. Տեսնում էք, հէնց դրա համար էլ մենք ձեզ հետ առաջուց խօսել ենք: (Լռութիւն):

ԶԻՔԵՆԶԱՐ. (Զայլելով սենեակում): Այո, այո, ես ինքս էլ երբեմն զարմանում եմ ինձանից, Հնայելով որ ես մեծացել եմ այս տան մէջ, բայց այնուամենայնիւ ես ուրախութեամբ թէկուզ այսօր կհեռանայի այս տեղից, եթէ կարողանայի պարտքերս բոլորովին վճարել ու վերջացնել:

ՀԵՆՁԷԼ. Ո՛չ, ես սիրով չէի հեռանալ այստեղից: Այն ժամանակ ես չէի իմանալ թէ ի՞նչ անել:

ԶԻՔԵՆԶԱՐ. Ո՛չ, ձեր գործը հեշտ է, Հենշէլ: Այն, ինչի դէմ ես պէտք է կռուէի, ձեզ համար դուցէ օգտակար լինէր:

ՀԵՆՁԷԼ. Ամեն մարդ մի բան ունի... Ո՛վ գիտէ, մեզանից որի դրութիւնը աւելի վատ է: Ես ունիմ մի վիշտ: Ախ երբ պէտք է անցնի դա... Ես մինչև այժմ էլ դեռ չեմ կարողանում խելքս գլուխս հաւաքել: (Լռութիւն):

ԶԻՔԵՆԶԱՐ. Ամեն բան իր ժամանակն ունի: Մարդ պէտք է ինքն իրան հաւաքի: Դուք պէտք է յաճախակի յարաբերութիւն ունենաք մարդկանց հետ ու երբեմն զրուցէք նրանց հետ գարեջուր խմելու ժամանակ: Վերջապէս հարկաւոր է գործով զբաղուել ու ոչ թէ միշտ հնթարկւել վշտերի ազդեցութեան: Մարդ պէտք է հաշտւի իր ճակատագրի հետ:

ՀԵՆՁԷԼ. Այգպէս է: Դուք ճշմարիտ էք ասում:

ԶԻՔԵՆԶԱՐ. Պարզ է որ ձեր կիներ մի շատ բարի ու բոլորովին ձեզ նուիրւած կին է եղել. այդ բանը կ'վկայեն ամենքը միաձայն: Բայց չէ՞ որ դուք մի կենդանի տղամարդ էք, Հենշէլ ու ձեր ծաղիկ հասակումն էք գտնուում: Դուք կեանքից դեռ շատ բան ունիք սպասելու: Ո՛վ գիտէ, թէ ինչ է դեռ սպասում ձեզ կեանքում: Մարդ, իհարկ է, չպէտք է մոռանայ իւր կնոջը, ընդհակառակը: Ասենք դուք այդպիսի բան էլ չէք կարող: Բայց դուք պէտք է առողջ դատէք: 25-ը որ այժմ ոչ մի բան այլևս չի օգնիլ: Ես արդէն վաղուց եմ հետևում ձեզ ու վերջապէս վճռել եմ ձեզ հետ բաց խօսել: Դուք այժմ արդէն չափազանց շատ էք ենթարկւում ձեր վշտին:



ՀԵՆՁԷԼ. Դուք ճշմարիտ էք ասում: Ես չեմ հերքում, պարոն Զիրէնհար: Բայց ես ինչ կարող եմ անել: Մարդ երբեմն չգիտէ ինչ անի: Եթէ ուզում ես աշխատել, այն ժամանակ կարծես մի ինչ որ բան պակասում է: Չորս աշքը միշտ երկուսից աւելի լաւ է տեսնում: Այժմ ամառը սկսուել է և կառքերը գլուխս կտանեն: Ո՛վ պէտք է այն ժամանակ տանը տնտեսութեամբ զբաղի: Ահա և հէնց այդ է իմ մտածողութեան գլխաւոր նիւթը:

ԶԻՔԷՆՀԱՐ. Բայց ես կարծում էի, որ այդ բանը հան-  
նէն կկատարի:

ՀԵՆՁԷԼ. Այո, բայց նա այժմ միանգամայն հրաժարուել է... Առանց կնոջ չափազանց վատ կլինի: Ոչ որի ալիս չի կարելի վստահել: Ահա և հէնց այդ բանի մասին եմ ես խո-  
սում:

ԶԻՔԷՆՀԱՐ. Ամուսնացէք, հենչէլ:

ՀԵՆՁԷԼ. Ամենից լաւն էլ այդ է, ես էլ այդպէս եմ կար-  
ծում: Ինչպէս կարելի է առանց կնոջ մնալ: Ինձ նման  
մարդը առանց կնոջ ոչինչ չի կարող անել: Ես կամենում էի  
գնալ վերև և խօսել տիրուհու հետ, թէ ես ինչ կասի ինձ...  
Եւ ինձ հետ բոլորովին անսպասելի կերպով զժբաղդութիւն  
պատահեց: Ես կլին վերցրի, բայց նա մեռաւ. ճիշտն ասած  
կառապանութեան գործն էլ չուտով կրկնի: Այստեղով չու-  
տով կանցնի երկաթուղին: Տեսնում էք մենք մեր կարողա-  
ցածի շափ փող վաստակեցինք և մտածում ենք մեզ համար  
մի փոքրիկ հիւրանոց գտնել, կարծեմ երկու տարուց յետոյ:  
Իսկ առանց կնոջ, ինչպէս կարող եմ այդ բանը գլուխ բե-  
րել:

ԶԻՔԷՆՀԱՐ. Բայց ձեր ամբողջ կեանքը հօ չպիտի կար-  
ճացնէք մենակութեան մէջ: Եւ ընդմիշտ այրի չպէտք է մըն-  
աք: Այդ անկարելի է հէնց միմիայն ձեր երեխայի համար:

ՀԵՆՁԷԼ. Այո, այդ բանը հէնց ինքս եմ ասում:

ԶԻՔԷՆՀԱՐ. Իհարկ է իմ գործը չէ այդ բանի մէջ խառ-

նելը: Բայց չէ՞ որ մենք հին բարեկամներ ենք, հենչէլ: Ս-  
պասել միմեայն նրա համար, որ մարդիկ խօսում են, ճշմա-  
րիտ որ չարժէ, դրանք բոլորը դատարկ բաներ են: Եւ եթէ  
լուրջ կերպով մտադիր էք ամուսնանալու, այդ դէպ-  
քում, որքան շուտ, այնքան էլ լաւ է թէ ձեզ և թէ ձեր  
երեխայի համար: Եւ իհարկ է, մարդ այդպիսի դէպքում չը-  
պէտք է իր գլուխը կորցնի: Իսկ եթէ այդ հարցի մասին  
լաւ մտածել էք, այն ժամանակ էլ ինչու էք գործը ձգձգում:  
(Քիչ լուրժինից յետոյ, որի ժամանակ Հենչէլը քորում  
էր ծոծրակը): Ի նկատի ունի՞ր դուք դրա համար որեւէ  
մէկին:

ՀԵՆՁԷԼ. Ի նկատի ունիմ, այ ասեմ ձեզ: Ունիմ, բայց  
զժբաղդաբար ես չեմ կարող նրան վերցնել:

ԶԻՔԷՆՀԱՐ. Ի՞նչո՞ւ համար:

ՀԵՆՁԷԼ. Այդ դուք էլ գիտէք...

ԶԻՔԷՆՀԱՐ. Ե՛ս: Ո՞րտեղից գիտեմ ես:

ՀԵՆՁԷԼ. Դէհ, մի լաւ յիշեցէք:

ԶԻՔԷՆՀԱՐ. (Գլուխը շարժելով). Ճշմարիտ, չեմ յիշում:

ՀԵՆՁԷԼ. Բայց այն էլ իմացէք, որ ես կնոջս խոտտացել  
եմ...

ԶԻՔԷՆՀԱՐ. Այ թէ ի՞նչ: Դուք ձեր աղախին հաննէի  
մասին էք ասում: (Լուրժին):

ՀԵՆՁԷԼ. Ես չառ եմ մտածել դրա մասին: Ինչո՞ւ համար  
եւ մաշեմ: Երբեմն գիշերները զարթնում և ամբողջ ժամե-  
րով չեմ քնում, որովհետեւ ես միշտ միեկնայն բանի մասին եմ  
մտածում: Ես ոչ մի կերպ չեմ կարողանում այդ մտքիցը  
բաժանուել: Նա լաւ աղջիկ է: Մի քիչ նա ինձ պէս ծերու-  
նու համար ջահել է, բայց կարող է չորս տղամարդու գործ  
կատարի: Եւ Դուստրինն էլ հարազատ մօրից վատ չի պահ-  
պանիլ: Վերջապէս նա ինձանից անհամեմատ աւելի լաւ հա-  
շիւ գիտէ: Հաշուի իսկական մերենայ է նա: Իւրարանջիւր  
ֆինիկն էլ լաւ յիշում է, թէկուզ դրա մասին նրան երկու ա-



միտ յետոյ հարցնես: Ի՞նչ ես կարծում, նա երկու փաստաբանի խելք կարող է սովորեցնել:

**ԶԻՖԷՆՀԱՐ.** Լաւ, եթէ դուք նրան այդպէս վստահանում էք...

**ՀԵՆՁԷԼ.** Նրանից աւելի լաւ կին ես չեմ կարող գտնել... Սակայն ես չեմ կարողանում վճռել... (Հռութիւն):

**ԶԻՖԷՆՀԱՐ.** Այո, այո, այժմ ես միայն ինչ որ բան եմ յիշում: Այդ բոլորովին վերջին ժամանակն էր... Բայց ես ձեզ պարզն ասեմ, ոչ ես գրան այնքան էլ լուրջ նշանակութիւն չեմ տալիս... Ձեր կինը այն ժամանակ սաստիկ բորբոքած էր և դրա ամենամեծ պատճառը նրա հիւանդութիւնն էր... Բայց իմ կարծիքով, գլխաւոր հարցը դրանում չի կայանում. գլխաւոր հարցը այն է, թէ ձեզ համար իսկապէս յարմար կին է Հաննէն: Անկասկած նա շատ լաւ յատկութիւններ ունի: Բայց նրա մէջ մի բան կայ, որ ինձ դուր չի գալիս: Ասեմք մեզանից ով պակասութիւններ չունի: Բայց չէ՞ որ ասում են, իբր թէ նա երեխայ ունի:

**ՀԵՆՁԷԼ.** Այո, ես տեղեկութիւններ եմ հաւաքել: Եթէ նոյն իսկ այդպէս էլ լինի, ինձ համար միևնոյն է: Միթէ նա ինձ պէտք է սպառէր: Նա ինձ հէնց այն ժամանակը չէր ուզում ճանաչել: Հասունացած տանձերը իրենք իրենց են ծառերից վայր ընկնում: Ո՛չ, դրա մասին ես չէի էլ ուզում մտածել:

**ԶԻՖԷՆՀԱՐ.** Թող այդպէս լինի: Մնացածը այնքան կարևոր չէ, այսինքն, իհարկէ, ես հասկանում եմ, որ այդ հանգամանքը ձեզ համար նշանակութիւն կունենար... Բայց, յամենայն դէպս արդէն ժամանակ է ձեզ աղատելու այդ բոլորից: Չամուսնանալ հէնց դրա համար, ճիշտ եմ ասում, Հեննէլ, անխելացի բան կլինէր:

**ՀԵՆՁԷԼ.** Ես ինքս էլ այդ հարցի մասին հազար անգամ մտածել եմ: Չէ՞ որ նա ինձ միշտ բարիք է ցանկացել: Ես խօսում եմ իմ կնոջ մասին, երբ նա առողջ էր: Նա այժմ

էլ չի ցանկանալ իմ ճանապարհը կտրել: Որտեղ էլ նա լինի, նա միշտ ինձ օգտակար բան կցանկանայ:

**ԶԻՖԷՆՀԱՐ.** Բոլորովին ճշմարիտ է:

**ՀԵՆՁԷԼ.** Այսօր ես նրա գերեզմանի վրա էի... Տիրուհին նոյնպէս պատուիրել էր մի պսակ դնելու... Ես մտածեցի գնալ նրա մօտ: Կարծիքով, որ այդ խնդրի վերաբերմամբ գուցէ մի որոշման գամ... Կին, ասացի ինքս ինձ, տուր որեւէ նշան: Այո կամ ոչ: Ինչպէս պատուիրես, ես այնպէս էլ կանեմ: Կէս ժամ շարունակ ես այդպէս կանգնած էի... Ես աղօթում էի և ամեն ինչ նրան պատմում... Այնպէս... մտքերով... Իհարկէ... երեխայի և հիւրանոցի մասին էլ ուզում էի նրանից խորհուրդ իմանալ, բայց ոչ մի նշան չեղաւ:

**ՀԱՆՆԷ.** (Երբ է մտնում եւ կողմնակի հայեացք է ձգում խօսողների վրայ, իրեն ծեւացնելով իբր թէ զբաղւած է: Վերցնում է նստարանը եւ վստահանի տախտակը եւ զրնում դէպի վառարանը):

**ԶԻՖԷՆՀԱՐ.** (Հենշէլին): Թող մեռելները հանգիստ մընան: Իսկ դուք կենդանի էք, չէ՞, Հենշէլ: Ինչ գործ ունիք դուք նշանների և հրաշքների հետ: Չէ՞ որ մենք մեր խելքով պէտք է գործենք: Արէք այնպէս, ինչպէս ուզում էք: Դուք էք ձեր նաւի ղեկավարը: Թողէք նաւահանգստում ձեր բոլոր կասկածները և խօհերը: Որքան ես շատ եմ մտածում ձեր դրութեան մասին, այնքան էլ նա ինձ աւելի լուրջ է թւում:

**ՀԵՆՁԷԼ.** Դու ինչ ես ասում դրա մասին, Հաննէ:

**ՀԱՆՆԷ.** Չգիտեմ, ես ինչ եմ իմանում, թէ դուք ինչի մասին էք խօսում:

**ՀԵՆՁԷԼ.** Լաւ, ես յետոյ քեզ կասեմ:

**ԶԻՖԷՆՀԱՐ.** Մնաք բարով, Հենշէլ, ցտեսութիւն: Աստուած ձեզ բաղդաւորութիւն տայ:

**ՀԵՆՁԷԼ.** Յոյս ունիմ:

**ԶԻՖԷՆՀԱՐ.** Ձեզ համար ես երբէք չեմ վախենում: Ձեր ձեռքը միշտ բաղդաւոր է լինում: (Դուրս է գնում):



ՀԵՆՁԷԼ. Բայց աչքով չպէտք է տալ, պարոն Զիրէնհար-  
ՀԱՆՆԷ. Իսկ մենք թրքեր երեք անգամ. թիւֆ, թիւֆ,  
թիւֆ: (Լռութիւն): Ձեմ կարող լուել, որ ուզում էք... Դուք  
արդէն չափազանց բարի էք:

ՀԵՆՁԷԼ. Ինչի մասին ես խօսում, հա:

ՀԱՆՆԷ. Ձեզ բոլորովին պէտք է սրբեն ու մաքրեն, ան  
թէ ինչի մասին:

ՀԵՆՁԷԼ. Դուցէ դու կարծում ես, որ նա ինձանից նո-  
րից փող էր խնդրում:

ՀԱՆՆԷ. Էլ ուրիշ ինչ կարող է լինել: Ամօթ չէ նրա  
համար աղքատ մարդկանցից փող կորզելը:

ՀԵՆՁԷԼ. Դու չգիտես, թէ ինչ ես խօսում, Հաննէ:

ՀԱՆՆԷ. Օհ, ես չափ լաւ գիտեմ:

ՀԵՆՁԷԼ. Դու ոչինչ չգիտես և չես էլ կարող իմանալ-  
կայ ժամանակ, երբ կհասկանաս, այո... Իսկ այժմ ես գնում  
եմ գարեջրատուն մի բաժակ գարեջուր խմելու և այն էլ այս  
երկու ամսւայ ընթացքում առաջին անգամ. յետոյ միառին  
կճաշենք և ապա ճաշի ժամանակ կխօսենք: Այն ժամանակ  
կտեսնենք, թէ ինչպէս անենք որ... դուցէ դու չես ցանկա-  
նում:

ՀԱՆՆԷ. Դուք ինքներդ ասացիր, որ յետոյ կտեսնենք:

ՀԵՆՁԷԼ. Եւ այժմ էլ ասում եմ, կտեսնենք (դուրս է  
գնում. լռութիւն):

ՀԱՆՆԷ. (Շարունակուել է անվրդով աշխատել, քայց  
հէնց որ անյայտանում է Հենշէլը, նա ուրախանում է, սըր-  
քում է ձեռքերը, վայր է ձգում զոգնոցը եւ հպարտանա-  
լով ինքն իրան ասում): Իսկ այժմ ես ձեզ ցոյց կտամ,  
զգուշացէք:

## ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Առաջին երկու գործողութիւնների միևնոյն սենեակը: Նոյն-  
քեր ամսի վերջին օրերի մի գիշերը. վառւում է մի փոքրիկ վա-  
ռարան, իսկ սեղանի վրայ դրուած է վառւած մոմը: Սենեակի  
միջին դուռը փակ է: Խուլ կերպով վերևում լսում է պարի ե-  
րաժշտութեան ձայնը: Հաննէն, այժմ իբրև սիկին Հեմսթրի, ինչ  
որ բան է գործում սեղանի մօտ: Նա լուռ ու կանոնաւոր կանգնած  
է և կուրծքը ծածկել է կարմիր թաշկինակով:

ՀԻԼԴԵՐԱՆԴ. (Մի կարճահատակ եւ նիհար դարձին.  
Ներս է մտնում): Բարի երեկոյ, տիկին Հենշէլ: Իսկ մրտեղ  
է ձեր ամուսինը:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Բրեւիտու է գնացել: Նա այժմ երեք նոր ձի  
է պահում:

ՀԻԼԴԵՐԱՆԴ. Ուրեմն նա այսօր չի վերադառնալ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Երկուշաբթի օրից առաջ չի վերադառ-  
նալ:

ՀԻԼԴԵՐԱՆԴ. Իսկ այսօր շաբաթ է... Մենք տախտակի  
կառքը բերել ենք, բազումն է, դահլիճի տակ. կառքի  
բոլոր չորս անիւների երկաթներն էլ պէտք է փոխենք,  
իսկ հաուֆէն այստեղ չէ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Նա արդէն վաղուց ի վեր մեզ մօտ չի  
լինում:

ՀԻԼԴԵՐԱՆԴ. Ինչ եմ ես էլ յիմարութիւններ դուրս  
տալիս. ես ցանկանում էի նոր ձիապանի մասին խօսել. այս-  
տեղ է ձվարցը:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Նա էլ Բրեւիտու է գնացել:



ՀԻԼԴԵՖՐԱՆԻ. Այդպէս, այդպէս. Հառափէին ես ճանաչում եմ, նա յաճախ է գալիս դարբնոցը, երբ մենք ձիեր ենք պայտում. նա մինչև այժմ էլ տեղ չէ գտել:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ըսում են, որ նա այժմ սկսել է խմել: ՀԻԼԴԵՖՐԱՆԻ. Կարծեմ. ուրիշ կերպ էլ չի կարող լինել: Նրա դրուժիները այժմ շատ վատ է, ոչ ոք չէ ցանկանում նրան տեղ տալ: Այն ինչ է վերևում:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Պարում են, այնտեղ ամառային կլուբն է: ՀԻԼԴԵՖՐԱՆԻ Ի՞նչ էք ասում, տիկին Հենչէլ, չգնանք մենք էլ այնտեղ: Ինչո՞ւ համար մենք էլ ձեզ հետ վախ չը պարենք:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Որպէսզի ամենքն էլ իրանց աչքերը չըռեն մեզ վրայ. իսկ ինչո՞ւ համար էք հարցնում Հենչէլին, վարպետ:

ՀԻԼԴԵՖՐԱՆԻ. Ոչինչ, գաւառական խորհրդի նախագահը մի կատաղած ձի է ուղարկել, որին չենք կարողանում պատել, դրա համար էլ ուզում էի խնդրել Հենչէլին, եթէ Հենչէլն էլ չկարողանայ զսպել նրան, այն ժամանակ կշարտենք դուրս կորչի: Մնաք բարով, տիկ. Հենչէլ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Գնաք բարով (*Հիլդեբրանդը դուրս է գնում՝ նւաղանջ է դնում նախասենեակի աղմուկին*): Այս ի՞նչ շրթկշրթկոց է: (*Մօտենում են դուռը քաց է անում*). Ո՞վ է այնտեղ աղմուկ հանողը:

ՖՐԱՆՑԻՍԿԱ (*Պարելով ներս է մտնում*). Ճանապարհ, ճանապարհ, տիկին Հենչէլ: Ես ժամանակ չունիմ: (*Պտտում է սեղանի շուրջը վախի երաժշտութեան ներդաշնակութեամբ*):

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Թիւֆ, անպիտան: Ի՞նչ ես անում: Կատաղած չուն է քեզ. կծել, ինչ է: (*Փրանցիսկան շարունակում է վախ երգելով պարել* :)

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. (*Անելի զուարճանալով*:) Տէր-Աստուած ինչ է պատահել քեզ հետ: Կարծեմ դու բոլորովին կգժևս, աղջիկ: (*Երաժշտութիւնը ընդհատում է*: Փրանցիսկան թուլացած ընկնում է աթոռի վրայ):

ՖՐԱՆՑԻՍԿԱ. Ես պատրաստ եմ մինչև մահս պարելու, տիկին Հենչէլ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. (*Ժիծաղելով*): Իհարկ է: Մանաւանդ եթէ այդպէս պտտես: Մարդ ծիծաղից տրաքում է, երբ քեզ նայում է:

ՖՐԱՆՑԻՍԿԱ. Իսկ դուք բոլորովին չէք պարում:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ե՞ս: Ես պարում եմ: Իհարկէ պարում եմ. պատահել է որ մի գիշեր պարելով փշացրել եմ մի զոյգ նոր կոշիկներս:

ՖՐԱՆՑԻՍԿԱ. Տիկ. Հենչէլ, եկէք միասին պարենք:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Գնա՞ վերև և նրանց հետ պարիր:

ՖՐԱՆՑԻՍԿԱ. Այո, եթէ ես միայն համարձակէի, բայց գիտէ՞ր ինչ, ես կամաց կընամ վերև... երաժիշտների խմբի հետ... Եղել էք դուք երբեքիցէ վերևում: Երաժիշտների խմբի պարահանդիսի դահլիճում: Որտեղ տեղաւորուած են չորացրած սալորի քսակները: Կթաղնեմ այնտեղ և գէպի ցած կնայեմ: Այնտեղ էլ սալոր կուտեմ և միննոյն ժամանակ դէպի ներքև կնայեմ: Եւ ի՞նչու համար ես չպիտի նայեմ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Բայց յանկարծ Զիբէնհարը ձեզ կարող է խնդրել դուրս գնալու:

ՖՐԱՆՑԻՍԿԱ. Իսկ ես այնուամենայնիւ կշարունակեմ նայել: Ինձ համար միևնոյն է: Իսկ եթէ որևէ օրիորդ սկսի պարել պարոն Զիբէնհարի հետ, այն ժամանակ ես վերեւից սալորի կորիզ կձգեմ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ինչպէս երևում է, դու բոլորովին սիրահարուել ես Զիբէնհարի վրայ:

ՖՐԱՆՑԻՍԿԱ. Իսկապէս նա ամենքից էլ լաւ է: (*Հստակ է երաժշտութեան ձայնը*): Ա՛յ, նորից սկսում է. այժմ պոլկա են պարում: (*Նորից պարում է*): Ա՛խ, ինչպէս կցանկանայի ես այժմ պարոն Զիբէնհարի հետ պարել: Նա նոյն իսկ չէր կարող իմանալ, թէ ես ինչպէս համբուրեցի, ա՛յ այդպէս, յանկարծ:



ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Իսկ ինձ համար Զիրէհնարը չափազանց պառաւ է:

ՓՐԱՆՅԻՍԿԱ. Զէ որ ձեր ամուսինն էլ նոյնքան պառաւ է, տիկին Հենշէլ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Խնդրեմ, խնդրեմ: Ամուսինս հինգ տարեկանով աւելի երիտասարդ է, հասկանում ես:

ՓՐԱՆՅԻՍԿԱ. Բայց արտաքին տեսքով նա աւելի պառաւ է: Նա պառաւ է և կնճռոտած դէմք ունի: Թիւֆ, ոչ, ես չէի ցանկանալ նրան համբուրել:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Կորիր, կորիր, ապա թէ ոչ կվերցնեմ ցախաւերը և ախպէ՛ս... Մէկ էլ դու համարձակւիր ամուսնուս ծաղրել: Որտեղից այժմ ես կարող եմ նրանից աւելի լաւ ամուսին գտնել: Սպասիր, կծերանաս և այն ժամանակ կհասկանաս, թէ ի՞նչ է նշանակում այստեղ ամուսին գտնելը:

ՓՐԱՆՅԻՍԿԱ. Ես երբէք չպէտք է ամուսնանամ. ես կըսպասեմ, մինչև որ այստեղ կգայ նորը վարժուէր ունեցող մի որևէ երիտասարդ, աւելի լաւ կլինէր մի առաւ, որ ամառը մեր ջրերն է գալիս... Եւ նա ինձ իր հետը կտանէր հեռու, շատ հեռու, մինչև աշխարհիս ծայրը: Ես էլ ցանկանում եմ իմանալ, թէ ի՞նչ է կատարւում աշխարհում: Ուզում եմ տեսնել Փարիզը... Այն ժամանակ տիկ Հենշէլ, ես ամեն բան կնկարագրեմ քեզ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ես էլ եմ կարծում, օրիորդ, որ դու երբևէ պէտք է փախչես այստեղից:

ՓՐԱՆՅԻՍԿԱ. Այդ բանի մէջ դուք էլ կարող էք հաւատացած լինել: Պարոն Զիրէհնարն էլ է եղել Փարիզում, և այն էլ յեղափոխութեան ժամանակ: Ինչպէս նա լաւ պատմում է: Ա՛խ, ինչպէս ես էլ կցանկանայի մասնակցել որևէ յեղափոխութեան, բարրիկազներ կազմել...

ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻԻ ԶԱՅՆԸ. Փրանցիսկա, Փրանցիսկա:

ՓՐԱՆՅԻՍԿԱ. Սուս... Լռեցէք: Նորից գնալ ծառայել

գարեջրատանը: Այնչափ դժուար եմ ես այնտեղից... Հեմ ուզում չեմ ուզում...

ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻԻ ԶԱՅՆԸ. Փրանցիսկա:

ՓՐԱՆՅԻՍԿԱ. Զէ որ հայրիկի կամ մայրիկի գործն է. կամ եթէ այդպէս էլ չեն ուզում, գարեջրատան համար առանձին ծառայող վարձեն: Ես չեմ ցանկանում, որ ինձ գարեջրատան ծառայող դարձնեն:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Լաւ, այդ այնքան էլ վատ չէ:

ՓՐԱՆՅԻՍԿԱ. Այն, ուրիշ բան կլինէր, եթէ այնտեղ նըշանաւոր մարդիկ լինէին, բայց չէ որ այնտեղ միայն ծառայողներ, կառապաններ և հանքագործներ լին յաճախում: Ո՛չ, արդէն շատ շնորհակալ եմ: Այդ իմ ուղած բանը չէ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Եթէ ես բո տեղը լինէի, լաւ դործ կանէի, փողով լաւ նուէրներ կստանայի նրանցից և կ'տնտեսէի աղաքայի համար:

ՓՐԱՆՅԻՍԿԱ. Ո՛չ, խնդրեմ, սե փող ես չեմ վերցնիլ: Ա՛խ, ուրիշ բան է, եթէ պարոն Զիրէհնարը, ճարտարապետը կամ գոկտօր Վալէնտինէրը ինձ որևէ բան ընծայեն... այն ժամանակ ես կվերցնեմ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ինչպէս չէ: Խնձորը իր ծառից հեռու է վայր ընկնում: Այդպէս են թէ մայրը և թէ հայրը: Մի-թէ դուք գարեջրատան վրայ հսկում էք: Եթէ դուք գործը այնպէս տանէիք, ինչպէս հարկաւոր է, այն ժամանակ դուք վաղուց ուրիշներին տոկոսով փող կ'տայիք:

ՓՐԱՆՅԻՍԿԱ. Մենք ձեզ նման ազատ չենք:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ես ազատ չեմ, այլ միայն կոպէկներ եմ տնտեսում:

ՓՐԱՆՅԻՍԿԱ. Լաւ, ամենքն էլ ասում են, որ դուք ազատ էք:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Բայց ես թրել եմ այդ ամենքի վրայ էլ, հասկանում ես: Քեզ վրայ էլ նոյնպէս: Իսկ այժմ կորիր այստեղից: Զգուեցրեց ինձ անտեղի խօսակցութիւնդ:



Այսուհետև այստեղ այլևս չերևաս. ես քեզ չեմ կարօտել: Աւելի լաւ է, երբ մարդ ոչ տեսնում և ոչ էլ լսում է ձեզ և ձեզ նման բաղդախնդիրներին:

**ՔՐԱՆՑԻՍԿԱ.** (Դռան միջից վերադառնալով եւ շատ կծու ճայնով): Բայց գիտէք, թէ էլ ինչ են խօսում ձեր մասին:

**ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ.** Ձեմ էլ ուզում իմանալ: Կորիւր այստեղից: Աւելի լաւ է այնպէս անես, որ քո մասին չխօսեն: Մենք արդէն գիտենք, թէ դու ինչպիսի յարաբերութեան մէջ ես Զիբէնհարի հետ: Դուք երկուրդ արդէն գիտէք, ինչպէս և ես: Եթէ ոչ դուք արդէն քսան անգամ այստեղից հեռացած և դարեջրատունը թողած կ'իյնէիր... Զիբէնհարին մենք լաւ ենք ճանաչում:

**ՔՐԱՆՑԻՍԿԱ.** Թիւֆ, թիւֆ, թիւֆ (Փախչում է):

**ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ.** Բաղդախնդիր, ապականուած և ուրիշ ոչինչ:

(Միջին դուռը քաց է մնում: Այդ դռնով նրանում է, թէ ինչպէս վերելից իջնող Զիբէնհարը պատահում է նախասենեակից եկող Ժորժին: Վերջինս Վիէննայի ձեռով է հագնուած. ունի գլխարկ, ձեռափայտ, երկար վերաբրկու եւ վզնոց):

**ԶԻԲԷՆՀԱՐ.** Ի՞նչ էք ուզում այստեղ:

**ԺՕՐԺ.** Ներեցէք, ես գործ ունիմ կառապան Հենշէլի հետ:

**ԶԻԲԷՆՀԱՐ.** Կառապան Հենշէլը տանը չէ: Դուք, կարծեմ, արդէն մի քանի անգամ ինձանից լսել էք, որ իմ տանը ձեզ համար տեղ չըկայ: Իսկ եթէ այդ բանը դուք կրկին մոռանաք, այն ժամանակ ես ձեր յիշողութիւնը թարմացնելու համար ժանդարմի շնորհիւ միջոցների կ'գիմեմ, հասկանում էք:

**ԺՕՐԺ.** Թոյլ տուէք, պարոն Զիբէնհար: Ես ձեզ մօտ

չեմ գալիս: Այդ մարդիկ ապրում են ձեր տանը: Դուք չէք կարող ինձ մեղադրել որ և է ստորութեան մէջ:

**ԶԻԲԷՆՀԱՐ.** Զգուշացէք: Եթէ ես ձեզ այստեղ միանգամ էլ պատահեմ, այն ժամանակ ես կը պատուիրեմ ծառաներիս ձեզ դուրս վաճառելու: Ի՞նչ կատի ունեցէք այդ (Դուրս է գնում):

**ԺՕՐԺ.** (Հայհոյելով ներս է մտնում սենեակը): Դէհ մի փորձիր: Ցեաող կտեսնենք:

**ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ.** (Բարկացած փակում է դուռը, հագնւ զսպելով իւր կատաղութիւնը Զիբէնհարի դէմ): Թող մի փորձի: Մենք դեռ այստեղ ենք: Սա մեր սենեակն է և ոչ թէ նրանը, իսկ այստեղ եկողը մեր հիւրն է: Նա ոչ մի խօսք էլ չէ կարող ասել:

**ԺՕՐԺ.** Կտեսնենք, կտեսնենք: Այդ կարող է նրան թանկ նստել: Եթէ այդ բանը ես, ուր որ հարկնէ, յայտնեմ, նրան փող կ'նստի: Նա մի անգամ էլ լաւ կերել է Ալֆօնսից, որ սրանից երկու տարի առաջ այստեղ էր ծառայում: Իսկ ինձանից նա աւելի լաւ կուտէ: Ես երեսուն թաւեր տուղանքով չեմ բաւականանալ:

**ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ.** Նրա գրպանում այգրան էլ չկայ: Սոված սատկում է: Նա ամեն մարդու պարտական է: Ամեն տեղ խօսում են նրա պարտքերի մասին: Այդ բանը երկար չի տևիլ: Հէնց որ նրա պարտքերը մի բիշ էլ բարդուցին, նրան իր տանից դուրս կ'վաճառեն և ոչ թէ ինքը ուրիշներին:

**ԺՕՐԺ.** (Հանում է իւր վերաբրկուն, կախում է գոլխարկը եւ մաքրում է իւր սիրտուկը եւ պանծալունը): Իհարկէ: Այդ բանը ոչ որի համար այլևս գաղտնիք չէ: Կլուրում դրա մասին արդէն ամենքն էլ խօսում են: Իմ սերկայ տէրս նրան տանել չէ կարող, մինչև անգամ կատաղում է նրա անունը լսելիս: (Գրպանից հանում է մի փոքրիկ հայելի եւ սանր եւ մի քիչ կոկում է իրան): Այդ Զիբէն-



հարբ, ասում է նա շարունակ, կարծես ատամներին տակն է մնացել:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Իհարկ է, հասկանալի բան է:

ԺՈՐԺ. Ի դեպ, Հաննէ, ունիս դու որ և իցէ տաքաց- նոյ բան:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ինչո՞ւ համար երեկ չեկար:

ԺՈՐԺ. Գու՛ կարծում ես, որ ես ամեն օր կարող եմ գուրս գնալ: Ես այսօր էլ զօռով եմ օձիքս ազատել: Ե- րեկ մինչև գիշերուայ ժամը երեքը նստած էինք:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ի՞նչ է պատահել:

ԺՈՐԺ. Հրդէհաշիջային ընկերութեան նիստն էր: Նրանք նոր խողովակ էին գնել, ցանկանում էին լուսաւորութեան հանդէս կազմել և դրա համար էլ նիստ կար:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Նրանք էլ միշտ աշխատում են որ և է առիթ գտնել քէֆ անելու և հարբելու: Իսկ ես մենակ նստած մինչև ուշ գիշերը քեզ էի սպասում: Յանկարծ ազ- մուկ եմ լսում... չգիտեմ ինչ պատահեց... լուսամուտին թռչուն դարձուեց, թէ ինչ: Ես կարծեցի, որ երևի դու մօ- տեցել ես լուսամուտին, բաց արել: Բայց յետոյ տեսնում եմ ոչ ոք չկայ: Այդ բանը ինձ այնքան անհանդուատեց, որ մինչև արշալոյսը չկարողացայ քնել: (Թեթեւ կերպով քունց- քով զարկում է սեղանին): Գիտես, ես մինչև այժմ քեզ վրայ դեռ բարկացած եմ:

ԺՈՐԺ. Բաւական է: Ինչու համար մենք մեզ քայքայենք: (Գրկում է նրան) Բոլորովին հարկաւոր չէ: Ինչո՞ւ համար:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. (Մի կողմ տանելով նրան): Այդպէս էլ բան կլինի: Չգիտեմ, ճշմարիտ, թէ ինչո՞ւ ինձ երբէք ոչ մի բան չէ յաջողւում: Ամբողջ շաբաթներով Հենչէլը տա- նը նստում է և երբ նա կարճ ժամանակով այստեղից հեռա- նում է, այնուամենայնիւ ժամանակը էլի դուր կորչում է:

ԺՈՐԺ. Իսկ այսօր մերն է, չէ: Նա, կարծեմ, երկու- շաբթի օրը հազիւ վերադառնայ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ո՞վ գիտէ: Ճիշտն ասած, չգիտեմ:

ԺՈՐԺ. Ինչո՞ւ համար: Չեմ հասկանում:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Տղամարդը միշտ պէտք է տանը նստի: Առաջ այդպէս չէր, այլ որտեղ լաւ էր լինում: Պատա- հել է, որ նա ամբողջ շաբաթներով ճանապարհորդել է, իսկ այժմ անվերջ մրթմրթում է, եթէ նոյն իսկ մի գիշեր տանը չէ գիշերում: Եթէ նա ասում է, որ երեք օրից յե- տոյ միայն կվերադառնայ, մէկ էլ տեսար երկրորդ օրը ար- գէն տանն է: Լսում ես: Երևի նրանք են: Էլ ով կլինի, եթէ ոչ նա:

ԺՈՐԺ. (Ականջ դնելով, հանդարտ): Այ գրողը տանի նրան: Անիծեա՛լ քաւթաւ: Անաստու՛մ: Հազիւ էի մի քիչ տաքացել և այժմ պէտք է դուրս գնամ: Իսկ ես, ճիշտն ասած, ուրիշ պլաններ ունեմ: (Հագնում է վերաբերուն եւ վերցնում է գլխարկը):

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. (Խլում է նրա ձեռքից գլխարկը): Ս- սպասի՛ր: Ինչո՞ւ համար ես գնում: Հենչէլից պիտի վախենամ, ինչ է: Նա իմ ստաներին տակ թոյ քարշ գալ, ահա թէ ինչ: Այդ բանը ինձ դուր է գալիս: Այ, եթէ երէկ եկած լինէիր, մեզ ոչ ոք չէր խանգարիլ, ոչ Հենչէլը և ոչ էլ Զի- րէնհարը: Իսկ այսօր, կարծես ամենքն էլ գիտմամբ եկան, այ գրողը տանի նրանց: (Յերս է մտնում ձիավաճառ Վալտերը, որ մի գեղեցիկ, քաջ եւ մօտ 40 տարեկան տղամարդ է: Նա իր գլխարկը ծածկել է քաշլուղով, հագել է վերնազգեստ, որսորդական երկար գուլաւներ, երկար կոշիկներ եւ ձեռնոցներ):

ՎԱԼՏԷՐ. Տիկին, ամուսինդ էլ բազումն է: Բարի երե- կոյ: Ես միայն մի րոպէով մտայ այստեղ քեզ բարեկու: Այս րոպէիս էլ կ'գնամ ձիու մօտ: Զիւրի այնպիսի առնտուր ունեցանք, որ ուղղակի հրաշալի էր: Տիկին, ամուսինդ էլ քեզ համար ընծայ է բերել:



ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Իսկ ես կարծում էի, որ դուք երկու-  
շաբթի օրը կ'վերադառնար:

ՎԱԼՏԷՐ. Այդպէս էլ պէտք է լինէր: Մենք մինչև Կանտ  
ենք ձիով եկել: Այնտեղ պէտք է ձիերին պալտել տայինք,  
ապա թէ ոչ նրանք բոլորովին կհիւանդանային: Երևակա-  
յեցէք, որ ճանապարհը սառցային էր:

ԺՈՐԺ. Երկաթուղով, իհարկ է, աւելի շուտ կ'զայիր:

ՎԱԼՏԷՐ. Սա ընչացն է: Չեմ տեսնում: Ա՛հ, Ժորժն է:  
Ասացէք, խնդրեմ: Իսկական բարոն է դարձել նա:

ԺՈՐԺ. Այո, որովհետև «Աստղ» հիւրանոցում կարելի է  
շատ փող վաստակել և դրա համեմատ էլ հարկաւոր է միշտ  
մաքուր հագնուել: Այնտեղ ես վերջին հազուստս էլ հագնում  
էի, վերջի վերջոյ քիչ էր մնացել որ մերկանայի: Իսկ այս-  
տեղ եկամուտ շատ կունենամ: Տեսնում էք, դրա համար էլ  
այնպէս եմ հագնուել, ինչպէս որ հարկաւոր է:

ՎԱԼՏԷՐ. Իսկ այժմ, տիկին, գուշակիր թէ ամուսինդ  
քեզ համար ինչ ընծայ է բերել:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ի՛նչ է բերել:

ՎԱԼՏԷՐ. Պէտք է ուրախ լինիս:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Կտեսնենք:

ՎԱԼՏԷՐ. Դէհ, մնաք բարով: Եթէ ոչ կինս կուտի ինձ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Գիտաս բարով:

ՎԱԼՏԷՐ. Յտեսութիւն:

ԺՈՐԺ. Ես էլ եմ ձեզ հետ գալիս: Մնաք բարով, տի-  
կին Հենչէլ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Բայց միթէ դուք չէք ուզում Հենչէլի  
հետ խօսել:

ԺՈՐԺ. Ուրիշ անգամ:

ՎԱԼՏԷՐ. Եթէ դուք ցանկանում էք նրա հետ խօսել,  
աւելի լաւ է սպասեցէք մինչև վաղը: Այսօր նա իր զլխում  
ուրիշ բան ունի... Դիտես, տիկին, թէ ինչ է նա քեզ հա-  
մար բերել:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ինչ կարող է նա բերել: Ինչու ես զուր  
խօսում:

ՎԱԼՏԷՐ. Նա քեզ համար մի աղջիկ է բերել, ահա  
թէ ինչ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ի՛նչ: Ի՛նչ ես ասում: Ես չլսեցի:

ՎԱԼՏԷՐ. Մենք գնացինք Կլօլսդորֆ և այդ աղջկան  
մեզ հետ բերինք:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Բայց ի՛նչ էք ասում: Հարբած էք եր-  
կուսդ էլ, ինչ է:

ՎԱԼՏԷՐ. Ճշմարիտ եմ ասում:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Բայց ո՞ւմ վերցրիք և բերիք ձեզ հետ:

ՎԱԼՏԷՐ. Սկզբում նա ինձ ոչինչ չէր ասել: Իսկ այն-  
տեղից յանկարծ գնացինք Կլօլսդորֆ և մտանք գարեջրա-  
տուն:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Յետոյ:

ՎԱԼՏԷՐ. Յետոյ ես և Հենչէլը նստեցինք այնտեղ: Յան-  
կարծ ներս մտաւ հայրդ, որի յետևից էր ընկել նաև այդ աղ-  
ջիկը:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Նա իմ աղջիկը չէ:

ՎԱԼՏԷՐ. Այդ արդէն ես չգիտեմ. ես միայն իմանում  
եմ, որ այդ աղջիկն այժմ այստեղ՝ բազումն է... Հենչէլը  
մօտեցաւ հօրդ և ասաց. «Ինչ լաւ աղջիկ է»: Յետոյ Հենչէլը  
նրան բարձրացրեց և սկսեց փափայել. «գնանք ինձ հետ,  
ուզում ես»: Իսկ աղջիկը իսկոյն և եթ պատասխանեց.  
«այո, ուզում եմ»:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Յետոյ հայրս:

ՎԱԼՏԷՐ. Չէ՛ որ հայրդ Հենչէլին չէ ճանաչում:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Աւելի լաւ: Յետոյ...

ՎԱԼՏԷՐ. (Դառնալով աւելի դէպի Ժորժին). Յետոյ  
էլ ինչ. Հենչէլը աղջկան տարաւ փողոց և ասաց հօրդ. «տա-  
նեմ աղջկան կառքով մի քիչ ման ածեմ»: Իսկ աղջիկն էլ  
ասում է. «գնանք, գնանք»: Հենչէլը նստեց իր ձիու վրայ,



ես աղջկան տուի նրան և նա «մնաք բարով ասելով» եկաւ այստեղ:

**ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ.** Եւ հայրս թոյլ տուեց այդ:

**ՎԱԼՏԷՐ.** Եւ ինչ կարող էր նա անել: Ամբողջ Կվոլս-գործը ոչինչ չէր կարող անել: Մի բան որ ընկաւ Հենշէլի ձեռքը, արդէն պրծաւ: Ես կարծում եմ մեր ամբողջ գաւառում չի գտնուիլ մի այնպիսի յանգուգն մարդ, որ համարձակէր նրա հետ վիճելու... Քո հայրը սկզբում նոյն իսկ չհասկացաւ, թէ ինչ պատահեց: Յետոյ նա սկսեց կրակոտ գառնալ, աղաղակել և հայհոյել: Իսկ մարդիկ զուարճանում և ծիծաղում էին նրա վրայ: չէ որ այնտեղ ամենքը Հենշէլին ճանաչում են: Հենշէլը հրաժեշտի ժամանակ նրան հանգիստ ասել էր. «մնաս բարով ձէլ հայրիկ, ես աղջկան ինձ հետ տանում եմ, մայրը վաղուց սպասում է նրան: Դադարիր խմելուց, այն ժամանակ մեզ մօտ քեզ համար էլ տեղ կ'գտնուի»:

**ԺՈՐԺ.** Մնաք բարով, աւելի լաւ է ես վաղը կ'գամ այստեղ խօսելու: (Դուրս է գնում):

**ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ.** Ուրեմն Հենշէլը կարծում է, որ ես այդ աղջկան կ'թողնեմ այստեղ մնալու: Երբեք այդ չէ կարող լինել: Նա իմ երեխան չէ: Միթէ ես կարող եմ այն ժամանակ մարդկանց աչքին երևալ: Քիչ եմ ես տանջուել, ինչ է: Օրեր և գիշերներ եմ ես անցկացրել Գուտալիի ետևից քարշ գալով: Իսկ այժմ էլ մի նոր դաժանակիր աշխատանք է սկսում: Այդ էր պակաս: Բայց թող զգուշանայ նա:

(Հենշէլը ներս է մտնում միջին դռնով. նա հագնել է կաշուէ գլխարկ, արկար կոշիկներ եւ գուլպաներ, կաշուէ ճանապարհորդական պանթալոն եւ այլն. նա իր հետ ներս է քերում 6 տարեկան աղջկան, որ կնդրուտ է եւ ծածկուած ցնցոտիներով):

**ՀԵՆՁԷԼ.** (Գրեթէ ուրախ. լսել է Հաննէի վերջին խօսքերը): Ո՛վ պէտք է զգուշանայ:

**ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ.** Ոչ որ:

**ՀԵՆՁԷԼ.** Նայիր Հաննէ, տես թէ ում եմ բերում: (Աղջկան) Բերթա պնա և քարի երեկոյ ասա: Դէհ, գնա և ասա քարի երեկոյ, մայրիկ:

(Բերթան դժկամութեամբ թողնում է Հենշէլին, որ աղջկան քաղցրութեամբ ուղարկում է Հաննէի մօտ. Հաննէն խոժոռած դէմքով նստած է վառարանի մօտ գրտնադ նստարանի վրայ):

**ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ.** (Երեխային, որ շարած կանգնել է նրա առաջ): Ի՞նչ ես ուզում այստեղ:

**ԲԵՐԹԱ.** Ես մի գեղեցիկ ձիով եմ այստեղ եկել:

(Հենշէլն եւ վախտերը անկեղծ ծիծաղում են):

**ՀԵՆՁԷԼ.** Ահա և մենք նրան այստեղ կ'թողնենք: Բարի երեկոյ, Հաննէ... Բարկանում ես դու, ինչ է:

**ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ.** 2<sup>է</sup> որ դու ինքդ ասացիր, որ երկուշաբթի օրը կ'երազաւնաս: Ես ընթրիք էլ չունիմ:

**ՀԵՆՁԷԼ.** Ոչինչ: Մի կտոր հաց և ճարպ երկի կ'ճարուի (կախում է գլխարկը):

**ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ.** (Կոպտութեամբ ուղղում է Բերթայի հագուստը): Ինչի նման ես դու, հա:

**ՀԵՆՁԷԼ.** Իսկ դու նրա համար չուտով որեւէ բան գնիր: Նրա մարմինը գրեթէ մերկ է: Դեռ լաւ է, որ հետս վերցրել էի ձիու հաստ ծածկոցը, եթէ ոչ Բերթան ճանապարհին բոլորովին կ'փետանար: (Հաննէով իր վերնագլխաքնառը եւ տաքացնելով ձեռքերը): Ամենից լաւն է նրան ուղղակի գնես տաշտակում:

**ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ.** (Աղամայ): Աւելի լաւ կ'լինէր, եթէ դու նրան իր տեղը թողած լինէիր:

**ՀԵՆՁԷԼ.** Ի՞նչ ես խօսում:

**ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ.** Ոչինչ:

**ՀԵՆՁԷԼ.** Բայց ես լսեցի, որ դու ինչ ուր բան էիր խօսում. . Այո, առաջ զիր տաշտակում և յետոյ անկողնում:



Գլուխն էլ մաքրիր: Ես կարծում եմ նրա գլխի մէջ շատ բան կայ: (Բերթանը ընթերցում էր լալիս է): Ի՞նչ է պատահել: Նրան այդպէս մի քաշիր:

ՏԻԿ. ՀԵՆՐԷԼ. Մի կրակուիր, աղջիկ: Այդ էր պակաս:

ՀԵՆՐԷԼ. Նրա հետ քաղցրութեամբ վարուիր: Աղջիկը իւրաքանչիւր քաղցր խօսքից ուրախանում է: Դէ՛հ, լո՛իր, Բերթա, լո՛իր:

ԲԵՐԹԱ. Ես ցանկանում եմ հայրիկի մօտ գնալ:

ՀԵՆՐԷԼ. Հարկաւոր չէ, դու արդէն մայրիկիդ մօտն ես. մայրիկդ բարի է... Ես շատ ուրախ եմ, որ Բերթան մեզ մօտ է: Վաղուց էր հարկաւոր այդ անել: Եթէ ոչ նրան պէտք է գերեզմանատանը փնտռէինք:

ՏԻԿ. ՀԵՆՐԷԼ. Նա այդքան էլ վատ դրութեան մէջ չէ եղել, ինչպէս որ դու ես կարծում:

ՀԵՆՐԷԼ. (Հիասթափուած, ըայց ըարեհոգութեամբ): Ի՞նչ է նշանակում այդ: (Լռութիւն):

ՎԱԼՏԷՐ. Դէ՛հ, մնաք բարով: Հարկաւոր է գնալ:

ՀԵՆՐԷԼ. Ո՛չ, սպասիր, մենք դեռ մի բաժակ գրօզ կխմենք:

ՏԻԿ. ՀԵՆՐԷԼ. Այո, եթէ միայն տանը ունի լինի:

ՀԵՆՐԷԼ. Ի՞նչ անենք, կարելի է վերցնել վերմելուկի խիւղից:

ՏԻԿ. ՀԵՆՐԷԼ. Այդ մարդկանց հետ ես չեմ ցանկանում և ոչ մի գործ ունենալ:

ՎԱԼՏԷՐ. Ո՛չ, ոչ, ես պէտք է տուն գնամ: Ժամանակ չունիմ: Ես դեռ ամբողջ կէս ժամ ճանապարհ պէտք է գնամ: (Հաննէին): Քեզ էլ չեմ ուզում նեղութիւն պատճառել:

ՏԻԿ. ՀԵՆՐԷԼ. Ինչ ասացիր:

ՎԱԼՏԷՐ. (Բարկացած): Ոչինչ, ոչինչ: Ատուած... Ես չեմ մնալ. քեզ հետ չէ կարելի եօլա գնալ: Յտեհութիւն, մնաք բարով:

ՀԵՆՐԷԼ. Գնաւ բարով: Բարեկիր իմ կողմից կնոջդ, լսում ես:

ՎԱԼՏԷՐ. (Մոռէն դռան մօտ): Լաւ: Յտեհութիւն: Չեմ մոռանալ (Դուրս է գնում):

ՀԵՆՐԷԼ. Հը՛մ, ի՛նչ է, միթէ վատ եմ արել:

ՏԻԿ. ՀԵՆՐԷԼ. Իսկ ի՛նչ պէտք ես այժմ մարդկանց անիմ:

ՀԵՆՐԷԼ. Հօ՛ւ չես կարող քո աղջկանից ամաչել:

ՏԻԿ. ՀԵՆՐԷԼ. Ո՛վ է գրա մասին խօսում... Ինձ համար միևնոյն է... Դու միշտ քո ասածն ես պնդում, բայց կտրող են ինձ վատաբանել (Երեխային): Վերցրու, խմիր կաթը և կորիր քնելու: (Բերթան խմում է):

ՀԵՆՐԷԼ. Դու նրա հետ միշտ այդպէս պէտք է վարուես, ինչ է:

ՏԻԿ. ՀԵՆՐԷԼ. Ի՛նչպէս:

ՀԵՆՐԷԼ. Միթէ կարելի է աղջկայ հետ այդպէս վարուել:

ՏԻԿ. ՀԵՆՐԷԼ. Չենք ուտում նրան, մի վախենար: (Յածրը ծայրով եւ լացով աղջկան տանում է հարեւան սենեակը քնացնելու):

ՀԵՆՐԷԼ. (Նրա նստելից): Ես նրան ուտելու համար էլ չեմ բերել այստեղ: Եթէ ոչ, ի՛նչ միտք ունէր նրան այստեղ բերելը: (Կարծատել սլաուզա: Հաննէն մենակ վերադառնում է):

ՀԵՆՐԷԼ. Մարդ չգիտէ թէ ինչպէս պէտք է ձեզ հետ վարուել: Չեղ նման կանանց ձեռքից պրծնել չկայ: Ես միշտ կարծում էի, որ դու...

ՏԻԿ. ՀԵՆՐԷԼ. (Լացով եւ չարացած): Այդ բոլորը ճշմարիտ չէ, եթէ ուզում ես իմանալ:

ՀԵՆՐԷԼ. Ի՛նչը ճշմարիտ չէ:

ՏԻԿ. ՀԵՆՐԷԼ. (Ինչպէս եւ առաջ): Ես քեզ բոլորովին



չեմ խնդրել Բերթայի մասին: Երանի թէ գոնէ միանգամ ես յիշած լինէի նրա մասին:

ՀԵՆՁԷԼ. Ես դրա մասին չեմ խօսում: Դէհ, ինչո՞ւ ես լաց լինում... Հէնց նրա համար, որ դու միշտ լուում էիր, ես էլ ցանկացայ ինքս օգնել քեզ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Միթէ դու չէիր կարող ինձ հարցնել: 2Է որ առաջուց հարցնում եմ, երբ մի այդպիսի բան եմ ցանկանում անել:

ՀԵՆՁԷԼ. Այժմ լսիր, թէ ես քեզ ինչ եմ ասում. այսօր չաբաթ է. ես շտապեցի, որքան ոյժերս ներում էին, այստեղ գալ, որպէս զի շուտ տուն հասնեմ: Ես կարծում էի, թէ դու ինձ ուրիշ տեսակ կգիմաւորես: Եւ եթէ այդպէս դուրս չեկաւ, գրանում արդէն մեղաւորը ես չեմ: Հանգիստ թող ինձ: Լսում ես:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ոչ որ քեզ չէ շարժում:

ՀԵՆՁԷԼ. Լսեցիր: Հանգիստ թող ինձ եւ ուրիշ ոչինչ: Ահա թէ դու ինձ մինչև որտեղ հասցրիր: Ես այդպիսի բան երբէք չէի կարծում: Գուցարկն մեռել է... եւ այլևս չի վերագառնալ այստեղ: Մայրը նրան տարաւ իր մօտ. նրա անկողինը այժմ դատարկ է, իսկ մենք միայնակ: Եւ ինչո՞ւ համար մենք ապաստարան չպէտք է տանք մեզ մօտ այդ աղջկան: Ես այդպէս մտածեցի, բայց ես նրա հայրը չեմ: Իսկ դու: 2Է որ դու նրա մայրն ես:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Այժմ տեսնում ես: Արդէն սկսում եմ յանդիմանութիւնները:

ՀԵՆՁԷԼ. Եթէ չես գազարիլ, ես կ'գնամ Վերմիսկիրի մօտ եւ ամբողջ գիշերը տուն չեմ վերագառնալ: Գու ուզում ես ինձ բոլորովին հալածել տանից, ինչ է... Ես էլ կարծում էի, նա երբևիցէ կ'փոխուի, բայց քանի գնում աւելի եւ աւելի վատանում է: Ես կարծում էի, որ եթէ աղջիկը նրա մօտ լինի, նա մի քիչ խելքի կ'գայ: Եւ եթէ այդ բաներին շուտով վերջ չգրուի...

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ես ինչ եմ ասում: Ես միայն ասում եմ, որ եթէ այդ աղջիկը կ'մնայ մեզ մօտ եւ դու կսկսես դուրս տալ, որ նա իմ երեխան է...

ՀԵՆՁԷԼ. Առանց դրան էլ ամենքը արդէն գիտեն: Էլ ի՞նչ կարիք կայ, որ ես պատմեմ ուրիշներին:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Այն ժամանակ ես այստեղից կ'փախչեմ, իմացած լինիս:

ՀԵՆՁԷԼ. Փախչում ես, փախիր: Փախիր ուր որ ցանկանում ես: Քեզանում ամօթ չկայ:



## ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Վերմեյսկիւրի գարեջրատունը: Մի ցած սպիտականերկ սենեակ, որի ձախակողմեան դուռը տանում է դէպի տան խորքը: Ետեի պատը, ձախից դէպի աջ, տարածութեան միջին մասում կազմում է մի անկիւն, որի շնորհիւ էլ աջ կողմից ձևացնում է մի երկրորդ բնակարան, նախասենեակի նման: Աջ կողմում փողոցի վրայ գտնւում է մի դուռ, իսկ նրա մօտ մի լուսամուտ:

Ետեի պատի մօտ դրուած է գարեջրատան իրեղէնների սեղանը, որի վրայ շարուած են չորս գրանանոց շշեր, օդիւ լիքը, գարեջրի մեքենան, բաժակներ և այլն: Սեղանից բաւական հեռու շարուած են կահկարասիք, սեղաններ և աթոռներ: Կարմիր վարագոյրը բաժանում է բնակարանի երկու բաժանմունքները միմեանցից: Տան երկրորդ մասում էլ շատ սեղաններ և աթոռներ կան. ամենից հետը դրուած է բիւրարդը: Պատերից կախուած են ձիթաներկ պատկերներ, մեծ մասամբ որսորդական կենսքից. Վերմեյսկիւրի խալաթը հագած և երկար չիբուխը բերանում նուագում է դաշնամուրի վրայ, որ չըրուած է ձախ պատի մօտ:

Տեղական հրդեհաշիջային ընկերութեան երեք անդամները բիւրարդ են խաղում: Հաուֆեն նստած է աջ կողմը, առջևի մասում. նրա առաջ օդի է դրուած: Նա զգալի կերպով նուագել է.

Տիկին Վերմեյսկիւրի, որ արտաքինով մի բաւական կեղտոտ պառս է գնչուի տիպով, գարեջրատան մեծ սեղանի հետում կանգնած բաժակներ է լուսնում:

Ֆրանցիսկան նստել է պատուհանի մօտ և խաղում է մի փոքրիկ կատուի հետ:

Գարեջրատուն ծառայող Ժօշքը կանգնած է մեծ սեղանի մօտ, ձեռքին բռնած մի բաժակ գարեջուր. նա հագել է աշնանային զգեստ, փայլուն կօշիկներ, փայլուն կաշուէ ձեռնոցներ և ծածկել է ցիլինդր:

ՎԵՐՄԵՆԼՍԿԻՐԻ. (Նուագում եւ երգում է): Երբ ես Արկադիայի իշխանն էի:

ԺՕՐԺ. (Ցոյց է տալիս պարելու շարժումները): Լաւ, յետոյ, յետոյ:

ՎԵՐՄԵՆԼՍԿԻՐԻ. (Դիտւածք հազալով): Գուրս չէ գալիս: Չեմ կարող երգել: Չայնս բոլորովին խռպոտ է: Սակայն... նորից սկսեմ: Երբ ես Ար... (հազում է): Երբ ես Արկադիայի իշխանն էի: Այ, գրողը տանի, հա:

ԺՕՐԺ. Չարունակեցէք, խնդրեմ: Այնպէս լաւ է գուրս գալիս:

ՎԵՐՄԵՆԼՍԿԻՐԻ. Այ, հազալ ես կարողեմ: Ո՛չ, երգը դուրս չէ գալիս:

ԺՕՐԺ. Բոլորովին չեմ հասկանում: Չէ որ սա իսկական պալատական երաժշտութիւն է:

ՎԵՐՄԵՆԼՍԿԻՐԻ. Կամերգերեան երաժշտութիւն է:

ԺՕՐԺ. Գուցէ այդպէս է: Այդ տարբերութիւրը ես այնքան էլ լաւ չեմ հասկանում: Իսկ դուք, օրիորդ Ֆրանցիսկա, ինչո՞ւ համար էք ծիծաղում:

ՖՐԱՆՅԻՍԿԱ. Չեմ փայլուն և գեղեցիկ կօշիկների վրայ:

ԺՕՐԺ. Այ քեզ բան: Ես հօ չեմ կարող բոբիկ ման գալ: Այն մարդուն էլ մի բաժակ գարեջուր տուէք: Ինչպէ՞ս ես մի բաժակ դանցիգեան ջրի հետ, օրիորդ Ֆրանցիսկա: Այո, փայլուն կօշիկներս վատ չեն. դրա համար էլ նրանք չորս ամբողջ թալէր արժեն: Եւ այժմ ես այդ կարող եմ անել, որովհետեւ փող ունիմ վճարելու: «Սուր» հիւրանոցում կարելի է փող աշխատել: Իհարկէ, երբ ես «Աստղ» հիւրանոցումն էի ծառայում, չէի կարող ինձ համար կօշիկներ գնել:

ՎԵՐՄԵՆԼՍԿԻՐԻ. Ուրեմն «Սուր» հիւրանոցը ձեզ աւելի է դուր գալիս:

ԺՕՐԺ. Դէհ, իհարկէ: Այդպիսի լաւ հիւրանոց ես մինչև այժմ գեւ չեմ տեսել, քանի որ ես ծառայում եմ:



Մենք միմեանց հետ երկու լաւ ընկերներ ենք և կարող եմ ասել, երկու հղբայրներ ենք: Նրա հետ կարելի է նոյն իսկ «դու» ու խօսել:

ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ. Իսկ Զիրէնհարի հետ, իհարկէ այդ չէր կարելի: (Փրանցիսկան ըարձրածայն ծիծաղում է):

ԺՈՐԺ. Գիտէք, ուր հպարտանայ, կստորանայ: Մի շաբաթ էլ անցնի, հաւանօրէն ես նրա ոսկի ժամացոյցները կ'գնեմ:

ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ. Աւելի լաւ է նրա ամբողջ տունը գնել:

ԺՈՐԺ. Գեռ տունը թողնենք. ասենք նա էլ ծախուած է: Պարոններ, ձեր կենացը, ձեր կենացը, պարոններ: Իսկ եթէ արգէն խմել էք, էլի կճարուի... Գնողի անունը էկսնէր է: Ի՞նչ: Նա է գնել: Նա հաւանօրէն միայն հանրային ջրերի առետրով կղբաղուի, իսկ հիւրանոցը կապալով կ'տայ ուրիշների: Եթէ փող ունենայի, կտալաւով կ'կերցնէի այդ հիւրանոցը:

ՀԱՌԻՖՖԷ. Գնացէք հենչէլի մօտ, նա երեւի ձեզ փող կ'տայ:

ԺՈՐԺ. Եւ գիտէք, անհաւանական և ոչ մի բան չկայ գրանուծ:

ՀԱՌԻՖՖԷ. Իհարկէ: 2Է որ դուք լաւ յարաբերութեան մէջ էք նրա կնոջ հետ: (Փրանցիսկան ըարձրածայն ծիծաղում է):

ԺՈՐԺ. Եւ ինչո՞ւ չ'լինել: Նրա կինը, գիտէք, այնքան էլ վատ չէ: Ու իր գործը լաւ է կատարում, կինն էլ նրա սրինգովն է պարում:

ՀԱՌԻՖՖԷ. Ուրեմն եթէ հենչէլի կինը ձեր սրնգովն է պարում, նշանակում է դուք ձեր գործի մէջ վարպետ էք: (Ներսէ մտնում Փարիզը եւ համեստ կերպով նստում է անկիւնում. նրա ուսի վրայ գտնւում է փողը)

ԺՈՐԺ. Ես էլ հէնց այդ եմ ասում: Ամեն մարդ չի կարող... Իսկ ես... Հարկաւոր է շատ զգոյշ լինել, հակառակ դէպքում ծեծը անխուսափելի է:

ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ. Իհարկէ, ամեն բան իր ժամանակն ունի: (Զիրէնհարը ձախ կողմից ներս է մտնում): Այո, եթէ հենչէլը մէկին դարկի, ասելը թաց կըմնայ: Ընդունեցէք յարգանքս, պարոն Զիրէնհար:

ԶԻՐԷՆՀԱՐ. (Մի քիչ գունատ) Բարեւ ձեզ:

ԺՈՐԺ. Գնամ բիլիարդի սենեակը (Վերցնում է իր գարեջուրը եւ անյայտանում ընտանեկան երկրորդ մասում):

ԶԻՐԷՆՀԱՐ. (Նստում է սենանի կողքին՝ դաշնամուրի մօտ): Այս րոպէիս դուք երգում էիք, պարոն Վերմեյսկիւրս: Չարունակեցէք, խնդրեմ, մի քաշուիք:

ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ. Ի՞նչ: Երգում էի ես: Անկարելի է: Գիտէք, ես շատ զգացում եմ: Եթէ դուք ասում էք, նշանակում է, ճիշտ է: Թող տուէք ձեզ մօտ նստելու: Ինձ համար էլ Գրացի դարեջուր բերէք, Փրանցիսկա:

ԶԻՐԷՆՀԱՐ. Այո, եթէ ինկատի ունենանք ձեր, սրանից երեք կամ չորս տարի առաջ ունեցած ձայնը, պէտք է ասել, որ այդ ձայնը այժմ զգալի կերպով մշակուել է:

ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ. Դուք ուղիղ էք ասում, բայց ինչի՞ն է հարկաւոր այդ. ես հազիւ կարողացայ մի բան դուրս բերել, իսկ ո՞վ գիտէ, այժմ ինչ դուրս կ'գայ:

ՓՐԱՆՑԻՍԿԱ. (Զիրէնհարի առաջ դնում է մի շիշ Գրացի գարեջուր, Վերմեյսկիւրսին): Այս րոպէիս քեզ համար էլ կ'բերեմ:

ԶԻՐԷՆՀԱՐ. (Բաժակով խմելով): Բայց ինչ կարող է լինել: Ի՞նչ էք ուզում դուք գրանուծ ասել:

ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ. Ես ինքս էլ չեմ կարող սրտել, չգիտեմ, հաստատ, բայց ոսկորներիս մէջ մի տեսակ ցաւ եմ զգում: Ինչպէս երևում է մի փոփոխութիւն պէտք է լինի: Կատակ չեմ անում, ես դանաղան նշաններ ունիմ, հին կատակերգական նշան: Այն ժամանակ, երբ այստեղի աղբիւրը ինձ շատ օգուտ էր տալիս, արդէն զգում էի, որ ես այստեղից շուտ չեմ հեռանալ: Եւ յիրաւի, չէր անցել չորս շա-



բաթ, երբ ես քանդեցի իմ շարժական խանութը և գաղթեցի այստեղ: Այժմ էլ նորից ստիպուած եմ աներկիւղ սայլը աւելի հեռու բռնելու: Եւ ո՞վ գիտէ, դէպի ուր:

**ԶԻՅԷՆՇԱՐ.** Ո՞վ գիտէ, որտեղ: Այդպէս է ստեղծուած աշխարհը: Իսկ ինչ ինձ է վերաբերում, ես դրա համար ուրախ եմ:

**ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ.** Դուք դեռ չէք պառաւել: Աշխարհումս ձեզ համար միշտ մի կտոր տեղ կ'գտնուի: Բայց իմ գործը ուրիշ տեսակ է, ես արդէն մի պառաւ չուն եմ: Եթէ ինձ այստեղ զրկեն վերջին կտոր հացից, այսինքն եթէ ինձ այստեղ մերժեն, հետաքրքիր է իմանալ, թէ այն ժամանակ ինչ պէտք է ես անեմ: Միթէ պէտք է լարենք ֆիզհարմոնիան, իսկ Ֆրանցիսկան փողեր ժողովէ:

**ՖՐԱՆՑԻՍԿԱ.** Ինչ կլինի: Ես չէի ճշտուիլ, հայրիկ:

**ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ.** Ես կարծում եմ, մանաւանդ, երբ ոսկիները թափուէին:

**ՖՐԱՆՑԻՍԿԱ.** Ոչ, հայրիկ, ինչ ես խօսում դու: Այն ժամանակ դու կարող էիր թատրոնում նորից բեմ բարձրանալ: Ինձ այնտեղ էլ չեն վերցնել, աղջիկս,

**ԶԻՅԷՆՇԱՐ.** Միթէ ձեզ որեւէ բան է ասել պարոն Էկսնէրը: Որքան ես գիտեմ, նա ընդհանրապէս ցանկանում էր ամեն բան հին ձևով թողնել:

**ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ.** Ես էլ ընդհանրապէս այդ ամեն բաներից և ոչ որին չեմ պատկանում:

**ՏԻԿ. ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ.** (Շատ յուզուած մօտենում է սեղանին): Պարոն Զիրէնհար, թոյլ տուէր ինձ ասելու... Դուք ինձ կարող էք հաւատալ, պարոն Զիրէնհար: Ես յիշում եմ տարեկան և արդէն մի պառաւ կին եմ: Եւ քիչ բան չեմ տեսել այս աշխարհում, բայց այնպէս, ինչպէս մեզ այստեղ խաւցին... Հաւատացէք... Ես արդէն չեմ իմանում... Դա այնպիսի ստորութիւն, այնպիսի լիրբ շարութիւն և ուղղակի գարշելի բան է, որ...

**ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ.** Մայրիկ, դու էլ քո մեքենան լարեցիր: Գնա, գնա, խնդրեմ ձեր գործով զբաղուէք:

**ՏԻԿ. ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ.** Ախր ինչ կարող էր անել մեր փոքրիկ Ֆրանցիսկան այդ ստոր կնոջը:

**ՖՐԱՆՑԻՍԿԱ.** Թող, խնդրեմ, մայրիկ:

**ՏԻԿ. ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ.** Ո՛չ, չեմ թողնիլ: Մենք ամեն ինչ պէտք է տանենք, ինչ է, եւ պէտք է լուենք, երբ մեզանից խլում են մեր հացի վերջին կտորը: Երբ նա շարունակ բամբասում է մեր աղջկան: (Զիրէնհարին): Ասացէք խնդրեմ, միթէ մեր աղջիկը երբեք ձեր օձիքից կ'աւել է:

**ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ.** Լաւ, կնիկ: Այժմ գնանք, կնիկ: Այդպէս: Մի քիչ հանգստացիր: Այդ մեղախօսութիւնը դու վատ շատացիր: Երեկոյեան մենք նորից փորձ կ'անենք: (Տանում է նրան զարեջրատան սեղանի ետեւը, որտեղից մի առ ժամանակ դեռ եւս լսում է նրա հեկեկոցը):

**ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ.** (Բռնելով իր առաջուայ տեղը), Իսկապէս ասած եմ ճշմարիտ է խօսում: Ես էլ արդէն լսել եմ, ինչպէս այստեղ վայրի վերոյ խօսում են, իբր թէ Հենշէլը կապալով վերցնում է զարեջրատունը: Այդ բոլորը, իհարկէ, նրա կնոջ բաներն են:

**ՀԱՌԻՖՖԷ.** Էլ ում բանը կարող է լինել, Երբ գիւղում մի գլուխի բան է պատահում, հարկաւոր չէ հարցնել, թէ որտեղից է նա ծագում: Հէնց ինքը սատանան նստած է այդ կնոջ մէջ:

**ՖԱՐԻԳ.** Գարեջրատան վրայ նա վաղուց աչք ունի:

**ԶԻՅԷՆՇԱՐ.** (Հառափօքին): Ձեզ երբեք չէ կարելի տեսնել, Հառափօք: Որտեղ էր դուք կորչում:

**ՀԱՌԻՖՖԷ.** Որտեղ եմ ես կորչում: Դժբաղդութեան մէջ: Եւ ո՞վ ձգեց ինձ այնտեղ: Այն անիծեալ կինը: Բացի նրանից էլ ո՞վ կարող է լինել, հետաքրքիր է իմանալ: Հենշէլի հետ մենք երբեք չենք կռուել:

**ՖԱՐԻԳ.** Ձէ որ նրա կինն է տան գլխաւորը:



**ՀԱՌՈՒՓՓԷ.** Գիտէ՞ք նրա համար ես դեռ բաւական ճարպկութիւն չունիմ: Ես երեխայ չեմ, իհարկէ: Չպէտք է նրա յետեւից քաշ դամ: Նա միայն ցանկանում է, որ ամեն մարդ նրան հնազանդուի. բացի դրանից նա բաւական տար է... ամեն բան քիչ է նրա համար... Իսկ ինչ վերաբերում է աշխատանքին, փառք Աստծոյ, ես դեռ կարող եմ աշխատել: Իսկ այն ջահելները, որոնց նա վարձում է, բոլորն էլ ծոյլ են և սուրիշ ոչինչ. ես երեք անգամ նրանցից աւելի եմ աշխատում:

**ԶԻՅԷՆՀԱՐ.** Այո, դժբաղդ է ծերունի Հենչէլը:

**ՀԱՌՈՒՓՓԷ.** Բայց ով է մեղաւորը. նա ինքն է թոյլ տալիս... Եւ եթէ իմ ոսկորները լաւ ճկուն չեն, նրան պէտք է յայտնի լինի դրա պատճառը: Անգործութեան պատճառով չեմ ես այսպէս ծուռել. եթէ այժմ նրա սնուկները փողով լիքն են, դրա համար էլ ես քիչ քրտինք չեմ թափել:

**ՀԻՅԷՆՀԱՐ.** Այո, ես շատ լաւ յիշում եմ, չէ՞ որ դուր Վիլհելմ Հենչէլի հօր մօտն էլ էիր ծառայում:

**ՀԱՌՈՒՓՓԷ.** Ինչպէս չէ, ծառայել եմ: Իսկ Վիլհելմի ձիերը տասնեութ տարի շարունակ ես եմ պահել, լծել, արձակել և ամառ ու ձմեռ քշել եմ: Ես դնացել եմ Ֆրէյբուրգ, Բրեսլաու և մինչև անգամ Բրոմբերգ: Միայն մի գիշեր չեմ ես սայլի մէջ անցկացրել: Պատահել է, երբ ցուրտը ականջներս և ձեռքերս բոլորովին տարել է: Ոտներիս վրայ ահապին մեծութեամբ ուռոյցներ են դուրս եկել: Իսկ այժմ ինձ վաճառում են և ես այլ ես նրանց հարկաւոր չեմ:

**ՖԱՅԻԳ.** Այդ բոլորը նրա կնոջ գործն է. ինքը Հենչէլը բարի մարդ է:

**ՀԱՌՈՒՓՓԷ.** Եւ ինչո՞ւ համար նա իր օձիքին մի այգուկի կին է փաթաթել: Թող նա այժմ իր օձիքը ազատի նրանից: Նա չափազանց շտապել է. դեռ գերեզման չէր դը-

րել իր առաջին կնոջը, իսկոյն երկրորդի հետ ամուսնանալու:

**ԶԻՅԷՆՀԱՐ.** Այն ժամանակ դեռ ոչ որ չգիտէր, թէ ինչպիսի կին կլինէր վերջինը:

**ՖԱՅԻԳ.** Ես նրան լաւ էի ճանաչում, շատ լաւ: Եթէ Հենչէլը ինձ հարցնէր, ես նրան շատ բան կպատմէի: Եթէ նա ցանկանում էր Գուտտէլին էլ իր մօր ետեւից ուղարկելու, գրեթե ինչ էլ լաւ միջոց չէր կարող գտնել, քան թէ երեխային յանձնէր Հաննէի նման մի խորթ մօր:

**ՀԱՌՈՒՓՓԷ.** Այո, այո. Չարժէ այլևս խօսել: Ամենքն էլ իրանց գլուխը շարժում են. նա այդ կնոջից դեռ շատ պետք է տուժի: Սկզբում մարդիկ միայն պարմանում էին, իսկ այժմ նրանից միայն ամենալատ բաներ են սպասում:

**ԶԻՅԷՆՀԱՐ.** Յամենայն դէպս դրանք միմեայն զրպարտութիւններ և դատարկ բամբասանքներ են:

(*Զիւլամառ Վալտերը ներս է մտնում. նա հագնել է քարձոյ կոշիկներ, որսորդական վերնազգեստ եւ ձեռքում քոննել է մտրակ:* Նա նստում է սեղաններից մէկի մօտ եւ Փրանցիսկային նշանով պատուիրում է իրան գործչուր տալու):

**ՀԱՌՈՒՓՓԷ.** Դուր այդպէս էր. ով գիտէ, ճշմարիտ է այդ, թէ ոչ: Բայց եթէ մեռեալները յարութիւն առնէին և գային այստեղ, այն ժամանակ պառաւ Հենչէլը շատ բան կունենար պատմելու: Նա չէր կարող երկար ապրել և իսկի չէր էլ ուզում: Իսկ ամենագլխաւորը այն է, որ նա չըպէտք է ապրէր:

**ԶԻՅԷՆՀԱՐ.** Զգուշացէ՛ք, Հաուֆֆէ: Եթէ Հենչէլը այդ երբեք չէ իմանալ...

**ՀԱՌՈՒՓՓԷ.** Ինչո՞ւ համար պէտք է զգուշանամ: Ես այդ բանը ամեն մէկի երեսին կասեմ: Այո, Հենչէլի պառաւը պէտք է մեռնէր: Թէ այն աղջիկը նրան թոճաւորել է, այդ եւ չգիտեմ, որովհետեւ այդ ժամանակ ես նրա մօտ չեմ ե-



դիւ: Որ նա իր բնական մահովն է մեռել, երբէք: Նա մի առողջ կին էր և կարող էր դեռ երեսուն տարի էլ ապրել: (Զիրէնհարը վերջացնում է իր զարեջուրը և տեղից ըարճրանում):

**ՎԱՆՏԵՐ.** Որ նա առողջ կին էր, այդ բանը ես էլ կարող եմ հաստատել: Միթէ ես իմ հարազատ քրոջս չեմ ճանաչում: Նա կանգնած էր ճանապարհի վրայ և նրան խանդարում էր, ահա և դրա համար էլ պէտք էր նրան մէջ տեղից հեռացնել: (Զիրէնհարը հանգիստ կերպով դուրս է գնում):

**ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻ.** Պարոններ, ոչ ոք ձեզանից ծխախոտ չէ ցանկանում: Սակայն, պարոններ, ես կարծում եմ դուք շատ էք հեռու գնում: Լաւ նայեցէք, այս մարդուն: Երէկ ուշ երեկոյեան նա այստեղ նստած էր: Ինչպէս ծա՛նք էր նա շունչ քաշում... Այստեղ ուրիշ ոչ ոք չկար... Նա այնպէս ծա՛նք էր շունչ քաշում, որ ես սրտանց խղճում էի այս թշուառին:

**ՀԱՌԻՓՖԷ.** Այդ խիղճն է, որ նրան տանջում է:

**ՎԱՆՏԵՐ.** Ա՛խ, ինձ հանգիստ թողէք այդ Հենշէլից, նա ինձ քինչև մահս զգուցեցրել է: Ես վաղուց եմ նրա հետ ամեն բան վերջացրել:

**ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻ.** Ո՛չ, պարոն Զիրէնհարը ճիշտ է ասում, նրան պէտք է խղճալ:

**ՎԱՆՏԵՐ.** Լաւ. թող նա ինչպէս ուզում է անի: Իսկ թէ ես ինչ կարծիք ունիմ Հենշէլի մասին, այդ էլ իմ գործն է: (Հենշէլը և դարձին Հիլդեբրանդը աջ կողմից ներս են մտնում: Հենշէլը ընկնել է Բերթային, որ առաջուանից աւելի լաւ է հագնուած: Ի ներկայ նորոգները մի առ ժամա- նակ շփոթուած լուռ են):

**ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻ.** Բարեւ ձեզ, պարոն Հենշէլ:

**ՀԵՆՇԷԼ.** Բարեւ ձեզ, պարոններ:

**ՓՐԵՆՑԻՍԿԱ.** Դէ՛հ Բերթա, ինչպէս է քեֆդ:

**ՀԵՆՇԷԼ.** Աստ շնորհակալ եմ ձեզանից: Հը՛մ ինչ է, խօսելը մոռացել ես: Փառք Աստծոյ մի քիչ սովորել է: Բա- րե՛ւ, փեսայ: (Անփութութեամբ ծեռք է տալիս Վալտերին, որ նոյնպէս պատասխանում է): Ինչպէս է քեֆդ:

**ՎԱՆՏԵՐ.** Քէֆս ինչպէս է: Կցանկայի աւելի լաւ քէֆ: Իսկ դու իսկական դայեակ ես դարձել:

**ՀԵՆՇԷԼ.** Այո, այո, ճիշտ ես ասում:

**ՎԱՆՏԵՐ.** Դու միշտ աղջկայ հետ ես ման գալիս: Մի- թէ չես կարող դրան իր մօր մօտ թողնել:

**ՀԵՆՇԷԼ.** Նա այսօր տունը մաքրում է և գործ չատ ունի: Իսկ երեխան նրան խանդարում է: (Նստում է զա- րեջրատան մեծ սեղանի մօտ գտնուող մի նստարանի վը- րայ՝ իր փեսայի մօտ և Բերթային դնում է ծնկների վե- րայ: Հիլդեբրանդը նստում է նրա հանդէպ): Հը՛ր, Հիլ- դերրանդ, խմե՛նք թէ ոչ: Կարծեմ մենք իրաւունք ունինք մի բաժակ դարեջուր խմելու: Տուէք երկու բաժակ զարե- ջուր և երկու բաժակ օղի:

**ՀԻԼԴԵԲՐԱՆԴ.** Լաւ է, որ վերջապէս այդ գրողը ինձ յիշեց:

**ՀԵՆՇԷԼ.** Իսկ մեր ձին բոլորովին կատաղել և ամեն ինչ քանդում է... Բարեւ, Հաուֆֆէ:

**ՀԱՌԻՓՖԷ.** Բարեւ:

**ՀԵՆՇԷԼ.** Նրա քէֆը տեղը չէ: Հանգիստ թողնենք նը- րան:

**ՓԱՐԻՔ.** Պարոն Հենշէլ, գնեցէք ինձանից որևէ բան: Ձեր կնոջ համար ասեղ կամ մագերի գեղեցիկ սա- նը (Ներկայ նորոգները ծիծաղում են): Ծառայող ժօրժն էլ է սրանից մի հատ գնել:

**ՀԵՆՇԷԼ.** (Նոյնպէս ծիծաղելով և սիրալիք): Ազատիր ինձ այդ յիմար բաներից, (Վերմեյսկերին): Նրան էլ տուէք մի աման զարեջուր... Ի՛նչ զուարճախօս երիտասարդ է: Ո՛րտեղից է նա:



**ՀԻՆԴԵՐՆԵՐԻ.** Կարծեմ նա Կոլոսոսիցի Փարիզն է՝  
Ամենամեծագիտան օրիկան է ամբողջ դաւառում:

**ՀԵՆՁԷԼ.** Ահա ես էլ մի փոքրիկ ծագիկ ունիմ Կոլոսոսիցի:

**ՓԱՔԻԳ.** (Բերթային): Մենք քեզ հետ հին բարեկամների ենք, այնպէս չէ:

**ԲԵՐԹԱ.** (Փառքաբան): Ես կարկանդակ եմ ուզում:

**ՓԱՔԻԳ.** Ապա ի՞նչ... Տես, նա ինձ արդէն ճանաչում է: Սպասիր, տեսնեմ կգտնեմ:

**ԲԵՐԹԱ.** Փողոցում, սայլի մէջ:

**ՓԱՔԻԳ.** Ոչ, այստեղ գրաւանում: (Աղջկան կարկանդակ է տալիս): Աղջկա, ինչպէս երևում է, քեզ համար գարեջրատները անխուսափելի են: Սկզբում պապդ էր քեզ իր հետ քաշ տալիս, իսկ այժմ էլ Վիլհելմ չենչէլի հետն ես թափառում:

**ՀԵՆՁԷԼ.** Աղջկա դու էլ ասա նրան, որ այդ քո գործը չէ, իմ մասին ուրիշ հոգացող կայ: Այդպէս էլ ասա, մանուկը:

**ԺՕՐԺ.** (Արագ դուրս է գալիս քիլիարդանոցից, շունկատելով Հենչէլին): Ես երբէք չէի հաւատալ. այդ մարդը չիշը այնպէս է լսկում, կարծես հաց է ուտում, Աստուած է վկայ: Օրիորդ Փրանցիսկա, խնդրեմ մի մեծ աման գարեջուր. հինգ հոգի ենք մենք:

**ՔՐԱՆՑԻՍԿԱ.** (Բերթան ծնոքին, գնում է գարեջրի սեղանի կտակ): Ես այժմ չեմ կարող, Բերթան թող չէ տալիս:

**ԺՕՐԺ.** Ահ, դուք էլ այստեղ էք, պարոն Հենչէլ:

**ՀԵՆՁԷԼ.** (Ուշադրութիւն չդարձնելով ԺՕՐԺի վրայ, հիշողորանով): Կենացդ, հիշեցրանդ: (Բաժակները միմեանց են զարկում եւ խմում):

**ՓԱՔԻԳ.** (ԺՕՐԺին, որ մի քիչ խոռովել եւ ուրիշ սեղա-

նի մօտ սիգար է ծխում): Ասացէք խնդրեմ, պարոն ԺՕՐԺ կարծեմ դուք կարող էք կախարդել:

**ԺՕՐԺ.** Ի՛նչ, ինչո՞ւ համար էք դուք այդպէս կարծում: **ՓԱՔԻԳ.** Դուք մի քիչ առաջ այստեղ էիք, իսկ յետոյ բոլորովին անյայտացաք:

**ԺՕՐԺ.** Ճիշտ է, բայց ինչու համար յուզուեմ: Ես Զիրէնհարի հետ լաւ չեմ:

**ՓԱՔԻԳ.** (Ապտակի նշան անելով): Ասում են լաւ է կպել (Հաուֆֆէին): Քեզ էլ հաւանօրէն, ամենալաւ բաժինն է քնկել, այնպէս չէ:

**ՀԱՌԻՓՖԷ.** Ո՛ւհ, անիծեա՛լ կուռք: (Ժծադուռ են):

**ՓԱՔԻԳ.** Այո, այո, ճիշտ այնպէս, ինչպէս ես:

**ՀԵՆՁԷԼ.** Ճիշտ է, որ դու այժմ Նենգվիլսի մօտն ես:

**ՀԱՌԻՓՖԷ.** Քո ի՞նչ գործն է:

**ՀԵՆՁԷԼ.** (Բարեհոգութեամբ ծիծաղում է): Սրան նախցէք, իսկ եր Աստուծոյ. կարծես ոգնի լինի, որին պիտի միշտ ծախում է:

**ՎԱԼՏԷՐ.** Ճիշտ են ասում, որ դու շուտով հիւրանոցի տէր կ'դառնաս:

**ՀԵՆՁԷԼ.** (Զարմացած նայելով նրա վրայ): Այդ բանի մասին ես ոչինչ չգիտեմ:

**ՎԱԼՏԷՐ.** Ես կարծեցի... Զեմ յիշում, թէ ո՞վ ինձ ասաց:

**ՀԵՆՁԷԼ.** (Դատարկելով գարեջուրը. հանգիստ կերպով): Ով քեզ ասել է, հաւանօրէն երազումն է տեսել: (Լռութիւն):

**ՀԻՆԴԵՐՆԵՐԻ.** Այո տանը այժմ ամեն ինչ տակնուվրայ է լինում: Ո՞վ գիտէ. թէ զեռ ինչեր է պատահելու: Ես միայն մի բան կասեմ, այն է որ Զիրէնհարին դեռ չառ կ'յիշէք:

**ՀԵՆՁԷԼ.** (Հաուֆֆէին): Լաւ կլինէր, եթէ դու գնայիր Լանդսնուտ: Այնտեղ գտնող կապիտ մի գոյգ նոր ձիեր են լծում: Կրկրէիր դրանց այստեղ:



**ՀԱՌԻՓՖԷ.** Ես քեզ վրայ միայն թքել եմ ցանկանում, ահա թէ ինչ:

**ՀԵՆՁԷԼ.** (Բարեհոգութեամբ ծիծաղելով): Լաւ, ինչպէս ցանկանում ես, ուրեմն նստիր այստեղ: Քեզ համար այլեւս չեմ հոգալ:

**ՀԱՌԻՓՖԷ.** Աւելի լաւ է տանդ կեղտը մաքրես:

**ՀԵՆՁԷԼ.** Լաւ, լաւ, բաւական է, ասում եմ քեզ:

**ՀԱՌԻՓՖԷ.** Քո սեղհական տանը բաւական կեղտ կայ մաքրելու:

**ՀԵՆՁԷԼ.** Գիտե՞ս, Հաուֆֆէ, ես չեմ սիրում վիճելը, բայց եթէ դու վէճ ու կռիւ ես ցանկանում, այն ժամանակ ես կվերցնեմ քեզ և այստեղից դուրս կ'չարտեմ:

**ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻ.** Հանգիստ, պարոններ, հանգիստ: Մի կռուէք:

**ՀԱՌԻՓՖԷ.** Դու այստեղի տէրն ես, ինչ է... Դու չես համարձակուիլ ինձ դուրս չարտելու: Դու էլ այստեղ այնպիսի հիւր ես, ինչպէս և ես: Ոչ դու և ոչ կինդ իրատունք չունիր ինձ ստիպել լռելու: Ինչքան էլ որ երկուսդ աշխատէք, ինձ չէք կարող վախեցնել. ոչ դու և ոչ էլ կինդ:

**ՀԵՆՁԷԼ**ը առանց նկատելի յուզմունքի ըննում է Հաուֆֆէի կրծքից, տեղից բարձրանում է. հրում է դէպի դուռը զուր դիմադրող Հաուֆֆէին եւ շուտ գալով, ծախ ծեռքով բաց է անում ապակեայ դուռը եւ ձգում նրան փողոց: Այդ ժամանակ տեղի է ունենում հետեւեալ խօսակցութիւնը):

**ՀԱՌԻՓՖԷ.** Քեզ ասում եմ, թող: Լսում ես, թող ինձ:

**ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻ.** Ես չեմ կարող այստեղ այդպիսի բան թոյլ տալ:

**ՀԵՆՁԷԼ.** Ես քեզ ասացի: Այժմ ուրիշ կերպ չի կարելի:

**ՀԱՌԻՓՖԷ.** Ուզում ես ինձ խեղդել, ինչ է: Դու այստեղի տէրը չես:

**ՏԻԿ.** **ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻ.** (Սեղանի նտելից): Ի՞նչ է այս: Միթէ կարելի է այդպէս, Լիւդվիգ: Դու, պէտք է այսպիսի բան թոյլ տաս այստեղ:

**ՖԱՅԻԳ.** (Երբ ՀԵՆՁԷԼը Հաուֆֆէի հետ աշխատում է հասնել դռանը) Թողէ՛ք: Ոչինչ չէ կարելի անել: Նա իսկական գոմէշ է: Նա իր ատամներով բռնում է սեղանի ծայրից և վեր է բարձրացնում և սեղանից ոչ մի բաժակ էլ վայր չէ ընկնում: Եթէ նա տարանայ, մեզ բոլորիս էլ կարող է փողոց նետել: (Հաուֆֆէն դուրս է նետւած, իսկ ՀԵՆՁԷԼը վերադառնում է):

**ՀԵՆՁԷԼ.** (Նստում է ընդհանուր յոռութեան ժամանակ): Քաւթաւ յիմարը չէ կարող հանգիստ մնալ:

**ԱՌԱՋԻՆ ՀՐԳԵՀԱՆՔԻ.** (Դուրս է գալիս քիչխարդանոցից եւ մեծ սեղանի մօտ խմում է մի քաժակ օղի): Ստացէ՛ք օգու փողը: Աւելի լաւ է այստեղից հեռանալ, եթէ ոչ մարդ կարող է խառնուել այս կռիւներին:

**ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻ.** Ի՞նչ էք ասում: Մի բաժակ էլ դարե՛ջուր: Ա՜յդ էր պակաս: Վերջապէս ես դեռ այստեղ եմ:

**ՎԱԼՏԷՐ.** Եթէ դու, Վիլհելմ ՀԵՆՁԷԼ, այդպէս վարուես յաճախորդների հետ, երբ կանգնած ես սեղանի ետեւում և Վերմելսկիրի փոխարէն այստեղի տէրը լինիս, այն ժամանակ դու քիչ հիւրեր կունենաս. այդ բանը ես արդէն քեզ կարող եմ ճիշտը ասել:

**ՀԵՆՁԷԼ.** Ինձ այդպիսի հիւրերն էլ հարկաւոր չեն:

**ՎԱԼՏԷՐ.** Դու հիւրերի մէջ չես կարող խտրութիւն տնել: Կարծեմ Հաուֆֆէի փողն էլ կեղծ չէ:

**ՀԵՆՁԷԼ.** Թող ինչպէս ուզում է, այնպէս էլ վճարի: Ես քեզ նորից եմ ասում, մի կրկնել ինձ այդ հէքեաթը: Ես այս դարեջրատունը չեմ ուզում վերցնել: Իսկ եթէ վերցնէի, այն ժամանակ, կարծեմ, այդ բանը ամենից առաջ ինձ յայտնի կլինէր: Վերջացաւ: Իսկ եթէ կապալով որեւէ գարեջրատուն վերցնեմ, այն ժամանակ քեզ էլ կասեմ: Այն



գէպքում ինձ կարող ես խորհուրդներ էլ տալ, իսկ եթէ այդ բանը քեզ դուր չգայ, չես էլ դալ ինձ մօտ, պրծաւ գնաց. Տէրը քեզ հետ. չգաս ինձ մօտ, փեսայ: (Հըղճհաշէջը դուրս է գալիս, զարկելով նտեւից դուռը):

ՎԱԼՏԷՐ. Լաւ, մենք էլ գնանք: (Պատրաստում է վը-  
ճարելու):

ՎԵՐՄԵԼՍԿԻՐԽ. Այդ արդէն լաւ չէ, պարոն Հենշէլ: Դուր փախցնում էք իմ բոլոր հիւրերին:

ՀԵՆՇԷԼ. Ասացէք, խնդրեմ, ինչով եմ արդեօք ես մե-  
ղաւոր, եթէ այս պարոնն էլ այս բոսպէիս փախչում է: Ու-  
զում է նա թող մինչև վաղը առաւօտեան այստեղ մնայ,  
ինձ ինչ:

ՎԱԼՏԷՐ. (Փողը նորից գրպանն է դնում եւ աւելի եւս  
յուզուելով) Դու իրաւունք չունիս այստեղից մարդիկ գուրս  
անելու: Դու այստեղի տէրը չես:

ՀԵՆՇԷԼ. Իսկ դու իմ մասին գուցէ սրի է բան գիտես:

ՎԱԼՏԷՐ. Մենք շատ բան գիտենք, բայց միայն լուում  
ենք: Ի՞նչ լաւ բաներ են: Ամենից լաւ Վեյմելսկիրխը գիտէ:  
ՎԵՐՄԵԼՍԿԻՐԽ. Ինչո՞ւ հենց ես: Թողէք այդ բանը,  
պարոններ...

ՀԵՆՇԷԼ. (Իրեն զսպած եւ հաստատ) Ի՞նչ էք իմա-  
նում, հա: Ուղղակի ասացէք... Մէկը մի բան գիտէ, միւսը  
մի ուրիշ բան եւ վերջիվերջոյ դուրս է գալիս, որ գուր եր-  
կուող էլ միմիայն գրաբարտութիւններ գիտէք... (Լռութիւն):

ՎԱԼՏԷՐ. (Փոխուած տոնով) Եթէ դու առաջուայ նը-  
ման լինէիր: Սատանան գիտէ, թէ դու ինչպէս զգալի կեր-  
պով փոխուել ես: Առաջներում դու շատ բարձր էիր կանգ-  
նած: Ամենքն էլ Վիլհելմ Հենշէլի մօտն էին գալիս խոր-  
հուրդ հարցնելու: Եւ ինչ որ նա ասում էր, ամենքի համար  
էլ օրէնք էր, նման եկեղեցում միշտ կրկնուող «ամէն» ին: Իսկ  
այժմ մարդ չգիտէ, թէ ինչպէս մօտենայ քեզ:

ՀԵՆՇԷԼ. Լաւ, յիտոյ, յիտոյ, այն...

ՎԱԼՏԷՐ. Այն, որ ինքզ էլ գիտես: Սկզբում ամենքը  
քեզ հետ բարեկամ էին, իսկ այժմ ոչ որ քեզ վրայ անդամ  
չէ նայում: Եւ եթէ մարդիկ ուզենան քեզ մօտ գալ, իսկոյն  
և եթէ կ'հրաժարուեն, եթէ յիշեն: Հաուֆֆէն ձեզ մօտ քը-  
սան տարի ծառայել է և յանկարծ, երբ նա կնոջդ դուր չէ  
գալիս, բռնում ես նրա օձիւրից և տնիցդ դուրս չարտում:  
Ի՞նչ բան է այդ: Հէնց որ նա մէկի վրայ առարկում է,  
դու իսկոյն պատրաստ ես նրա առաջ հնազանդուելու, փո-  
խանակ մտրակ վերցնելու և նրան դուրս վռնելու:

ՀԵՆՇԷԼ. Եթէ այս բոսպէիս չլուես, այն ժամանակ ես  
քո օձիւրիցն էլ կ'բռնեմ:

ԺՕՐԺ. (Հենշէլին) Իսկի չբարկանա, պարոն Հենշէլ:  
Ի՞նչ կարելի է պահանջել այս մարդուց: (Իսկոյն մտնում է  
ընկալողանոցը):

ՎԱԼՏԷՐ. Այն, այն, քեզանից սպասելի է: Դու կարող  
ես այդ անել: Երբ մէկը քեզ մօտ է գալիս և ճշմարտու-  
թիւն ասում, դու պատրաստ ես նրան պատուիր տալ: Իսկ  
մի այնպիսի մարդ, ինչպիսին այս լիրբ ժօրժն է, քեզ դի-  
չեր ու ցերեկ կարող է խաբել: Նա էլ, կինդ էլ՝ երկուսն էլ  
բարի պտուղներ չեն: Եթէ դու ցանկանում ես, որ քեզ խա-  
բեն, թող խաբեն: Եթէ դու աչքեր ունիս, լայն բաց արա  
և նայիր չուրջդ, մանաւանդ այդ երիտասարդին: 2Է որ նը-  
րանք քեզ պարզ ցերեկով խաբում են:

ՀԵՆՇԷԼ. (Ցանկանում է յարձակուել նրա վրայ,  
բայց իրան զսպում է): Ինչ ասացիր, հա... Ոչինչ: Լաւ:  
(Լռութիւն):

ՖԱԲԻՔ. Այսօր կատարեալ ապրիլեան եղանակ է, եր-  
բեմն երբեմն արեգակն է երևում, յիտոյ էլ անձրև է գալիս:

ՀԱՌԻՖՖԷ. (Չայնը լսում է դրան ետեւից): Ես քեզ  
այդ բանը չեմ ներիւ, զգոյշ կաց: Սպասիր, ես դեռ քեզ  
ցոյց կտամ: Մենք դատարանում կ'աւանդենք:



ՎԱԼՏԵՐ. (Վերջացնում է իր գարեջուրը եւ տեղից վեր կենում): Մնաք բարով:

ՀԵՆՁԷԼ. (Չախ ետքը դնում է Վալտերի ձեռքի վրայ): Այստեղ սպասել: Հասկացար:

ՎԱԼՏԵՐ. Ի՞նչ ես ուզում անել:

ՀԵՆՁԷԼ. Յետոյ կիմանաս: Սպասիր այստեղ, ասում եմ քեզ: (Փրանյիսկային): Վազիր և կնոջս ասա չուտով այստեղ գայ: (Փրանյիսկան վազում է):

ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ. Սերելի Հենշէլ, ի սէր Աստծոյ, սկանդալ մի անիր: Ոստիկանութիւնը կ'գայ և ես...

ՀԵՆՁԷԼ. (Սարսափելի կատաղած. նրա նրնսը կարծրել է): Ես ձեզ ամենքիդ կսպանեմ... Կամ Հաննէն պէտք է գայ այստեղ... Նա պէտք է գայ:

ՎԱԼՏԵՐ. (Յուսահատուած): Վիլհէլմ, Վիլհէլմ: Յիմարութիւններ մի անիր: Ես այդպիսի բան չէի ուզում քեզ առել... Ոչ, Աստուած է վկայ: Նրանք քեզ խաբում և զրբաբարտում են:

ՀԻԼԴԵՖՐԱՆԴ. Վիլհէլմ, չէ՛ որ դու մի բարի մարդ ես: Խեղբորդ մի կորցնիր: Ինչո՞ւ ես դուռում: Ի՞նչ է պատահել քեզ հետ: Ես կարծում եմ ամբողջ տունը լսեց քո ասած խօսքերը:

ՀԵՆՁԷԼ. Թող ամենքը լսեն, ամենքը, ովքեր ցանկանում են: Ինձ համար միևնոյն է: Բայց դու այստեղ կմընաս և Հաննէն կ'գայ:

ՎԱԼՏԵՐ. Ախր ինչու համար մնան այստեղ, ինչո՞ւ էէ: Քո գործերը ինձ բոլորովին չեն վերաբերում: Ես չեմ խառնուում և չեմ էլ ուզում խառնել այդ գործերի մէջ:

ՀԵՆՁԷԼ. Դրա մասին դու առաջ պէտք է մտածէիր:

ՎԱԼՏԵՐ. Իսկ ինչ միտքն է վերաբերում, այդ բանը մեզ համար դատարանը կորոշի: Այստեղ մենք կտեսնենք, թէ մեզանից ով իրաւունք ունի: Ինչ էլ որ լինի, ես իմ փողերս կստանամ: Գուցէ կինդ սուտ երդում ուտելուց առաջ

լաւ մտածի: Եթէ ոչ ես ուրիշ գործ չունիմ: Քեզ ասում եմ, թող ինձ: Ես չեմ կարող սպասել, պէտք է չուկայ գնամ:

ԶԻՔԷՆՀԱՐ. (Ներս է մտնում): Ի՞նչ է պատահել այստեղ:

ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ. Ա՛խ, Տէր Աստուած, չ'զիտեմ: Ես չեմ հասկանում, թէ ի՞նչ է ուզում պարսն Հենշէլը:

ՀԵՆՁԷԼ. (Շարունակում է Վալտերի ձեռքը քննած պահել): Հաննէն պէտք է այստեղ գայ և ուրիշ ոչինչ:

ՏԻԿ. ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ. (Զիզէնհարին): Այստեղ հիւրերը իրանց համար հանգիստ գարեջուր էին խմում, յանկարծ ներս մտաւ Հենշէլը և այնպիսի մի կռիւ սկսեց, կարծես տան տէրը լինի:

ԶԻՔԷՆՀԱՐ. (Մի կողմ դարձնելով նրան): Սուս... Լաւ... Լաւ: (Հենշէլին): Ի՞նչ է պատահել ձեզ հետ, Հենշէլ:

ՀԵՆՁԷԼ. Ես ոչ մի բան չեմ արել, պարոն Զիլքնհար: Ես մեղաւոր չեմ, որ այդպիսի բան ծագեց: Ուզում է՞ք հաւատացէք, չէք ուզում, մի հաւատացէք, ես մեղաւոր չեմ:

ԶԻՔԷՆՀԱՐ. Ի՞նչ էք արդարանում, Հենշէլ: Փառք Աստուծոյ, ես ձեզ ճանաչում եմ իբրեւ մի հանգիստ մարդ:

ՀԵՆՁԷԼ. Ես ձեր հօր մօտն էլ չեմ ծառայել... Բայց երբ ինձ վիրաւորում են, ես չեմ մեղաւորը, որ այդպիսի բան է դուրս գալիս: Ես ինքս չզիտեմ, թէ ինչ արի: Ես երբէք այնպէս չեմ բարկացել, ինչպէս այժմ: Նրանք ինձ կտոր կտոր են անում: Իսկ այդ մարդը կնոջս մասին այնպիսի բան ասաց, որ եթէ չապացուցանի, այն ժամանակ Տէրը փրկի նրան:

ԶԻՔԷՆՀԱՐ. Թող մարդիկ դուրս տան, որքան ցանկանում են, ուշադրութիւն մի դարձնէք նրանց վրայ:

ՀԵՆՁԷԼ. Ապացուցիր, ապացուցիր: Ապա թէ ոչ, Աստուած զիտէ, թէ ինչ կ'լինի:

ՎԱԼՏԵՐ. Կարող եմ ապացուցել և կապացուցանեմ:



Այս գնեցաւ թիւ մարդիկ չկան, որոնք այդ բանի մասին  
ինձանից վատ և քիչ չեն իմանում: Քո կիներ վատ ճանա-  
պարհի վրայ է գտնուում: Ես մեղաւոր չեմ և այդ բանն էլ  
չէի ասիլ, եթէ դու ինձ չգարկէիր: Ես ստախոս չեմ և միշտ  
ճշմարտութիւնն եմ ասում: Հարցրու, ում որ ցանկանում ես:  
Հարցրու խղճով թէկուզ պարոն Զիբէնհարին: Զէ որ այդ  
բանի մասին նոյն իսկ տների կտուրների վրայ կանգնած  
ազոռաներն էլ են աղաղակում, էլ չեմ ասում նաև ուրիշ  
չառ բաների մասին:

ԶԻԲԵՆՀԱՐ. Յիշեցէ՛ք Վալտէր, թէ ինչ էք խօսում:

ՎԱԼՏԵՐ. Բայց չէ որ նա ինքն էլ ինձ ստիպում խօսե-  
լու: Թող ձեռքս բաց թողնի: Ինչու համար ես պէտք է  
տանջուեմ ուրիշների փոխարէն: Դուք էլ այդ բանը այնքան  
լաւ գիտէք, ինչպէս և ես: Ի՞նչպիսի յարաբերութիւն ու-  
նէիր դուք Հենշէլի հետ առաջներում, երբ դեռ ես կենդանի  
էր նրա առաջին կինը: Դուք կարծում էք այդ բանը ոչ որ  
չէ՛ նկատում: Այժմ դուք նրա մօտ իսկի չէք էլ մտնում:

ԶԻԲԵՆՀԱՐ. Թէ մենք նրա հետ ինչպիսի յարաբերու-  
թիւն ունենք, այդ մեր մասնաւոր գործն է: Խնդրում եմ  
ձեզ այդ բանի մէջ չխառնուել:

ՎԱԼՏԵՐ. Բայց երբ մեռնում է նրա բոլորովին առողջ  
առաջին կինը և նրանից երկու ամիս յետոյ էլ մեռնում է  
Գուստլին, ես կարծում եմ, որ դա արդէն մասնաւոր  
գործ չէ:

ՀԵՆՇԵԼ. Ի՞նչ... Հաննէին այստեղ... (Տիկ. Հենշէլը  
վազելով ներս է մտնում, մաքրելով ձեռքերը. ինչպէս  
երևում է նկել է աշխատելուց անմիջապէս յետոյ):

ՏԻԿ. ՀԵՆՇԵԼ. Ինչո՞ւ համար ես այդպէս գոռում:

ՀԵՆՇԵԼ. Լաւ է, որ դու այստեղ ես: Այս պարոնը  
ասում է...

ՏԻԿ. ՀԵՆՇԵԼ. (Ցանկանում է դուրս գնալ): Յիմարու-  
թիւններ են: Զրպարտութիւններ են:

ՀԵՆՇԵԼ. Դեռ սպասիր:

ՏԻԿ. ՀԵՆՇԵԼ. Ինչպէս երևում է դուք ամենքդ էլ միա-  
տին էք հարբել: Այդ ինչ էք մտածել դուք: Ես ձեր ծաղրի  
առարկան եմ, ինչ է: (Ցանկանում է դուրս գնալ):

ՀԵՆՇԵԼ. Հաննէ... Ես խորհուրդ չեմ տալիս: Այս  
մարդը ասում է...

ՏԻԿ. ՀԵՆՇԵԼ. Իմ ինչ գործն է, թէ նա ինչ է ասում:

ՀԵՆՇԵԼ. Իբր թէ դու ինձ խաբում ես:

ՏԻԿ. ՀԵՆՇԵԼ. Ի՞նչ: Ի՞նչ: Ի՞նչ...

ՀԵՆՇԵԼ. Այո: Նա իրաւունք ունի այդ բանը ասելու,  
հա՛... Եւ իբր թէ մենք... Կնոջս...

ՏԻԿ. ՀԵՆՇԵԼ. Ե՛ս: Ստո՛ր ստախօսութիւն (Գողմոցով  
ծածկում է ղէմքը եւ դուրս է փախչում):

ՀԵՆՇԵԼ. Որ ես... Կնոջս... որ մենք միասին... Որ մեր  
Գուստլին... Լա՛ւ: Լա՛ւ: (Բաց է թողնում Վալտէրի ձեռքը  
եւ խոխուալով գլուխը խոնարհում է ղէպի սեղանը):

ՎԱԼՏԵՐ. Նրանք ուղում են ինձ խաբեբայ դարձնել:



## ՀԻՆԴԵՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Առաջին երեք գործողութիւնների միևնոյն սենեակը: Գիշեր է. լուսնի պայծառ լոյսը լուսամուտով ներս է թափանցում: Սենեակը դատարկ է: Զորրորդ գործողութեան մէջ պատահած դէպքերից յետոյ անցել է մի քանի օր:

Հարեան սենեակում ճրագ են վառում. մի քանի վայրկեանից յետոյ ներս է մտնում Հենշէլը՝ արճիճէ մոմակալը ձեռքին: Նա հագել է կաշուէ անդրավարտիկ և գիշերուայ ոտնամաններ: Հենշէլը դանդաղութեամբ մօտենում է սեղանին, անվճռական կերպով դիտում է իր շուրջը, նայում է լուսամտին, յետոյ ճրագը դնում է սեղանի վրայ և լուսամուտի մօտ նստում: Յետոյ ձեռքը դնում է ծնօտի վրայ և նայում լուսնին:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. (Միւս սենեակից): Մարդ: Այ՛ մարդ: Ի՞նչ ես անում այդտեղ: Այդ ի՞նչ սովորութիւն է թափառել բոլոր անկիւններում: (Կիսամերկ դիտում է սենեակը): Որտեղ ես դու: Եկ և քնիր: Փա՛ռք Աստուծոյ, արդէն գիշեր է: Վաղը էլի չաէտք է կարողանաս ժամանակին վեր կենալ: Նորից պէտք է պարկի նման քաշ դաս, իսկ գրտումը գործերն երեսի վրայ մնան: (Սենեակից զալիս է եւ կիսահագնուած, զարմացած ու վախճնալով մօտենում է Հենշէլին): Ի՞նչ ես անում այդտեղ, հմ:

ՀԵՆՁԷԼ. Ե՛ս:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ինչո՞ւ համար դու նստում ես և ոչ մի խօսք չես ասում:

ՀԵՆՁԷԼ. Ես նայում եմ ամպերին:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ա՛խ, Տէր Աստուած: 25-ը որ դու կարող ես այդպէս գծուել: Ի՞նչ գործ ունիս երկնքի հետ, կ'ցան-

կանայի իմանալ ես: Եւ այդպէս ամեն գիշեր է, ա՛յ քեզ տանջանք: Դու երբէք հանգստութիւն չունիս... Ախր ինչո՞ւ համար ես այդպէս նայում: Դո՛նէ մի խօսք ասա:

ՀԵՆՁԷԼ. Նրանք այնտեղ... Վերևում...

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Դու երազում ես, ինչ է: Զարթնիր Վիլ-հելմ: Լսում ես: Պառկիր անկողնում և լաւ հանգստացիր: Այնտեղ ամպեր են և ուրիշ ոչինչ:

ՀԵՆՁԷԼ. Ով աչքեր ունի, նա կարող է տեսնել...

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Այդպէս կարելի է գծուել:

ՀԵՆՁԷԼ. Ես չեմ գծուել:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ես այդ չեմ ասում: Միայն եթէ այդպէս շարունակես, կարող ես գծուել: (Նա ցրտից դողում է, հանում է վերնագգեստը եւ մաքրում է վառարանի մոխիրը):

ՀԵՆՁԷԼ. Ժամը քանիսն է:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Երկուսից քառորդ է քանի:

ՀԵՆՁԷԼ. Բայց դու ժամացոյցի տեղը փոխել ես... 25-ը որ ժամացոյցը միշտ այնտեղ, դռան մօտն էր կախուած:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ի՞նչ է մտել գլուխդ: Ժամացոյցը իր առաջուայ տեղումն է կախուած:

ՀԵՆՁԷԼ. (Բարձրանում է): Քնամ և մտնեմ ախոռը:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ես քեզ ասում եմ եկ և քնիր, եթէ ոչ աղմուկ կրարձրացնեմ: Դու այժմ ախոռում ոչ մի գործ չունես: Արի պառկիր անկողնում, չէ՞ որ կէս գիշերից արդէն անց է:

ՀԵՆՁԷԼ. (Հանգիստ կերպով կանգ է առնում եւ նայում Հաննէին): Որտեղ է Դուստլին:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ի՞նչ պէտք է անես: Նա արդէն անկողնում քնած է... Ի՞նչ է տուել քեզ այդ աղջիկը: Նա, փառք Աստուծոյ, ամեն ինչ ունի: Ես նրան ոչ մի վատ բան չեմ տեսնում:

ՀԵՆՁԷԼ. Նա ամեն ինչ ունի: Նա գնացել է քնելու:



Նա վաղուց է պատկել քնելու... Գուտտլին եմ ասում: Ես  
Բերթայի մասին չեմ խօսում:

**ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ.** (Բարձր ծայնով լաց է լինում, քերա-  
նը գողտցով ծածկելով): Ես կ'փախչեմ... կ'փախչեմ... Ես  
չեմ այլևս կարող այստեղ մնալ:

**ՀԵՆՁԷԼ.** Գնա, գնա քնիր: Յետոյ ես էլ կ'գամ: Արտա-  
սուներները այժմ ոչինչ չեն օգնիր: Թէ ով է մեղաւորը, այդ  
միայն Աստծուն է յայտնի: Գու մեղաւոր չես: Ուրեմն  
չպէտք է լաց լինիս: Միայն Աստուած և ես գիտենք, թէ  
ով է մեղաւորը: (Գուռը ըսնալիով կողպում է):

**ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ.** (Խսկոյն ըաց է անում դուռը): Ի՞նչու  
համար ես դուռը կողպում: Ես չեմ թողնիլ ինձ այստեղ  
փակելու:

**ՀԵՆՁԷԼ.** Ե՛ս: Ես ինքս էլ չգիտեմ, թէ ինչու դուռը  
կողպեցի:

**ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ.** Այդ բոլոր բաները չար մարդիկն են քեզ  
համար պատրաստել: Երբեք իցէ նրանք պատասխանատու  
կլինին այն բաների համար, ինչ որ նրանք գլուխդ մտցրին:  
Ես քո աղջկանը հարազատ աղջկայ պէս եմ պահպանել:  
Հետեապէս և նա չէր կարող դրանից մեռնել: Ես հօ չեմ  
կարող մեռելին յարութիւն տալ: 2<sup>է</sup> որ ում վիճակուած է  
մեռնել, նա անպայման պէտք է մեռնի: Ոչ մի կերպ դու  
չես կարող պահել. միենոյն էլ նա այստեղից կ'զնայ: Գու  
ինքզ էլ լաւ գիտես, որ Գուտտլին միշտ հիւանդոտ էր: Էլ  
ինչու համար ես ինձ հարցնում և նայում ինձ վրայ այնպէս,  
կարծես թէ ես մի ինչ որ սարսափելի բան եմ արել  
Գուտտլինին:

**ՀԵՆՁԷԼ.** (Անվստահ): Կարող է և պատահել: Այդտեղ  
և ոչ մի անկարելի բան չկայ:

**ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ.** (Իրանից դուրս գալով): Այո, եթէ ես  
այդ բանը առաջուց իմանայի, ես այստեղից ամենից շուտ  
կ'հեռանայի: Ա՛խ, եթէ դու այդ խօսքերը ինձ առաջուց ա-

սած լինէիր: Եւ ահա այժմ ինչ եմ ստիպուած քեզանից լը-  
սելու: 2<sup>է</sup> որ ես ցանկանում էի այստեղից հեռանալ, ով  
ստիպեց ինձ այն ժամանակ մնալու, հա՛, ով ինձ չթողեց  
այս տանից հեռանալու: Ես միշտ կարող էի գլուխս պահել:  
Ես ոչ մի բանից չեմ վախենում և գիտեմ աշխատել: Գու ինքզ  
ինձ չթողեցիր: Իսկ այժմ ահա թէ ինչ ես տալիս ինձ դրա  
փոխարէն: Այժմ և պէտք է ամեն բանի համար պատաս-  
խանատու լինիմ:

**ՀԵՆՁԷԼ.** Կարող է պատահել, դուցէ և պատասխանա-  
տու լինիս: Ինչ ուզում է, թող լինի: Ինչ պէտք է անել:  
(Ծորից փախում է դուռը):

**ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ.** Մի կողովիր, Վիլհելմ: Հակառակ դէպ-  
քում ստիպանին այստեղ կրեբեմ: Լսում ես:

**ՀԵՆՁԷԼ.** Սո... Հանգիստ... Լսեցիր... Լսում ես, նա  
վաղում է նախասենեակով: Լսում ես... Ա՛յ, տես, այժմ նա  
գնում է դէպի լուացարանը: Լսում ես նրա ձայնը: Կանգնում  
և լուացում է...

**ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ.** Ի՛նչ ես ասում: Ա՛յ մարդ, դու ցնորմեղ  
ես: 2<sup>է</sup> տեսնում, որ լուացարանը այստեղ է:

**ՀԵՆՁԷԼ.** Լաւ, այո: Գիտեմ, գիտեմ: Սրանք ինձ չեն  
խաբոււ: Իմացողը արդէն գիտէ: (Արագութեամբ): Ուրիշ և  
ոչ մի բան չեմ ասում: Գէ՛հ, գնանք այժմ, գնանք քնելու:  
Առաւօտը երեկոյից աւելի իմաստուն է: (Միշտ լսելու նա զը-  
նում է դէպի հարեան սենակը, տիկին Հենշէլը տառնց  
աղմուկի ըաց է անում մուտքի դուռը եւ իսկոյն դուրս է  
գնում):

**ՀԵՆՁԷԼ.** (Դուան վռայից կախուած մտրակն է վերց-  
նում): Ահ, սա Տրիեռից բերած հին մտրակն է: Ինչպէ՛ս է  
այստեղ ընկել այս հին մտրակը: Մի տարուց աւելի է, որ  
սա աշրժիւ չէ ընկել: Դա գնել եմ դեռ հանդուցեալի կեն-  
դանութեան ժամանակ: (Ահանջ է դնում): Ինչ ես ասում:  
Ինչպէ՛ս: Գէ՛հ, իհարկէ... Ոչինչ... Իսկ եթէ: Կարող է և



այդպէս լինել: Լաւ... Ես անելիքս արդէն գիտեմ: Դէ՛հ, դու էլ գո՛հ եղիր: (Բաց դռնով ներս է մտնում Զիբէն-հարը եւ նշաններով հասկացնում է իր նտելից եկող Վերմն-լսկիրիսին եւ տիկին Հենշէլին, որ նրանք ներս չմտնեն: Նա ընդորովին հագնուած է, միայն վզնոցի փոխարէն մետաքսէ թաշկինակ է կապել վզին: Վերմնլսկիրիսը խալաթ է հագնել):

ԶԻԲԷՆՀԱՐ. Բարի երեկոյ, պարոն Հենշէլ: Դուք դեռ չէ՞ք պառկել: Հիւանդ էր, ինչ է: Ի՞նչ է պատահել ձեզ հետ: ՀԵՆՇԷԼ. (Ապշած նայում է նրան եւ յետոյ շատ պարզ): Դիտէ՛ք, ես չեմ կարող քնել: Քունս բոլորովին կրտուրել է: Լաւ կլինէր մի բան ընդունէի, բայց չգիտեմ ինչ: Ձեւ հասկանում, թէ ինչ է պատահել ինձ հետ: Միայն Աստուած գիտէ:

ԶԻԲԷՆՀԱՐ. Դիտէ՛ք ինչ, հին բարեկամս: Այժմ դուք պառկեցէ՛ք հանգիստ քնելու, իսկ վաղը ես բժշկին այստեղ կուղարկեմ: Դուք պէտք է լուրջ կերպով բժշկուէ՛ք:

ՀԵՆՇԷԼ. Ոչ մի բժիշկ չէ կարող ինձ օգնել:

ԶԻԲԷՆՀԱՐ. Ինչո՞ւ համար էք այդպէս ասում, այդ մենք յետոյ կտեսնենք: Բժիշկ Րիխտէրը շատ լաւ է հասկանում իր գործը: Իմ կինս էլ մի բանի չաբաթ շարունակ անքնութիւնից տանջւում էր եւ քիչ էր մնում նրա գլուխը պատռուէր: Չորեքշաբթի օրը նա գեղ ընդունեց եւ այժմ գիշերները մեռածի նման է քնում:

ՀԵՆՇԷԼ. Այո, այո, կարող է պատահել: Ես բոլորովին կ'աւանայի, եթէ կարողանայի քնել... Բայց իսկապէս հիւանդ է ձեր տիկինը:

ԶԻԲԷՆՀԱՐ. Այո, մենք ամենքս էլ մեղ լաւ չենք զգում: Երանի շուտով երկուշաբթի օրը հասնէր եւ այն ժամանակ ամեն ինչ լաւ կլինէր:

ՀԵՆՇԷԼ. Հա՛, երկուշաբթի օրը դուք յանձնում էք, այնպէս չէ՛:

ԶԻԲԷՆՀԱՐ. Այո, յոյս ունիմ, որ երկուշաբթի օրը ամեն ինչ պատրաստ կ'լինի: Մինչև այդ ժամանակը դեռ անքան դործ ունենք զանազան թղթերի եւ ինվենտարը կազմելու հետ, որ նոյն իսկ հագնուելու ժամանակ չ'կայ... Լոնցէք Հենշէլ, գնացէ՛ք քնելու: Ամեն մարդ էլ վիշտ ունի: Կեանքը կատակ չէ, ամեն մարդ էլ ստիպուած է նրա մասին լաւ մտածել: Իսկ եթէ ձեր գլխով մռայլ մտքեր են անցնում, այն ժամանակ մի ընդունէ՛ք դրանց ձեր սրտին չափազանց մօտ: ՀԵՆՇԷԼ. Չատ շնորհակալ եմ ձեզանից, պարոն Զիբէն-հար: Ներեցէ՛ք ինձ: Ցանկանում եմ առողջութիւն թէ՛ ձեզ եւ թէ՛ ձեր տիկնոջը:

ԶԻԲԷՆՀԱՐ. Վաղը դեռ կտեսնուինք:

ՀԵՆՇԷԼ. Չարժէ դրա համար ինձ շնորհակալութիւն անել: Չէ՛ որ մենք միմիանց յաճախ ենք ծառայութիւններ մատուցել, երբ այստեղ հարեաններ էինք: Երկուսս էլ միմիանց փոխադարձաբար պարտական ենք: Ինչ կարիք կայ խօսելու: Եւ ինչպէս առաջ միմիանց հետ բարեկամներ ենք եղել, այդպէս էլ յոյս ունիմ, այսուհետեւ էլ կլինենք:

ՀԵՆՇԷԼ. (Լուռ կեցւով մի քանի քայլ առաջ է գնում դէպի լուսամուտը եւ այնտեղից նայում է երկնքին): Հէնց հարցն էլ գրանումն է: Ժամանակը չեւ կարող կանգնեցնել: Ահա եւ Կարլոսիկը. նա էլ մեզ երբէք չէ այցելել... Խօսելու կարիք չկայ. դուցէ եւ դուք մեղաւոր չէք: Ոչ մի լաւ բանի մանուկը չէր սովորել: Առաջներում ամեն ինչ ուրիշ տեսակ էր:

ԶԻԲԷՆՀԱՐ. Ես չեմ հասկանում, Հենշէլ, թէ դուք ինչի մասին էք խօսում:

ՀԵՆՇԷԼ. Դուք էլ ոտք չգրեցիք այս սենեակում... Ահա արդէն ինքը ամիս կլինի:

ԶԻԲԷՆՀԱՐ. Ա՛խ, ես այնքան դործ ունէի այդ ամբողջ ժամանակի ընթացքում:

ՀԵՆՇԷԼ. Առաջներում դուք զալիս էիք: Ո՛չ, ո՛չ, ես



գիտեմ, որ դուք էլ ուղիղ էք ասում: Այն, այն, ամենքը արդար են, ամենքը: Ես այլևս չպէտք է խնամով հապարտանամ: ԶԻՔԵՆԶԱՐ. Հանգստացէ՛ք, Հենչէ՛լ, հանգստացէ՛ք:

ՀԵՆՉԷՒԼ. Ո՛չ, ո՛չ, խօսենք մի քիչ դրա մասին: Տեսնում էք, ամեն բանում ես եմ մեղաւորը. ես գիտեմ, որ մեղաւորը միմիայն ես եմ... Թող այդպէս լինի. բայց չէ՞ որ այդ բանը դեռ վաղուց էր սկսուել, բանի որ ես դեռ... Այս... Կնոջս... Հանդէս հետ... չէի ամուսնացել .. և այդպէս սկսեց... հեղուկացեալ... քիչ քիչ բազմա շուռ դալ. ամենալաւ մարտիկ կոտորուեց և հաւատարիմ շունս, Զպիցը մնաց կառքի տակ: Յետոյ մէկը միւսի յետեւից մեռան իմ երեք ձիերը, որոնցից ամենալաւը երեքհարկուր թալէր արժէք: Վերջապէս մեռնում է կինս: Ե՛յն ժամանակ արդէն ես հասկացայ, որ այդ բոլորը ինձ համար թանկ էր: Երբ կինըս մեռաւ, ես կարծեցի, որ երեւի դժբաղդութիւնը դրանով էլ կվերջանայ: Ա՛խ, ո՛չ, նա դեռ մտածեց... Օ՛հ Գուստլին չեմ ասում ես: Կարցնում ես կնոջդ, կարցնում ես և երեխայիդ: Ո՛չ նա դեռ խորամանկութեամբ ինձ համար թակարդ սարքեց և ես ընկալ նրա մէջ:

ԶԻՔԵՆԶԱՐ. Ով սարքեց ձեզ համար թակարդ:

ՀԵՆՉԷՒԼ. Գուցէ սատանան, բայց գուցէ և մի ուրիշը: Բայց ճշմարիտ է, որ նա պէտք է ինձ խեղդի: *Հռութիւն*:

ԶԻՔԵՆԶԱՐ. Ինչպիսի՞ դժբաղդ միտք...

ՀԵՆՉԷՒԼ. Ո՛չ, ո՛չ, ես չեմ վիճում: Ես վատացայ ոչ թէ իմ գործած մեղքի շնորհիւ: Ես կաշկանդուեցի շղթաների մէջ: Բայց գուցէ մեղաւորը ես եմ: Ո՞վ է իմանում... Հարկաւոր էր աւելի զգոյշ լինել: Զէ՛ որ սատանան ինձանից աւելի խորամանկ է: Բայց ես հէնց ուղիղ գնում էի, առանց գիտելու շուրջս:

ԶԻՔԵՆԶԱՐ. Դուք ձեր թշնամին էք, Հենչէ՛լ: Դուք կըւում էք ինչ որ ուրուականների հետ, որոնք երբեք գոյութիւն չունին: Սատանան ոչինչ չէ արել: Ո՛չ մի թակարդի

մէջ էլ չէք ընկել: Եւ ոչ որ էլ ձեզ չի խեղդել: Այդ բոլորը ցնորք է և ուրիշ ոչինչ: Միմիայն երեւակայութիւն է:

ՀԵՆՉԷՒԼ. Սպասենք և կտեսնենք:

ՀԻՔԵՆԶԱՐ. Բայց ասացէք ինձ բացատրո՞ւյ այն բոլորը ի՞նչ որ կայ ձեր սրտում: Տեսէ՛ք և ոչինչ չէք գտնիլ: Դուք ոչ որեւէ վատ բան էք արել, ինչպէս դուք ասում էք, ոչ էլ մեղաւոր էք որեւէ բանի համար:

ՀԵՆՉԷՒԼ. Այդ ես աւելի լաւ գիտեմ:

ԶԻՔԵՆԶԱՐ. Դէ՛հ ասացէք տեսնեմ, ի՞նչ է:

ՀԵՆՉԷՒԼ. Այստեղ էր դրած այն մահճակալը, սրտեղ նա պառկած էր և ես հէնց այստեղ էլ նրան խոտուում տուեցի: Ես նրան խօսք տուեցի, բայց այդ խօսքը չկատարեցի:

ԶԻՔԵՆԶԱՐ. Ի՞նչպիսի խոտումն:

ՀԵՆՉԷՒԼ. Դուք ինքներդ գիտէք... Ես խախտեցի խոտումս և մատնեցի նրան: Նա ընկճեց ինձ: Ես ինքս ինձ խորտակեցի... և ահա ինչպէս տեսնում էք, նա չէ կարող հանգստութիւն գտնել:

ԶԻՔԵՆԶԱՐ. Դուք ձեր հանգուցեալ կնոջ մասին էք խօսում:

ՀԵՆՉԷՒԼ. Դէ՛հ, իհարկէ, նրա մասին եմ խօսում... Նա իր գերեզմանում հանգիստ չէ գտնում: Նա թափառում է ամեն տեղ և չէ կարողանում հանգստանալ... Երբ ձիաներին մաքրում եմ նա մօտս կանգնած է. խողանակը արկղից հանում եմ և ահա նա կանգնած է ձիերի մօտ. երբ ես ցանկանում իմ անկողնումս պառկել... և ահա նա արդէն պառկած է այնտեղ և ինձ վրայ է նայում: Նա իմ ժամացոյցի տեղն էլ փոխել է... Թրխկթրխկացնում է պատին... Կամ զարկում է ապակուն... Իր ձեռքը դնում է կրծքիս և երբ ես շնչում եմ... Ո՛չ, ո՛չ, ես այդ լաւ գիտեմ: Պէտք է այդ բոլոր բաները կրել, որպէսզի հասկանալ: Ամեն բան չէ կարելի պատմել: Հաւատացէ՛ք ինձ, որ այդ բոլոր բաները անցել են իմ գլխովս:



**ԶԻՅԵՆԶԱՐ.** Վերջին անգամ եմ ասում ձեզ, Հենչէլ: Ուշքի եկէք դուք և լաւ մտածեցէք: Դուք ասացէք ձեզ, ես հիւանդ եմ, հիւանդ և քշեցէք ձեզանից այդ բոլոր աներևոյթ սգիներին: Այդ բոլորը միմիայն երևակայութիւն է և ուրիշ ոչինչ: **ՀԵՆՉԷՆԸ.** Դուք այն ժամանակն էլ էիք այդպէս ասում: Այդպէս, գրեթէ այդպէս:

**ԶԻՅԵՆԶԱՐ.** Գուցէ և ես չեմ բացասում, որ դուք այն ժամանակ ամուսնանալով, դրա համար ունէիք կատարեալ իրաւունք: Հետևապէս և ձեր կողմից գործուած՝ ոչ մի մեղքի կամ յանցանքի համար խօսք լինել չէ կարող:

**ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ.** (Ներս մտնելով): Գնանք ինձ մօտ, Հենչէլ: Վառներ դաղը և թուղթ խաղանք: Այնտեղ կարող ենք և դարեջուր կամ ինչոր դուր ցանկանում էք խմել՝ և ծխախոտ ծխել: Թող այն ժամանակ երևան չար ոգիները: Երկու ժամից յետոյ բոլորովին կլուսանայ և այն ժամանակ մենք սուրկ կլմենք և կ'գնանք կառքով զբօսնելու: Թող սատանան ինձ տանի, եթէ դուք նորից մեր հին Հենչէլը չդառնար:

**ՀԵՆՉԷՆԸ.** Կարող է պատահել: Կարելի է փորձել:

**ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ.** Դէ՛հ, գնանք ուրեմն:

**ՀԵՆՉԷՆԸ.** Ես այլ ևս չեմ դալ ձեզ մօտ:

**ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻՍ.** Ի՛նչ կլինի: Այդ բոլորը դատարկ բաներ էին: Թիւրամացութիւն էր և ուրիշ ոչինչ: Այժմ ամեն բան արդէն պարզ է: Ես Հաուֆէին այլևս չեմ թողնել ինձ մօտ գալու: Իսկապէս այն ծերունին միշտ հարբած է: Մարդուս տաքացած ժամանակը ասած խօսքերի վրայ այդքան էլ ուշադրութիւն չպէտք է դարձնել: Իմ կարծիքով այդպիսի խօսքերը պէտք է մէկ ականջով մտցնել, իսկ միւսով բաց թողնել: Աջմարիտ եմ ասում, որ ես միշտ այդպէս եմ անում:

**ՀԵՆՉԷՆԸ.** Այդպէս աւելի լաւ է: Դուք ճշմարիտ էք ասում: Բայց այնուամենայնիւ... Ես ձեր գարեջրատունը այլևս

չեմ դալ: Ես աւելի շուտ կառքով կ'ճանապարհորդեմ դուցէ... Նրանք այլևս ինձ ամենուրեք չեն հալածել: Իսկ այժմ բարի գիշեր: Ես ցանկանում եմ քնել:

**ԶԻՅԵՆԶԱՐ.** Իսկ ինչպէս կլինի Հենչէլ, եթէ ինձ հետ, միասին գնանք վերև. ինձ մօտ ճրագը դեռ վառւում է և զրասենեակում տաք է. մենք երեքս միասին կարող էինք մի անգամ խաղալ: Ես էլ հաղիւ թէ քնեմ:

**ՀԵՆՉԷՆԸ.** Այո, այո, համեցէք: Վաղուց է որ, ես թուղթ չեմ խաղացել:

**ՏԻԿ.** **ՀԵՆՉԷՆԸ.** Ի՛նչ եմ ասում, գնա: Միւսնոյն է դու չպէտք է քնես:

**ՀԵՆՉԷՆԸ.** Ես չպէտք է գնամ... Հասկացա՞ր:

**ՏԻԿ.** **ՀԵՆՉԷՆԸ.** Իսկ եթէ դու այստեղ մնաս, ես դուրս կ'գնամ: Ո՛վ գիտէ, թէ գիշերը դու այստեղ ինչ կ'սկսես: Նորից կ'սկսես դանակով խաղալ: Այո, այո, նա երեկ ամբողջ ժամանակը դանակով էր ման գալիս: Ես էլ իմ կեանքիս համար եմ վախենում, չէ՞:

**ՀԵՆՉԷՆԸ.** Ո՛չ, ես ոչ մի պայմանով վերև չեմ գնալ: Հէնց ինքը ինձ խորհուրդ է տուել այդ անելու, իսկ յետոյ ինքն է ամենից առաջ սկսել արհամարհել ինձ:

**ԶԻՅԵՆԶԱՐ.** Ես ձեզ երբէք չեմ արհամարհել, Հենչէլ: Դուք անպայման ազնիւ մարդ: Եր Այգալիսի յիմարութիւններ մի առէք: Ճակատագրից չէ կարելի փախչել, ամեն մարդ պէտք է հպատակուի զրան: Այդ բանը հեշտ չէ, իհարկ է, բայց ինչ պէտք է անել: Դուք թէև հիւանդացի, բայց մնացել էք միւսնոյն ազնիւ մարդը: Երբուք եմ ձեզ:

**ՀԵՆՉԷՆԸ.** Գուցէ և այդպէս է, պարոն Զիրէնհար... Դէ՛հ լաւ: Մի ուրիշ բանի մասին խօսենք: Դուք դրանում մեղաւոր չէք, այդ ես գիտեմ: Ես փեսային էլ չեմ մեղադրում: Նա շատ լաւ գիտէ, թէ ինչ է խօսում: Բայց նա ինքն է գնում մարդկանց մօտ և պատմում նրանց: Նա ամեն տեղ է գնում... և հաւանութիւն եղբոր մօտն էլ է արդէն եղել:



ՎԵՐՄԵԼՍԿԻՐՍ. Ո՞վ է գնում: Դրա մասին ոչ մի մարդ էլ անգամ չէ մտածում: Ամենքը արդեն վաղուց են մոռացել այդ պատմութիւնը:

ՀԵՆՁԷԼ. Ինչ էլ որ անէր, ինձ չէր կարող համոզել: Նա արդեն գիտէ իր անելիքը: Նա ամենուրեք և ամենքին կտախի հաւատալ: Իսկ եթէ մինչև անգամ արդէն մոռանային այդ բոլոր բաները և շան նման ետևիցս ընկնէին միևնոյն է ինձ չես կարող օգնել և ինձ տանջանքից ազատել:

ԶԻՅԷՆՀԱՐ. Հենչէլ, մենք դուրս չենք գնալ, մինչև որ դուր խելքի չգար: Դէ՛հ, հանգստացէ՛ր է՛է:

ՀԵՆՁԷԼ. Իմ խելքս գլխումս է և բոլորովին հանգիստ եմ:

ԶԻՅԷՆՀԱՐ. Դէ՛հ լաւ, մի րիչ պարզ խօսենք: Դուր արդէն տեսնում էր, որ ձեր կինը զղջում է: Գարեջրատան ծառայողն այլևս այստեղ չէ, նա այստեղից բաւական հեռու է գնացել և դուր նրան այլևս չէր տեսնիր: Զէ՛ որ ամեն մարդ կարող է զրպարտել: Իսկ այժմ միմիանց ձեռք մեկնեցէ՛ր և հաշտուեցէ՛ր. թողէ՛ր այն բոլորը, ինչ որ հարկաւոր է թողնել և հաշտուեցէ՛ր իրար հետ:

ՀԵՆՁԷԼ. Կարիք չկայ հաշտուելու: (Հաննէին): Իսկ, ձեռքս կարող եմ նրան տալ: Հաննէ, եթէ դու նոյն իսկ մեզք ես գործել, թող Աստուած քո դատաստանը լինի գրաւ համար: Բայց ես չպէտք է դատապարտեմ: Ահա միայն... Ինչ վերաբերում է Գուտտիին... Եթէ ճիշտ իմանայի, որ...

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Սպանիր ինձ տեղնուտեղը և թող ես այստեղից կենդանի դուրս չ'գնամ, եթէ ես որեւիցէ բանով մեքաւոր եմ Գուտտիի մահուան համար:

ՀԵՆՁԷԼ. Հէնց ես էլ այդ եմ ասում: Բոլորի համար մեղաւորը ես եմ... Լաւ, վաղն էլ դեռ կ'իստենք, իսկ մինչև այն ժամանակ գործը դեռ շատ ջուր կ'վերցնի:

ՎԵՐՄԵԼՍԿԻՐՍ. Վառարանը լաւ վառեցէ՛ր և ձեզ համար մի լաւ սուրճ պատրաստեցէ՛ր: Անձրեկից յետոյ միշտ լուսաւորում է արեգակը: Այդպէս է լինում և ամուսինների

մէջ: Առանց օրստի ամուսնութիւն չի լինիլ: Բայց ամենապիստաւորը՝ օրօր եմ ասում: (Իրեն ճնւացում է իւր թէ մանուկ է օրօրում): Ահա թէ ինչ է հարկաւոր ձեզ: Դուր այդ պէտք է ունենար: (Ուրախ զարկում է տիկին շենչէլի ուսի): Մեր ձերունին այս փոքրիկ ձկանը սիրում է: Որտե՛ս և կայծա՛կ: Վիլհէլմ շենչէլ: Ա՛յ գրո՛ղը տանի ձեզ նման հսկային: Ոչ մի բան դրանից աւելի հեշտ չէ: Դէ՛հ, բարի գիշեր, պարոններ:

ԶԻՅԷՆՀԱՐ. Ամեն ինչ լաւ կ'լինի: Միայն թէ չվհատուէ՛ր, շենչէլ:

ՎԵՐՄԵԼՍԿԻՐՍ. Սառնարիւնութիւն, ամենից առաջ սառնարիւնութիւն: (Զիբէնհարը և Վերմելսկիքը դուրս են գնում: շենչէլը դանդաղ կերպով գնում է դէպի դուռը և նորից ցանկանում է փակել)

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Թո՛ղ: Մի փակիր:

ՀԵՆՁԷԼ. Այդպէս... Ի՞նչ ես անում այդտեղ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. (Սարսափած կանգնում է վառարանի մօտ): Տեսնում ես, որ կրակ եմ անում:

ՀԵՆՁԷԼ. (Ժանր կերպով նստում է սեղանի մօտ): Լաւ կ'լինի, եթէ ճրագն էլ վառես: (Դուրս է քաշում և սենյանի արկղը):

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ի՞նչ ես փնտռում այդտեղ:

ՀԵՆՁԷԼ. Ոչինչ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ուրեմն փակիր արկղը: (Մօտենում եւ ներս է քաշում արկղը): Այնպէս արա, որ Բերթան էլ չըզարթնի: (Լուռ թիւն):

ՀԵՆՁԷԼ. Նա երկուշաբթի օրը պէտք է հեռանայ: Այն ժամանակ մենք մենակ կ'մնանք:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ո՞վ է գնում երկուշաբթի օրը:

ՀԵՆՁԷԼ. Զիբէնհարին եմ ասում: Ո՞վ գիտէ, ինչպէս կ'լինի նորեկը:



ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Նորը հարուստ է. նա հարունակ քեզանից փող չի կորցրել:

ՀԵՆՁԷԼ. Հաննէ, մեզանից մէկնումէկը պէտք է զիջանի: Ես կամ դու: Այո, այո, այդպէս պէտք է լինի: Նայիր ինձ, որքան ցանկանում ես: Ուրիշ կերպ չի կարելի:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ես հեռանամ: Դու ուզում ես ինձ արտաքսել այստեղից:

ՀԵՆՁԷԼ. Այդ մենք դեռ ես կտեսնենք, թէ մեզանից ով կհեռանայ: Կարող է պատահել ես... Բայց գուցէ ես դու... Եթէ ես հեռացայ... Այն ժամանակ ես միայն մի բան հաստատ գիտեմ, որ դու չես կորչիր: Զէ որ դու սայլապանութեան գործը տղամարդու նման ես կառավարում... Բայց այն էլ եմ ասում քեզ, որ այդ բանը ինձանից չէ կախում:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Եթէ մեզանից մէկնումէկը պէտք է այստեղից դուրս գնայ, այդ ես պէտք է լինիմ: Ես դեռ կարող եմ աշխատել: Ես դուրս կ'գնամ եւ ոչ ոք ինձ այլեւս չի տեսնի: Զիբը, սայլերը եւ բոլոր իրերը քոնն են: Դու հօ չես կարող հայրական տնտեսութիւնը թողնել ու հեռանալ: Հետեապէս եւ դուրս գնացողը ես պէտք է լինիմ, որից յետոյ ամեն ինչ կ'վերջանայ:

ՀԵՆՁԷԼ. Այդ դեռ ես վճռուած չէ. ամեն ինչ իր հերթին ունի:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Եւ ինչու համար երկար ձգձգել: Ինչ եղել է, եղել է:

ՀԵՆՁԷԼ. (Ժանը կերպով կանգնում եւ գնում է միւս սենեակը): Իսկ Բերթան. ինչ պէտք է անի՞ նա:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Նրան էլ ուղարկել իր հօր մօտ, Գլօլսդորֆ:

ՀԵՆՁԷԼ. (Արդէն միւս սենեակի դռան մօտ): Բաւական է, վաղը նորից կ'լուսանայ եւ ամեն ինչ կ'վերջանայ, ասում

է Զիբէնհարը: (Սենեակում): Վաղը ամեն ինչ ուրիշ տեսակ կ'լինի: (Լռութիւն):

ՀԵՆՁԷԼ. (Զիբէնու): Բերթան նորից բոլորովին քրտնել է:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Թող քնի, վնաս չունի: Իմ վիզն էլ բոլորովին քրտնել է. . Ահա քեզ կեա՞նք: (Բաց է անում լուսամուտը): Աւելի լաւ է մեռնել:

ՀԵՆՁԷԼ. Ի՞նչ ես խօսում: Ես չեմ հասկանում:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Պառկիր եւ հանգիստ թող ինձ:

ՀԵՆՁԷԼ. Իսկ դու չես գալիս:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Զուտով կ'լուսանայ: (Լաքում է ժամացոյցը):

ՀԵՆՁԷԼ. Ո՛վ է լարում ժամացոյցը:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Դէհ, լռիր վերջապէս. Բերթան կ'զարթնի եւ մենք պէտք է նրա աղմուկը լսենք: Նա կարող է գողաւոր: (Նստում է սենեակի մօտ եւ յինում՝ զլուխը ձեռքերի վրայ): Աւելի լաւ է այստեղից բաշուրի:

Զիբէնհար. (Նայում է սենեակում): Ես նորից եկայ: չը՛մ, ձեր ամուսինը հանգստացաւ:

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Այո, այո, նա գնաց քնելու (Կանչում է): Այ մարդ, Վիլհէլմ:

Զիբէնհար. Սա... Հանգիստ, տիկին Հենչէյ, չնորհակալ եղէք Ստոմուց: Դուք էլ պառկեցէք քնելու: (Դուրս է գնում):

ՏԻԿ. ՀԵՆՁԷԼ. Ինչ պէտք է անել: Փորձեմ: (Մօտենում է դռան, մտնում է ապշած կանգնած եւ ականջ է դնում): Վիլհէլմ: Այ մարդ: Դէհ պատասխանիր: (Աւելի քարճր ծայնով եւ սարսափած): Վիլհէլմ: Մի վախեցրու ինձ: Դու կարծում ես չգիտեմ, որ դու դեռ քնած չես: (Աւելի եւս սարսափելով): Հենչէյ, ես քեզ ասում եմ... (Բերթան զարթնում եւ սկսում է լաց լինել): Լռիր, Բերթա, լռիր: Ի՞նչ է նշանակում այս... Վիլհէլմ, Վիլհէլմ: (Գրեթէ գոռալով):



ԶԻՔԷՆՅԱՐ. (Նորից դիտելով): Ի՞նչ է պատահել ձեզ հետ, տիկին Հենշէլ:

ՏԻԿ. ՀԵՆՇԷԼ. Ես ամբողջ ժամանակը դուռում եմ, իսկ նա ոչինչ չէ պատասխանում:

ԶԻՔԷՆՅԱՐ. Գուր, կարծեմ, գծուել էր: Ի՞նչ էր անում:

ՏԻԿ. ՀԵՆՇԷԼ. Հանդիստ, այնտեղ մի ինչ որ բան է պատահել:

ԶԻՔԷՆՅԱՐ. Ի՞նչ: (Վերցնում է մոմը և զննում դէպի դուռը): Գուր արդէն քնել էր: (Ներս է մտնում: Լուծիւն):

ՏԻԿ. ՀԵՆՇԷԼ. (Զնամարծակուելով ներս մտնել): Դէ՛ս ինչ է: Ի՞նչ է պատահել:

ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻ. (Դիտում է սննեակը): Ո՞վ է այդտեղ:

ՏԻԿ. ՀԵՆՇԷԼ. Պարոն Զիրէհնար... Օ՛հ, ինչպէս խաղաղ է ամեն ինչ... ոչ որ չէ պատասխանում...

ԶԻՔԷՆՅԱՐ. (Մեռածի պէս գունատ, աճապարելով դուրս է գալիս, Բերթան ձեռքերի վրայ): Վերցրէք երեխային և միասին գնացէք վերև, կսոջս մօտ:

ՏԻԿ. ՀԵՆՇԷԼ. (Բերթան ձեռքերին): Ի սէր Աստուծոյ, ինչ է պատահել:

ԶԻՔԷՆՅԱՐ. Իր ժամանակին կիմանար:

ՏԻԿ. ՀԵՆՇԷԼ. (Սկզբում իրան զսպելով, իսկ յետոյ աղաղակելով): Աստուած իմ, նա իրեն մի բան է արել: (Դուրս է գնում երեխայի հետ):

ՎԵՐՄԵԼՍԿԻՐԻ. Բժիշկ...

ԶԻՔԷՆՅԱՐ. Արդէն ուշ է: Ոչինչ չի օգնիլ:

ՎԱՐԱԳՈՅՐԸ ԻՋՆՈՒՄ Է





Գ. Դատարանի—«Գումտունքերգի» հրատարակութիւնները:

|                                                                            |         |
|----------------------------------------------------------------------------|---------|
| 1. Պոմպէյի վերջին օրերը, Լօրդ Լիտտոնի, թարգմ. Զ. Միրզախանի                 | 1 50—կ. |
| 2. Ապետ, վ. Փափաղեանի                                                      | 15 կ.   |
| 3. Կեանքը ծովերի խորքում, Լուսկեվիչի, թարգմ. Ստ. Մալխասեանի                | 30 կ.   |
| 4. Տրիլլի, գրած 4 արար. թարգմ. Լ. Մելիք-Աղամեանի                           | 25 կ.   |
| 5. Ետ-ատ, փոք. 1 արար. 2 պատկեր. Յակ. Ղազարեանի                            | 25 կ.   |
| 6. Դարձինիզմ, Ս. Բարադեանի (Դարձինի պատկերով)                              | 50 կ.   |
| 7. Աղնիւ զօղ, վիպակ Զ. Մ. Դատաւելովսի, թարգմ. Ն. Չ.                        | 10 կ.   |
| 8. Ինքնավարութիւն և Զեմալօ, Բէլօկօնովսի, թարգմ. Կ. Զաւարեանի               | 15 կ.   |
| 9. Տնտեսագիտական զրոյցներ, Կարիշևի, թարգմ. Կ. Զաւարեանի                    | 40 կ.   |
| 10. Въ введенію на Кавказъ Земскаго Самоуправленія Кн. Г. М. Туманова.     | 20 в.   |
| 11. Քերականութիւն մարերի լեզուի, (Ա. Բ. և Գ. մաս. Ստ. Պալտասեանի           | 75 կ.   |
| 12. Ընդհանուր պատմ. Հին-Դար, վիճադրադօլի թարգմ. Խաժակի                     | 1 ր.    |
| 13. Եւրոպա և Հալատուն, Ամֆրոստորովի, թարգմ. Ա. Միրթարեանի                  | 10 կ.   |
| 14. Փուչ զուտի, գրած 5 դրծ. Գ. Ղարաջեանի                                   | 50 կ.   |
| 15. Արիւնի տետարանը, թարգմ. Տ. Զաւէնի                                      | 25 կ.   |
| 16. Դժգոյթութեան օրինակներ, հալոյ դպրոցներ համար, կազմեց Գ. Լեոնեան        | 20 կ.   |
| Բ մաս                                                                      | 20 կ.   |
| Գ մաս                                                                      | 35 կ.   |
| 19. Դատաւիրք ընդհանուր աշխարհադրութեան (քա զարական մաս) կազմեց Լ. Բարադեան | 65 կ.   |
| 20. Начальная книжка для армян. школы С. М.                                | 35 в.   |
| 21 Կառապան Հենշէլի գերմ. բնագ. թ. Լ. Բարադեան                              | 50 կ.   |

Դումարով գնողներին զիջւածով Դրախտութիւն վերադիր վճարով ուղարկուած է միմիայն նրանց, որոնք ուղարկում են կանխավճար: Դիմել.—Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенбергъ“ Г. И. Галустану.



ՀՀ Ազգային գրադարան



NL0171734



